


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԵՆՍԱԿԱՆ
 Ա. ՏԱՐԻ ★ ՅՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 1899 ★ ԹԻՒ 9-10

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եմէ հոգին չՅարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ



ԻՒՍԿԻՏԱՐԻ ԿՆՁՆԻՆ

Պ. Արամ Թաճաճեան, նախկին աշուկերտ Կ. Պոլսոյ Ազգային Կեդրոնական վարժարանին, ճարտարապետ՝ Բարիկի Գեղարուեստից վարժարանէն, յղալով է 1900ի Յուլիանոսեան համար շատ ինքնատիկ ու գեղեցիկ ծրագիր մը, ուր իր արեւելցիի բնուէր ու ճոխ երեւակայութեանը կը միանայ նուրբ ու ճարտար արուեստի մը հնարագիտութիւնը: Այս ծրագիրը անտարակուսելի կերպով կոչուած է Յուլիանոսեան ամենէն փառանքալից յաջողութիւններէն մէկն ըլլալու, եթէ գտնուին գրամատերներ որոնք գնահատեն և իրագործեն զայն: Դրամատերները քանակէ առաջ, Պ. Թաճաճեան արդէն իսկ բաղղը ունեցած է Բարիկեան փննդատութեան կողմէ իր ծրագիրը գովեստներով քննադատուած տեսնելու. ծանօթ գեղարուեստական քննադատը Պ. Յրանց ժուռտէն, «Լ'Արշիվէթիւս» շաբաթաթերթին մէջ, այդ ծրագրին կը նուիրէ ամբողջ յօդուած մը՝ որմէ կը քաղենք հետեւեալ հատուածը.

«Պ. Արամ Թաճաճեան գաղափարն ունեցած է Շան-տը-Մատսին մօտերը հսկայ ծառ մը կառուցանել, զոր կ'անուանէ «Իսկիւտարի Կնձնին»... այս անտառական յիշատակարանը յիսուն մեզը բարձրութիւն պիտի ունենայ և հինգ յարկի պիտի բաժնուի: Ներքնայարկը (Sous-sol) պիտի յասկացուի սպասարկու-

ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՐԱՅՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏՄՐԻ

ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ 1899

ԹԻԻ 9—10

Ա Մ Ր Ո Ւ Ր

Ամբոխը կը սարսափեցնէ զիս, կը նեղէ զիս, կ'ընկճէ զիս ու կը խոռովէ զիս :

Բնութեան մեծ տարրերուն պէս՝ խորունկ, հզօր ու կոյր է ան :

Անոր շարժումները սաստիկ են ինչպէս ծովուն տասանումները, անոր կրքերը մորիկին ցատումներուն կը նմանին, եւ անոր ծոցը կործանումը կը բնակի :

Անգիտակից է ան, ու կը խլըրտայ հովին համեմատ որ զայն կը ցնցէ : Ու հովին համեմատ, անոր դէմքը, ինքնին անանձնական ու անգոյն, արտայայտութիւն ու իմաստ կը ստանայ : Երբ գեղեցկութեան հորիզոնէ մը հասնի շունչը՝ կեանքով բեռնաւոր, եւ անոր մկանունքներուն մէջ ու մինչեւ ընդերքներուն խորը թափանցէ, Ամբոխը նուիրական վրդովմունքը կ'ունենայ լանջքի մը որ սիրով կ'եղեւէջէ, անոր կոհակները կ'ուռենան ինչպէս որովայնը որ պիտի ծննդաբերէ, եւ անոր ալիքփանքը ստեղծագործութեան երգեր կը հնչեցնէ :

Սակայն թանձր է ան ու յամառ . երկայն գիկզակներէ, դժնդակ ճիգերէ ետքը միայն՝ Գաղափարը կրնայ զայն ճեղքել, անոր մէջ միտուիլ ու տարածուիլ . եւ նոյն իսկ երբ անոր տիրէ եւ անոր հետ խառնուի, Գաղափարը իր սկզբնական մաքրութիւնը կը կորսնցնէ, իփոխարէն այն բազմապատկումին ու տեւակա-

նացումին զոր կը շահի Ամբոխին մէջ ծաւալանալով :

Ու յաճախ անառիկ, անթափանց, աննուաճելի է Ամբոխը . եւ այն ատեն Չարի զօրութիւն մը կը դառնայ : Թաքուն խորութիւններէն ելած գէշ հովեր, նենգաւոր ու վատ սողոսկումներով, կը պղտորեն ու կը տրորեն զայն . անոր ալիքը վարերէն բարձրացած տիղմերով կը մթագնի, ստորին մղումներէն կը ցատկոտի, ու Մահուան երես մը կ'ըլլայ, լորձունքոտ բերաններով, որ Գաղափարին դէմ կը թքեն ու կը պոռան :

Ատով, խոկման մարդուն, զուտ գաղափարի եւ զուտ գեղեցկութեան նուիրուած մարդուն համար, թշնամի տարրն է Ամբոխը որուն բիրտ ու վտանգաւոր հպումը կը պըզծէ ու կ'աւերէ զինքը ինչպէս խոցոտ շըրթունքի համբոյր մը, — մինչդեռ գործունէութեան մարդուն համար, սքանչելագործ ու թանկագին ուժն է ան որուն միջոցովը կը կատարուին մարդկային մեքենավարութեան բոլոր կերպարանափոխութիւնները :

* *

Ինձի տրուեցաւ Ամբոխը ճանչնալ իր բազմազան դիմագծութիւններովը, ու չեմ գիտեր էակ մը աւելի առաձգական, աւելի անորակ կելի, աւելի յեղյեղուկ, այնքան պարզ իր խկութեամբը որքան կ'նճոտ իր արտայայտութիւններով, այնքան առերեւոյթս հակասական որքան ներքնապէս անփոփոխ ու համաման, եւ՝ ըլլայ չարագործ կամ կենսաբեր, գոհիկ կամ հերոսական՝ մի՛շտ հզօր, միշտ մեծ, միշտ ահազդեցիկ :

Կը ճանչնամ Բարիզեան Ամբոխը . տեսեր եմ զայն իր ցնծութեան ու զայրոյթի , կատակի եւ խանդավառութեան վայրկեաններուն . ոստոստուն , յիմար , սիրուն ամբոխն է ան , որ գիտէ միշտ թեթեւ , գրեթէ թեւաւոր երեւնալ՝ հակառակ որ ամբոխ մըն է , այսինքն թանձրութիւնն իսկ , եւ որուն բոլոր ալեկոծումները պարի շարժումներ կ'առնեն , որուն յեղափոխութիւններն անգամ զիւցաղներգական դիմակահանդէսի ձեւն ունեցած են : Բարիկենդանի օրերուն , այդ բարակ ու դիւրաթեք զանգուածը , ֆոնֆեքթիներուն երփներանգ անձրեւին տակ , զաւելաւական թափօրներուն շուրջը , խնդացող ջուրերու պէս է որ կը վազեն , կը ցատքբախն ու կը ցոլան . բարկութեան կամ խանդի պահերուն , ջուրերը կը մթննան , կը տենդոտին , կը մըռնէն , բայց այդ մոնչիւնը վիթխարի քահաճի մը կը նմանինորէն , եւ եթէ արիւն իսկ ցատքէր այդ խենթեցած կոհակներուն բալխումէն , արիւնը գինիի տեսք մը պիտի տննար որ կը վառի ու կ'երգէ : Ու ատիկա միշտ կը շարժի , միշտ կը պղպղակէ , միշտ գոյն կը փոխէ , ծովու մը պէս որ կարծես միմիայն փրփուրէ շինուած է :

Տեսեր եմ Յաւին ամբոխը , ախտավարակ , ուղորմելի , միատեքական ամբոխը մեր Արմաշի ուխտաւորներուն : Կը յիշեմ հին առեւելի իրիկունը , ուր զեղջուկ եկեղեցիին խոնարհ կամարներուն տակ , կ'ընդ , տխմար ու անշարժ աչքերով երկայն վտիտ Տիրամօրը պատկերին առջեւ , տեսայ ողբակոծ երկրպագութիւնը ցաւագարներուն , զժբաղձներուն , յուսահատներուն , որոնք իրենց զազիր ու քոսմնելի տառապանքին մէջ գետնատարած՝ կեա'նք կը հայցէին : Գիշերային եղերերգութիւններուն լալկան միօրինակութեանը մէջէն՝ զոր գիւղացի աղջիկներու միամիտ ու գողտր ձայները կ'երկնցնէին տաճարին գոթէթնի վեր , դիւահարներու բարձրադաղակ զատանցանքը , խենթերու քրքիջը , հաշմերու պաղատանքը , հիւանդներու լացը , ու բոլոր անձկութիւններն ու շարժարանքները մատնուած ու դաւաճանուած գոյութիւններուն՝ կը պոռթկային , կը կուտակուէին , կը զալարուէին , խոշոր ծիծաղելի պատկերին առջեւ որ իր անշարժ անկենդան աչուրներովը կը դիտէր անխօսուկ . ճըրագներուն դողացող ու զալկահար լոյսին

մէջ , վէրքերով ծածկուած մարմիններ կը սողային , աւրչակուած դէմքեր կը ծամածռուէին , կմախային բազուկներ կը պրկուէին , աղաչաւոր եղունգներէ բղքտուած կուրծքեր կ'արիւնէին , կատաղի աչուրներ կը բոցոտէին , եւ այդ ամբողջը կ'ոռնար , կը մլաւէր , կուլար , ու կը սպասէր Աներեւոյթին , Անկարելիին , Հրաշքին :

Օր մըն ալ Յոյսին ամբոխը տեսայ , Հայ ամբոխը ԳՏԻ տենդագին ու սրտածմլիկ օրերուն : Պապ-Ալիի ցոյցէն յետոյ , զրոյց եւլած էր թէ Սուլթանը որոշած էր վերջապէս Հայաստանի բարենորոգմանց ծրագիրը ստորագրել , եւ հազարաւոր Հայեր , ուրախութենէ խելայել , Նախքուէի դաշտին մէջ զացին՝ Սահմանադրութեան տարեդարձը տօնելու պատրուակով՝ նաւակատիքը հանդիսաւորել ազգային ազատագրութեան , զոր արդէն կատարուած կ'երեւակայէին . . . Ա' իս , խե' դճ միամիտ ամբոխը . ամենամեծ մասամբ Հայաստանցիներ էին . իրենց խանրուն գարշահոտ ու չուտական մթութենէն դուրս ելած , իրենց առախյիին ու ապաին նաչխուն հայկականութեամբը խրոխտօրէն համազգեստուած , կուգային դարաւոր տառապանքին տակ ձգմուած իրենց սիրտը զովացրնել՝ պոռթկացող , մոլեգին , յիմարական հրճուանքի մը մէջ : Տեղ տեղ , կը խոնուէին կը կուտակուէին յանպատրաստից ամպիոններու շուրջը՝ որոնց վրայէն կրակոտ ու սրտաշարժ երիտասարդներ մանկական պուտտախօսութիւններ կը թոցնէին , աչուրին սպառնալից , ու մատերնին ցցուած դէպ ի հորիզոնը . — Ապագա'ն , Ազատութի'ւնը , — եւ երկկտրական բառերուն մոգութենէն բռնուած , ամբոխը կը խժար , կը հեւար , կ'աղաղակէր , կուլար . . . Ու մինչեւ իրիկուն Նախքուէի դաշտը լեռնական պարերուն տակ թնդաց , ազատ երգերուն ժայթքումին մէջ բոցավառեցաւ . ու ոչ մէկը նշմարեց այդ ուրախութեան ոստոստումին ներքեւ , Աղէտքը որ մութին մէջ դարանած կը սողոսկէր , ու ոչ մէկը կրցաւ գուշակել թէ այդ խոշոր աղւոր տօնը պիտի ունենար ամենէն ահաւոր վաղորդայնը արիւնի եւ սուգի . . .

Ուրիշ օր մը , տեսայ ամբոխը Զարհուրանքին : ԳՏԻ աշնան այն ցորեկն էր ուր յան

կարծ լուր ելաւ թէ անդլիական նաւատորմի զը Մարմարա մտեր էր մէկ վայրկեանի մէջ , սարսափը թռաւ անցաւ մեղկ ու վախկոտ քաղաքին մէկ ծայրէն միւսը . հակասական , բազմաձեւ , յարածուն , ծաւալական , համայնապարփակ սարսափ մը , որ փոռեցաւ օդին մէջ , թափանցեց ամէն ծակուծուկ , բոլոր դէմքերը դեղնեցուց , ու այնպէս ըրաւ որ ամենքը իրարմէ ահաբեկեցան , ու ամէն մարդ ինքիրմէ սոսկաց . անորոշ , խորհրդաւոր , անբացատրելի վախն էր Փորձանքին որ վերահաս է , որ վայրկեանէ վայրկեան պիտի խուժէ . եւ ամէն մարդ փախչիլ սկսաւ , առանց գիտնալու որմէ՞ կը փախչէր , ինչո՞ւ , եւ ո՞ւր : Քրիստոնեաները կը փախչէին , կարծելով թէ Տաճիկները վերջին յուսահատ կատաղութեամբ մը պիտի ջարդեն ղիրենք՝ եւրոպական գորութեան ժամանումէն առաջ . Տաճիկները կը փախչէին , կարծելով թէ Անգլիացին արդէն ներսն է եւ կուգայ ղիրենք կոտորել : Խանութները հապճեպով կը գոցուէին , տնեղոտ շոխոյի մը մէջ . խելագար բազմութիւններ կը վազէին փողոցներուն մէջէն : Գուժաբեր աղաղակ մը , չես գիտեր ուսկից ելած , — Եկա՛ն , եկա՛ն , — կը բազմապատկուէր , կը տարտղէր , կը դառնար ու կը սուրար օդին մէջ , փախչող խումբերուն վրայն , ինչպէս պտուտքող մահակառայ տարմ մը ազաւաներու՝ հովէն ալեկոծուած դերեղմաննոցի ծառերու վերեւ : Տժգոյն , անձայն , չարագուշակ , փախչողները կը շարունակէին իրենց խեյակորոյս շփոթած վազքը , վախնալով ետեւնին դառնալու , վախնալով ղիրմացնին նայելու , կարծելով թէ ամէն կողմէ պաշարուած են վտանգով , եւ այս բոլորը՝ առանց որ մէկը զէնք մը տեսած , արիւն նշմարած , բաղխում մը նկատած ըլլար , ամենքը պարզապէս բոնուած վախին վախովը , — ամբոխը վատ , ապուշ ու եղերական :

Բայց ամբոխ մը որ մտքին մէջ ձգած է ամենէն մղձաւանջային , ամենէն հալածողական յիշատակը , տեսակ մը խուճապ է եռուզեռուն ճիւղալային մարդկութեան՝ որ ինծի ցորեկ մը յայտնուեցաւ , ԳՉին , Տոլմապահչէի մզկիթը շրջապատող հրապարակին մէջ , Բաւազանի նախորդ օրը :

Կառավարութեան կողմէ այդ օրը աղքատներուն ուսեստի թղթեր կը բաժնեն : Մահ

մետական խաժուժուժն էր , — մուրացկաններ , դատարկապորտներ , աւազակներ , հաշմանդամներ , խելագարներ , — որ քաղաքին բոլոր մռայլ խորշերէն ու փապարներէն դուրս թուփած եկած կուտակուած էր փողերանոցին առջեւ , կայսերական շնորհը ընդունելու : Ահաւոր , կասաղի ու նողկալի տեսարան մըն էր : Մեծ , պղտոր , ծփանուտ ծով մը գլուխներու , ուր կնկան թիւլպէնաներու աղտոտ ձերմակու թիւնը կը թունաւորուէր փաթթոցի կանանչութիւններով , կ'արիւնոտէր ֆէսի կարմրութիւններով , կը մթննար մազոտ խոշոր գտակներու թանձրութեամբը : Գլուխները , իրարու փակած , իրարու մէջ մտած խառնուած , անընդհատական շարժումով մը կ'երերտկային , կը պղպշակէին՝ նեղ աւազանի մէջ բանտուած փրփրազին ջուրերու պէս : Եւ այդ բոլոր յորձանքը զէպ ի փողերանոցին դուռը կը խուժէր , որուն բարձրադիր գոնառաջքին վրայ կը նշմարուէր բաշխողը : Ոստիկանի ձեռքեր կը տեսնուէին տեղ տեղ , ամբոխը զըսպելու ջանացող գաւազանի հարուածներով . բայց գաւազան ու ռասիկան կը խեղդուէին մարդկային մսի մատէսթրոմին մէջ որ կ'աճէր , կը թանձրանար , կը շեղջակուտուէր : Վանդակապատին մօտ , պզտիկ խմբակներ կային , գեախնը ծալապատիկ նստած կամ ոտքի վրայ , — ծոյլերը , անճարակները , եւ հաշմերը , — որոնք չէին ուզած հրմշտուքին մէջ արկաւ ծուխլ եւ կը սպասէին հեղեղին ցամքելուն՝ որպէս զի իրենց կարգը գար : Մօտէն , որոշ կը տեսնէի ղիրենք , եւ ատոնք ինծի կը ցուցնէին միութիւնները որոնցմով այդ ամբողջ զանգուածը կազմուած էր . կային հոտ թաթարներ , քիւրտեր , տաճիկներ , լազեր , չէրքէզներ , նոյն իսկ գնչուներ եւ հրէաներ , եւ զեռ անանուանելի ցեղէ ու տեսակէ մարդիկ , բոլոր նմուշները ոչ-քրիստոնեայ բազմազան ցեղերուն , ջոկերուն ու վոհմակներուն որ «սամանեան կայսրութիւն» անուանուած անճոռնի խառնակոյտը կը ձեւացնեն : Այլանդակ տիպարներ , յիւրզակի գլուխներով , մացառուտ դարհուրե լի մօրուքներով , գիշակերի բերաններով , ոճիւրի աշուրներով , հաստ մազոտ ցնցոտիներու մէջ , ձեռքերնին՝ խոշոր ցուպեր : Մաշկացած սեւցած միտով անասնանրման կիներ , կիսամերկ , լաչակնուն մէջէն սահեցնելով դժնեայ ու նենգ նայուածքներ , շալակնին կրելով իրենց վիժուկները՝ պարկի մէջ կախուած : Ու խեղանդամները ,

անհեթեթ երեւոյթներ՝ դէշ երազէ մը փախած կարծես, իրաններ առանց թեւի, աչքեր հալած բիբերով, դէմքեր որոնց քթին սեղ խոռոչ մը բացուի, մարմիններ ծակերով փոսացած, պալարներով ուսեցւորած, ախտերով ծումկուած, ու գէմքեր խոժոռ, սեւեռուն ու մոլեգին՝ այսաչարչար նայուածքներով. ու այդ ամենուն վրայ, թանձրակուտակ մորեւանդութեան կատաղութիւն մը՝ անօթութիւնէն մարակուած: Անդին, զանգուածը կը գալարուէր, կ'ունար, կը վժար: Յանկարծ ճիչեր լսուեցան. մէկ քանի պըզտիկ տղաք ճգմուեր էին խուժանին մէջ, ու կիներ կոխոտուեր: Վայնասուն մը փրթաւ, զոր խուպոտ աղաղակները խեղդեցին, թաղեցին, լափեցին խկոյն: Եւ ձգեցի պացի, առանց ետիս նայիլ համարձակելու, մինչեւ կուկորդս զզուանքով ու սարսափով թխմուած:

Ամէն անգամ որ այդ արհաւիրքի պատկերը մտքիս մէջ վերակենդանանայ, գաղափարներու սարսոեցնող զուգորդութեամբ մը, Պոլսոյ ջարդին յիշատակը կը կանգնի աչքիս... Այդ Տոլմապահչէի հրէշներն էին որ, հրամանովը Երլարգի Ուրուականին, իրենց որջերէն ու անձաւներէն զուրս ցատքեցին ու բիբերով, մահակներով, դանակներով զինուած, մեր անգէն ու յանկարծակիի եկած եղբայրներուն վրայ թափեցան... Եւ նոյն գաղափարին տըրամբանական շարունակութեամբը, միաքսնոյն հետայն աւելի հեռուն կ'երթայ, կը հասնի մինչեւ մութ ու ցաւազին տարածութիւնները Հայ Հողին, ու կը տեսնեմ հոն՝ ծայրէ ծայր՝ աղջամղջին խուժանի մը խոյանալն ու մոլեգնիլը հրդեհի եւ արիւնհեղութեան միացող կարմրութեանցը մէջէն: Ոճիրին ամբոխն է... քանզումին ցանկութեամբը վառուած, կը յարձակի ծուղակը ձգուած խաղաղ, անպատրաստ, շուարած ժողովրդի մը վրայ, ու կը կոխկոտէ, կը բզբէ, կը ջախջախէ դայն... Ու նոյն ճիւղներն են, իրենց մահու թաթերովը, իրենց դեւի աչքերովը, իրենց գազանի բերաններովը. լերան աւազակներուն միացած ու քաղաքի ոստիկաններուն, կը հրոսեն մեր բաբի, մեր ալեւոր, մեր սիրուն գիւղերուն վրայ՝ ուր Հայրենիքին հինաւուրց ըս-

տուերը, յոյսերով լեցուն, կ' ծածանէր դեռ ու կ'երգէր: Սեւ թաթերը, դաշոյններով եղունգուած, ճերմակ մագերով գլուխներու, մատաղ ու վարդ դէմքերու վրայ կ'ելեւեջին. եւ արիւնակաթ բերանները, խաւարով լեցուն, զողզղացող ճերմակ կուսութիւններու վրայ կը կը ծռին ու կը ծանրանան...

Ասիկա անհնարին, անըմբռնելի, անընդունելի պատկերն է: Ու մարդ ձեռքերը աչուրներուն կը փակցնէ որպէսզի վայրկեան մը ոչինչ տեսնէ, որպէսզի մտածումը կասեցնէ վայրկեան մը...

Սակայն եւ կայ ամբոխ մը որ Ամբոխին գերագոյն ազնուացումն է, — ամբոխը վրիժառու, ազատատենչ Մաքառումին: Հոյակապ, օգոստափառ, հսկայական տեսիլն է ան, որ ամէն տեսիլ կը գերազանցէ: Հաւաքական գիտակցութիւնն է որ կ'արթննայ եւ, խորխոռու վեհ, Անձնագոհութեան զրահին մէջ կը փաթթուի, Արդարութեան վահանը թեւը կ'անցընէ, կը սաղաւարտուի սուրբ Բարկութիւններուն պողպատովը, ու կը ցցուի Բոնութեան դէմ որ Չարին դիմակն է, որ Մահուան պատուանդանն է, որպէսզի պատուէ այդ զիմակը, որպէսզի կործանէ այդ պատուանդանը, եւ որպէսզի կեանքը վերահաստատէ, որպէսզի ապուշ ու տձեւ Բիրտ-Ուժը ստորադասէ Գաղափարին ներդաշնակ արիւթատութեանը, — նուիրական ու մեծաշուք ամբոխը Գուպաներուն, Կրեւտներուն, Զէյթուններուն:

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



Ք Ա Մ Ա Ր

Չ Բ Ո Յ Ց

— 0 —

Մուկեաիկ մը խըռպոտ կը պոռայ
Գիշեր ատեն , լոռեթեան պահուն .
Վա՛հ աւա՛ղ գեղեցի՛կ Թամարայ .
«Պիտի մեռնի՛ս , Թամար խաթուն :»

Վա՛յ մեզ ի՞նչ ձայն է այդ ի՞նչ սեւ բօթ .
Ով որ լըսեց՝ սասանեցաւ :
Եւ փըլաւ ամենայն սիրտ զըթոտ ,
Եւ ամենայն տուն մըտաւ ցաւ :

Ի՞նչ ըսիր , բո՛ւ թարեր , նըզո՛վք քեզ ,
Ի՞նչ կը պոռաս գիշերն ի բուն ,
Ման կուզաս քամուն դէմ , կը ձայնես—
«Պիտի մեռնի՛ս՝ Թամար խաթուն :»

Ա՛խ , լըսեց զայն , լըսեց Թամարը ,
Եւ արձակեց սուր աղաղակ .
Հընչեց խոր մութ բանտին կամարը —
Բամին կ'ողբայ կըտուրի տակ :

«Անմե՛ղ եմ , անմե՛ղ եմ , տէ՛ր իմ բէգ .
Աստու .՛ճ վըկայ՝ անմեղ եմ ես :»
Ամենայն ոք կ'ըլլայ սըրտաբեկ
Երբ կը լըսէ այդ խօսքը հեզ :

Բայց նըստած բէգը չար՝ աղընկոր ,
Ձեռքը դեղին մեծ համարիչ ,
Կը նայի երկրապիչ եւ խոժոռ .
Կ'արհամարհէ ան ողբ ու ճիչ :

Տըլաւ խիստ եւ անդարձ հըրաման .
Թող հըրազատ ըլլայ Թամար
Որ պագաւ քընքչութեամբ մանկական
Իր կաթնեղբոր աչերը վառ :

Կուրծքը խոց մը ճեղքեց պատանուոյն—
Ո՛հ , ի՛նչ ձայն էր—ձայնն անոր մօր .
Կուրծքը խոց մը ճեղքեց պատանուոյն ,
Ոսնչէրը սուր խոց բացաւ խոր :

Ա՛խ , Թամա՛ր , դեռ մանուկ ես անմեղ ,
Ի՛նչպէս լացիդ չողորմեցաւ .
Ոսք ու ձեռք պագիբ , ա՛խ , ի՛ գուր տեղ ,
Բէգը ցատքեց ու կատղեցաւ :

Գեղացւոց պոռաց ան . «Հո՛ս եկէք ,
Շնութիւն ըրաւ կինըս Թամար :
Մի՛ գըթաք՝ քար առէք ու զարկէք :»
Բայց ո՛չ , չեղան կամակատար :

Խե՛ղճ Թամար , ամրոցին մէջ լացաւ՝
Ոսկի մագերը թափթըփած .
Եւ մինչեւ որ երկինք լուսացաւ
Աղօթեց ան՝ թըչերը թաց :

Մինչեւ լոյս անընդհատ լալագին
Աստուածամօր պաղատեցաւ .
Երբ եկան դահիճներն ու տարին ,
Իր հաւատքէն չըխախտեցաւ :

Դուրսը մեծ փայտակոյտ մը կանդնած
Ահա պատրաստ է , կը սպառնայ :
Խուռն ամբոխ մը կուզայ , աչքը լաց ,
Ողբալով մահը Թամարայ :

Եւ անա գեղեցիկ Թամարը
Կը յառաջէ հըլու ու հեզ ,
Վեր կ'ելլէ՝ խարոյկին կատարը ,
Կ'ըսէ միայն՝ «Անմեղ եմ ես :»

Կը հեծեն մարդիկ , ա՛լ յոյս չըկայ ,
Բէգը խուլ է , քար է դարձած :
Կը շողայ անողորմ հուրն անա ,
Կը բարձրանայ կամաց կամաց :

Կը վայէ կըրծաբախ կանանին .
Մարդիկ իրենց սըրտին խորէն
Իրւր անէծք կը կարդան իշխանին , —
Բէ՛գ անօրէն , բէ՛գ անօրէն :

Բայց յանկարծ, ո՛վ հըրաչք , կարմրեբանդ
Բոցերը վարդ դարձան բոլոր ,
Եւ դարձան Թամարայ զարդարանք՝
Թափթըփելով ոլոր մոլոր :

Ձայն գոռաց միաձայն ցընձութեան ,
Մինչեւ երկինք ելաւ հասաւ .
Դահիճ , բէգ , Թամարայ ոտքն ինկան—
Ոչ ոք նըման օր մը տեսաւ :

Կոչնակները ժամուն հընչեցին
Օրհներգութեամբ երկնահաճոյ :
Թէ տեսան անարատ ըզգաստ կին ,
Մերերն ըսին՝ «Փա՛ռք Աստուծոյ» :



ՋՐԸՈՐԸ

ԶՐՈՅՑ

Դէպ ի ջրհոր կ'երթայ Աննիկ :
 Կարօ , նրստած մօրը մօտիկ ,
 Կը տըրտընջայ հիւանդագին :
 Ափսո՛ս , հիւանդ է հողին :
 Լուսամբտէն դուրս կը նայի .
 Ահա Աննիկ՝ զանի տեսաւ ,
 Սիրտը ճըմլեց սաստիկ մէկ ցաւ :
 Թըռաւ կըռինչ մը ձայն :

Մօրկանն ըսաւ՝ մայրի՛կ , մայրի՛կ ,
 Ա՛խ , տե՛ս , աղջիկ մը գեղեցիկ
 Մահուանս պատճառ պիտի ըլլայ :
 Բայց Աննիկ շուտ շուտ կ'երթայ
 Դէպ ի ջրհոր՝ զոյգ մը գոյլով :
 Լուսամբտին աչք չ'արձակեր ,
 Ունի թեթեւ բոպիկ ոտքեր ,
 Շուտ շուտ կ'երթայ երգելով :

Ու կայնեցաւ ջրհորին մօտ ,
 Դոյլը կախեց իջեցուց հող :
 Բայց ա՛խ թըշերը դեղընցան ,
 Կարծես խորէն մըթութեան
 Անծանօթ ձայն մը բարձրացաւ :
 Կը նըմանէր ձայնը նըւազ
 Խոր թառաչի մը խիստ դանդաղ .
 Աննիկ պոռաց ու լացաւ :

Ի՞նչ էր այդ ձայնը ջրհորին :
 Այդտեղ , գըբին տակը խորին ,
 Եղաւ տըղայ մը խեղդամահ :
 Աննիկի սիրտն ինկաւ ահ :
 Այդ խեղճ տըղան իր սիրուհւոյն
 Ոտքերն ինկած լացաւ ի գուր ,
 Երկար լացաւ յուսակըտուր ,
 Ապա եղաւ ջըրամոյն :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



ՊԱՏՃԱՌԻՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շար . (*)

Հիմա որ տեսանք թէ ի՛նչպէս կազմո՛ւած է մեր ջրային գրութիւնը , թէ ի՛նչ է անոր խկա- կան նշանակութիւնը բաղդատմամբ անդամա- բանութեան , քննենք թէ ի՛նչպէս կը գործէ : Մեր պաշտպանած դատին նկատմամբ այս ամենակարեւոր կէտը աղէկ մը ըմբռնելու համար , պէտք է քննել թէ ի՞նչպէս կը գործէ ջրային գրութիւնը իր ամենապարզ ձևին տակ , այն է՝ նախանիւթին զգայութիւնը : Ոչինչ կրնայ մեզ արգիլել այս մերձեցումն ը- նելէ , քանի որ տեսանք թէ իմացականու- թեան եւ նախանիւթի տյո՞ յատկութեան մի- ջեւ հիմնական որ եւ է սարբերութիւն մը գոյութիւն չունի ընաւ : Ահա ավիպ մը . որս մը կը մօտենայ իրեն . իսկոյն ստոտք մը կ'ար- ձակէ իր կողէն եւ դայն կ'իւրացնէ ընդհա- կառակն , ջերմութեան կամ ուրիշ որ եւ է ա- նախորժ տպաւորութեան մը ազդեցութեան ներքեւ , իսկոյն կը հեռանայ խոյս կուտայ : Վերլուծենք այս գործողութիւնը , մօտէն քննելով զայն : Արտաքին տպաւորութիւն մը կ'ուզայ ազդել զգայուն նախանիւթին վրայ . նախանիւթը կը զգայ զայն , եւ անմիջապէս համապատասխան շարժում մը կ'ընէ , իբրեւ պատասխան իր կրած ցնցումին : Գիտենք թէ ընական ուժերը որոնք կ'ազդեն մեր վրայ , զգնազան ուղղութեամբ , զանազան ձևերով , զանազան ուժգնութեամբ եւ արագութեամբ շարժումներու կը վերածուին , ինչպէս լոյսը , ջերմութիւնը , Ելեքտրականութիւնը , եւն , որ կրնան իրարու փոխարկուիլ : Այդ վերոյիշեալ տպաւորութիւնը ուրեմն , որոշեալ ուղղութեամբ մը կը ցնցէ նախանիւ- թին մասնիկները , ցնցում՝ որ նախանիւթին գոյացութեան (substance) մէջ կը կերպա- րանափոխուի ուրիշ ուղղութեամբ շարժումի մը , որ յառաջ կը քերէ ստոտքի արձակումը մեր մասնաւոր պարագային մէջ : Այս է ահա , ինչպէս պիտի տեսնենք , մեզ հետաքրքրող խնդրոյն լուծման բանալին , այս է այն փըր- կարար թելը զոր պէտք չէ երբեք ձեռքէ հա- նենք՝ այդ բաւիղէն դուրս ելլել կարենալու համար : Նախնական կենդանիներու մէջ դիւ- րութեամբ կը տեսնենք թէ , առանց արտա- քին կամ ներքին (սնանելու պէտք , եւն) տպաւորութեան մը ազդեցութեան՝ որ եւ է շարժում գոյութիւն չունի : Ուստի եւ այն տիեզերական օրէնքը թէ՛ առանց պատճառի արգիւնք չկայ , բացարձակապէս կը պատշա- ճի այդ նախանիւթին գործունէութեանը . հե-

(*)Տես Անանիոս, քիւ 8 .

տեւարար յառաջագունէ կրնանք բսել թէ, ըստ որում որ եւ է իսկական տարբերութիւն մը գոյութիւն չունի մարդկային իմացականութեան եւ նախանիւթին զգայութեան միջեւ, առաջնոյն գործունէութիւնը կը հպատակի այն տիեզերական օրէնքին նոյնքան՝ որքան նախանիւթին զգայութիւնը :

Առնենք կենդանարանական սանգուղին աւելի բարձր մէկ աստիճանին վրայ դասուած կենդանի մը , օրինակի համար մեղուն կամ ճանճը : Անոր շարժումներուն , անոր արարքներուն պատճառները նախ եւ առաջ ինքնաշարժ կը թուին , բայց եթէ մօտէն քննենք զանոնք , կը տեսնենք թէ այս պատճառները գոյութիւն ունին սակայն : Ինչո՞ւ այս տարբերութիւնը : Որովհետեւ այս կենդանիին արարքները շատ աւելի բազմաթիւ են եւ այդ արարքներու պատճառները , շատ աւելի բազմաթիւ , յառաջ կը բերեն , ոչ միայն անմիջական , այլ եւ հեռաւոր արդիւնքներ , որոնք ուշագիշտ զննումէ մը առաջ ինքնաշարժ եւ պատճառէ զուրկ կը թուին : Հետեւաբար այդ կենդանիներու արարքները կարող ենք վերածել վերոյիշեալ լուծումին , միայն սատարբերութեամբ որ արտաքին կամ ներքին տարբերութիւնները շատ աւելի բազմատեսակ , բազմաթիւ ըլլալով , իրենց արդիւնքներն ալ նմանապէս շատ աւելի բազմատեսակ եւ բազմաթիւ են : Եւ որքան բարձրանանք կենդանարանական սանգուղին վրայ՝ մինչեւ մարդը , այնքան աւելի արարքներու պատճառները կը կնճոտուին ջրային դրութեան կատարելագործման զուգահեռական կերպով , եւ անհեռատես աչքի մը համար արարքները ինքնաշարժ եւ անպատճառաւորութեամբ կը թուին :

Մեր այս խոզարկութիւնը անվերջանալի մանրամասնութիւններով չձանրացնելու համար , անցնինք անմիջապէս մարդկային ուղեղին ուսումնասիրութեանը , եւ տեսնենք թէ ինչպէս մեր ամէն արարքները , մեր ամէն գաղափարները , երբ մօտէն քննենք , վերջ ի վերջոյ կը վերածուին այդ ամենապարզ բանաձեւին զոր պատկերացուցինք վերեւ : Տեսանք թէ կենդանարանական սանգուղին ամենէն ստորին աստիճաններուն վրայ դասուած կենդանիները չեն կրնար ո եւ է շարժում մը ընել առանց արտաքին աշխարհի տպաւորութեան մը ազդեցութեան կամ ներքին սնուցման եւ կամ սեռական պահպանման անհրաժեշտ պաշտօնավարութեանց ներքին թելադրութիւններուն :

Արդ , եթէ յանկարծական փոխանցութեամբ մը մարդկային սեռին անցնինք , կը տեսնենք այնպիսի արարքներ՝ որոնք բոլորովին անկարելի են այդ երկու շօշափելի շարժառիթներէն :

Արգարեւ , մարդկային արարքները կը պատճառաւորուին շատ մը կարգի շարժառիթներէ .

Ա . — Արտաքին ֆիզիքական աշխարհի տարբերութիւնները .

Բ . — Ներքին ֆիզիքական աշխարհին՝ այն է մեր յօրինուածութիւնը կազմող գործարաններու , յառաջ բերած տպաւորութիւնները :

Գ . — Արտաքին բարոյական աշխարհի տարբերութիւնները :

Դ . — Ներքին բարոյական աշխարհին՝ այն է մեր մտաւորական ու բարոյական կարողութիւններու՝ գործունէութեան արդիւնք եղող տպաւորութիւնները :

Այս չորս կարգի տպաւորութիւններէն իւրաքանչիւրը կրնայ ծնունդ տալ երկու տեսակ արարքներու . առաջին՝ անմիջական արարքներ , երկրորդ՝ հեռաւոր արարքներ : Քանի մը օրինակներ տանք այս երկու տարբեր կարգի արարքներուն : Մէկը կուգայ դրան զարնել . այս արտաքին ֆիզիքական տպաւորութեան իբրեւ անմիջական հետեւանք՝ աղախինը կ'երթայ դուռը կը բանայ :

Ընկերութեան մը մէջ մէկը մեզ կը նախատէ . արտաքին բարոյական աշխարհի այդ տարբերութեան իբրեւ անմիջական եւ ուղղակի հետեւանք՝ կ'ապտակենք զայն :

Անօթի ենք . կ'երթանք ճաշարան եւ մեր ներքին ֆիզիքական աշխարհի այդ բնախօսական տպաւորութեան իբրեւ անմիջական հետեւանք՝ մեր ստամոքսը կը գոհացնենք :

Բնազդները , ժառանգական յատկութիւնները կրնան՝ առանց արտաքին աշխարհի տարբերութեան միջամտութեանը , պատճառ դառնալ ուղղակի անմիջական արարքներու :

Ինչպէս տեսանք քիչ առաջ , այդ չորս կարգի տպաւորութիւնները կրնան յառաջ բերել նոյնպէս հեռաւոր արարքներ իբրեւ արդիւնք : Մէկը մեզ նախատած է . փոխանակ անմիջապէս պատասխանելու այդ նախատինքին , աւելի կամ նուազ հեռաւոր ապագայի մը մէջ մեր վրէժը կը լուծենք որոշեալ եղանակով մը : Ահա ուրիշ օրինակ մը . որ եւ իցէ բարոյական կամ ֆիզիքական , ներքին կամ արտաքին տպաւորութեան մը յիշատակը կրնայ շարժառիթ դառնալ մեր արարքներուն : Ժամանակաւ զգացուած բարոյական կամ ֆիզիքական հաճոյք մը մեզ կը մղէ նմանօրինակ հնագոյններ իրականացնել՝ նոյն հաճոյքը հայթայթելու համար :

Նոյնպէս պէտք է գիտնալ որ , այդ վերոյիշեալ չորս կարգի տպաւորութիւններէն մէկը կարող է ծնունդ տալ ուրիշ կարգի պատկանող մէկ արարքի մը՝ իբրեւ անմիջական կամ հեռաւոր արդիւնք . առնենք օրինակ մը . այսօր ստամոքսս պէտք եղածին պէս չէ գոհացած , ահա ֆիզիքական ներքին տպաւորութիւն մը՝ որ զիս գէշ տրամադրութեան մէջ կը ձգէ . եւ երբ որդիս կուգայ զիս համբուրելու , փոխանակ զայն զգուշելու իմ սովորութեանս համեմատ , ետ կը մղեմ եւ կը յանդիմանեմ զայն , ըստ երեւոյթին՝ առանց պատճառի :

Նմանապէս այդ զանազան կարգի տպաւորութիւնները կրնան այլ եւ այլ կերպով բա-

զաղորուելու եւ կնճռոտել մեր արարքներուն շարժառիթները փնտոտելու խնդիրը , եւ կը նպաստեն անոնց ինքնաշարժ թուելուն : Օրինակ . մէկը մեզ նախատած է , (գիտամբնոյն օրինակը) . ահա արտաքին բարոյական աշխարհի տպաւորութեան մը իբրեւ անմիջական արդիւնք՝ պիտի երթանք զայն ապտակելու մենամարտութեան հրաւիրել . բայց յանկարծ ներքին բարոյական աշխարհի տպաւորութիւններ կուգան միջամտել . մեր բարեսըրտութիւնը , գթասրտութիւնը , ժառանգական ընդածին այդ յատկութիւնները , միւս կողմանէ մեր դաստիարակութիւնը , մեր ուսումնասիրութիւնները , որոնք մեզի կը թելադրեն կարեւորութիւն չընծայել այդպիսի անտեղի նախատինքներու , այդ ամենքը միանալով այն իրողութեան թէ՛ ոչ ոք պիտի քննադատէ մեր վարմունքը , որովհետեւ մեզ կը ճանչնան եւ գիտեն թէ վատութիւնը չէ որ մեզ մղած է այդ պարագային մէջ այդպէս վարուելու , կը փոխեն մեր որոշումը :

Ահա փոքր տղայ մը , ուրիշ անգամ մը երբ պարտէզը տնաս պտուղներ կերած է , իր հայրը խստիւ յանդիմանած եւ ծեծած է զայն : Պարտէզը կ'իջնէ օր մը , եւ պտղատու ծառերը անոր ուշադրութիւնը կը գրաւեն , ահա ֆիզիքական աշխարհի տպաւորութիւն մը , որուն իբրեւ անմիջական արդիւնք՝ տղան կը պատրաստուի երթալ այդ պտուղներուն համը նայիլ . բայց նոյն հանգամանքներուն մէջ իր կրած յանդիմանութեանը , պատժին , այսինքն արտաքին ֆիզիքական եւ բարոյական տպաւորութիւններուն , յիշատակը կուգայ փոխել անոր որոշումը :

Այս քանի մը օրինակները ցոյց կուտան թէ , մեր առեւտրային ամենապարզ արարքները ո՛րքան կնճռոտ եւ բազմադիմի շարժառիթներ ունին : Յաճախ այդ շարժառիթները շատ աւելի բազմաթիւ են եւ իրարու ընդիմադրող կամ զուգահեռական կերպով կ'ազդեն , այնպէս որ երեսանց քննող անձի մը համար այդպիսի արարքի մը ծաղուժը անձանց թէ կը մնայ , ուստի եւ այդ արարքը ինքնաշարժ կը թուի :

Պատճառորականութիւնը վերջնականապէս ապացուցուած համարելէ առաջ պէտք է պատասխանել քանի մը առարկութիւններու՝ որոնք ինքնին թէեւ մեծ կարեւորութիւն չունին , սակայն ըստ երեւոյթին անհերքելի փաստեր կը թուին ի նպաստ ազատակամութեան :

Երբ ազատակամի մը կ'ըսենք թէ մեր ամէն արարքները արդիւնք են արտաքին կամ ներքին շարժառիթներու , ուստի եւ մեր կամքը չի կրնար ազատ ըլլալ այնպէս ինչպէս կ'ըմբռնեն ազատակամները , ահա թէ ի՛նչ կը պատասխանեն մեզ . «Ճշմարիտ է թէ ո եւ է բան մը ընելէ առաջ , ընդհանրապէս այդ շարժառիթները նկատի կ'առնենք , բայց պէտք է գիտնալ թէ հակառակ այդ շարժառիթներու ,

որուն , որոնք կը մղեն որոշեալ ուղղութեամբ մը գործելու , մեր կամքը կարող է հակառակ ուղղութեամբ գործել տալ մեզի , եւ խուսափիլ այդպէսով շարժառիթներու այդ կարծեցեալ անխուսափելի ազդեցութիւնէն : Ըստ երեւոյթին այս պատճառաբանութիւնը վճռական ըլլալ կը թուի . բայց իջնենք քիչ մը անոր խորը եւ մօտէն քննենք զայն . ի՞նչ կը տեսնենք . ոչ ի՛նչ որ կարենայ գիմադրել լուրջ քննադատութեան մը . արդարեւ , մեզի կ'ըսեն թէ , հակառակ ամենակարեւոր , ամենածանրակշիռ շարժառիթներու գոյութեան՝ մեր կամքը ազատ է հակառակ ուղղութեամբ գործելու . լա՛ւ , բայց շատ դիւրին է մեր հակառակորդին բերանը գոցել . բաւական է իրեն պատասխանել որ եթէ այդպէս կը վարուի , պատճառն այն է որ , այն վայրկեանին ուր որոշած էր այդ ծանրակշիռ ազդեցութեանը ներքեւ որոշեալ ուղղութեամբ մը գործել , յանկարծ ընդդիմադրող շարժառիթներ երեւան եկած եւ անոր կամքի ուղղութիւնը փոխած են : «Բայց ազատ եմ ես , կը պատասխանէ մեր հակառակորդը , ազատ եմ ես ու զեւ բան մը եւ անոր հակառակը միանգամայն : » Սակայն բաւական է ցոյց տալ մեր ընդդիմախօսին թէ ոչ ժամանակին եւ ոչ միջոցին մէջ երկու տարբեր բաներ միանգամայն չեն կրնար միեւնոյն տեղը գրաւել , յաջորդութիւն մը հարկաւոր է միշտ , եւ հետեւաբար՝ այդ երկու հակառակ որոշումները ամենակարճ ժամանակամիջոցով մը բաժնուած են իրարմէ , ուստի եւ հակառակ ուղղութեամբ ազդող շարժառիթներ կրցած են չափազանց արագ կերպով յաջորդել իրարու եւ այդ հակառակ որոշումներուն ծնունդ տալ :

Մեր ուսումնասիրութիւնը վերջացնելէ առաջ , կ'ուզենք խտացնել մեր ամբողջ յօդուածը եւ ցոյց տալ հոգեբանական այն ամենակարեւոր ճշմարտութիւնը որ կը ըլլի անկից : Արդարեւ , հաւաքական եւ յետադարձ ակնարկ մը նետելով մեր ուսումնասիրութեանը վրայ , կը տեսնենք թէ , քանի որ մեր ամէն արարքները անմիջական կամ հեռաւոր արդիւնքներ են ներքին կամ արտաքին , ֆիզիքական , մտաւորական կամ բարոյական պատճառներու , շարժառիթներու , թէ մէկ խօսքով ամէն բնական երեւոյթները արդիւնք են պատճառի մը , յայտնի է թէ կամքի ազատութիւնը պատրանք մըն է միայն , թէ հետեւաբար պատճառորականներուն համար՝ կամքը ուրիշ բան չէ բայց եթէ արդիւնք մը վերոյիշեալ ընդդիմահար կամ զուգահեռական կերպով ազդող տպաւորութիւններու , շարժառիթներու պայքարին , պայքար որ տեղի կ'ունենայ մեր գատողութիւններուն վերաքննութեան ներքեւ , եւ ուր ասպարէզ կ'իջնէ մեր բովանդակ ֆիզիքական , բարոյական եւ մտաւորական անձնաւորութիւնը :

Հիմա որ գիտենք թէ ի՛նչ է պատճառորականութիւնը , յաջորդ յօդուածով մը պիտի քնն-

նենք անոր հետեւանքները բարոյականի, արդարութեան եւ մասնաւորապէս դաստիարակութեան տեսակէտով . պիտի ցուցնենք թէ ի՛նչպիսի պայծառութեամբ մը ան կը լուսաւորէ այդ խաւարչտին աշխարհները, թէ ի՛նչպէս մեր ընթացքը ամուր հիմերու, անխուսափելի եւ բեղմնաւոր օրէնքներու վրայ կը հաստատէ, մեր մտաւոր հորիզոնը կ'ընդլայնէ եւ նորանոր հետազօտութիւններու անվերջ հետանկարներ կը պարզէ մեր աչքին առջեւ :

ՏՐ . ՏՐԴԱՏ ԵՍԱՅԵԱՆ

Փանօ

ՆԱՍԱԿՆԵՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Ա . ՆԱՄԱԿ

Ապահովութեան մէջ ապրող բարեկա՛մ,

... Չի անցնիլ մի քանի օր, եւ այստեղ էլ, որպէս մեր սիրուն երկրի ամէն անկիւն, կ'ողողուի մեր արիւնով : Մեր գիւղերը սփռոց կը լինին փողոցներին, մեր շքեղ երկիրը կը սեւանայ ազօրաների բազմութիւնից եւ օդը կը լեցուի նրանց կոկոսոցով . . . Ո՛ր կողմ որ դառնաս, աւերակ ես գտնելու, ո՛ր տուն որ մտնես՝ բռնաբարուած ու ձգած աղջիկ, գետնատարած մայրեր, գլուխները սիւների վրայ ջախջախուած մանուկներ ես տեսնելու եւ . . . գերեզմաններ՝, գերեզմաններ՝ . . .

Ես էլ, բոլոր ազգականներդ, ծանօթներդ մինչեւ յետինը՝ մեռնելու ենք սահմանուած եւ քեզ բարեւ ունինք, պանդո՛ւխտ եղբայր, որ գուցէ դեռ շատ ապրիս . շուտով գաս մեր գերեզմաններն այցելելու եւ նրանց վրայ կանգնած՝ հայրենիքիդ ողբը երգես :

Յոյս չունինք ապրելու, ո՛չ : Բաղաքի մէջ անցած դարձածն իսկ ապացուցանում է որ բոլորիս կոտորելու են :

Որքա՛ն սառնութեամբեմ գրում այս բոլորը, եւ դու արդեօք սառնութեամբ չէ՞ որ այս

կրկնուած, երեքնած նկարագրութիւններից էլի մէկը պիտի կարգաս :

Չորս օր առաջ սկսեց, ե՛րբ պիտի պայթի՛ չը գիտեմ, դուցէ այսօր, մի ժամից, գուցէ այս րոպէիս : Մի քանի օր է արդէն որ շրջակայ քաղաքներից հասած կոտորածների լուրերը գրգռել են բոլորի ջղերը, լարել՝ ու մի թեթեւ աղմուկ բաւական է ամենքին զարհուրեցնելու :

Պիտի տեսնէիր սոսկումը, երբ լուր տարածուեց շուկայի մէջ, թէ վաճառական Մըկըրտչին մի Թիւրք՝ դաշոյնի հինգ հարուածով՝ փոել է գետին :

Շուկայի մի ծայրից դէպ ի միւսը կարծես մի ուրագան սահեց : Աղմուկ, շփոթ, փախչողներ . . . Որոտումով փակուած էին խանութների տախտակեայ փեղկերը . շատերը խելք կորցրածի պէս թողնում էին ամէն ինչ՝ խանութ, գլխարկ, կօշիկ՝ եւ վազում դէպ ի տուն . . . պահ մը եւս եւ, շուկան դատարկ էր, ամայի, բաց, իսկ փողոցներում՝ վազող վազողի :

Եւ լուրեր են հասնում հետզհետէ մեծացող, երբեմն այլանդակ : Որպէս թէ սպանել են ո՛չ միայն Մկրտչին, այլեւ շատ անցորդ Հայերի . որպէս թէ Թիւրքերը խումբ առ խումբ, փողոցների ծայրերում կանգնած, դաշունում են կամ գնդակահար անում բոլորին . . .

Հաւաքւել ենք եկեղեցու բազը : Ամենաապահով տեղն է : Ահա լցւում է մատուռը, խորհրդարանն ու զպրոցի սենեակները : Կին, տղայ, ծեր՝ ձչում են, լալիս, ողբում : Ոմն իր ամուսինն է փնտռում, մէկը՝ իր որդին, միւսն՝ իր եղբայրը որոնում : Մի նոր նշանած աղջիկ էլ ընկել է սենեակից սենեակ, բազից բազ ու մի կողմը թողած ամօթխածութիւնը, խելակորոյս՝ իր սիրելուն է ուրոնում .

—Մկրտի՛չ, Մկրտի՛չ, ձայնում է նա սրտաճմլիկ, աղիտղորմ :

Սիրտս սեղմվում է . ի՞նչ Մկրտիչ է այդ : Մէկը, որ սոսկումից կծկուել էր մի տեղ, կանչում է .

—Ի՞նչ ես ողբում, աղջիկ, Մկրտչին ըստ պանեցին .

—Սպանեցի՛ն . . .

Անուան գուգադիպութիւն էր թերեւս . բայց մի սոսկալի ճիչ դուրս թռաւ աղջկայ կուրծքից եւ նա փուեց գետին :

Սակայն ո՞վ է ուշք դարձնողը : Միեւնոյնը չէ՞ : Աւելի լաւ էր նախօրօք մեռնիլ , քան յետոյ ընկնել զինւորների ձեռքը . . .

Մի ուրիշ տեղ կուչ են եկել ահա կին ու մանուկներ , միմեանց են կպել ու լալիս են . որպիսի՞ լաց . . . եւ պառաւներ՝ որոնք կուրծք են ծեծում , աղօթում են . . .

Լուր է պտըտում որ ընդհանուր կոտորած է սկսել : Երբեմն ականջիս է հասնում խուլ , բայց յաճախ կրկնուող հրացանաձգութեան ձայներ :

Չը գիտեմ ե՞րբ էր—այլեւս ժամանակը գոյութիւն չունի մեզ համար—եկեղեցի մտաւ մի երիտասարդ : Երջպատեցինք նրան : Նա էր որ պատմեց թէ պահակ զինուորները ըսպանել են Մկրտչի սպանողին , յետոյ տարել սարայ ու ախտեղ յայտնել , որ սպանուած մահմետականին խելը են ապստամբ դեաւուրների ձեռքից : Մահմետականները այդ ժամանակ ամէն տեղ սկսում են գոռալ :

—Մա՛հ գեաւուռներին . . .

Իրենք Թ՛յւրք՛երն են աւիը հ նարել գործադրելու համար Սուլթանից տրուած հրամանը : Չէ՞ որ , երբ մի խումբ ամբոխ յարձակվում է շուկայի վրայ , փաշան եւ իւրայինք , կամենալով իրենց պահել կողուպուտը , փակել են ամբոխի դէմ եւ գոչել .

—Գնացէք թաղերը , միւսլիւմաններ , ձեզ 38 ժամ հրաման ենք տալիս գեաւուռներին կոտորելու . . .

Բայց խուժանը չէ կամեցել հեռանալ ճոխ թալանից : Եւ այդ ժամանակ փաշան հրամայել է զօրքով ցրուել ամբոխին դէպ ի թաղերը , յետոյ մի առ մի բաց է անել տուեր բոլոր խանութները եւ մինչեւ յետին խիլը կողոպտել . . .

Մենք , որ գիշերն ամբողջ անկացրինք եկեղեցու մէջ՝ մօտ 3—4000 հոգի , անօթի , անձածկոց , վախից կիսամեռ , գրէթէ անդէն—առաւօտեան միայն իմացանք շուկայի կատարեալ թալանման լուրը :

Գրեթէ ոչ ոք չաղաղակեց : Մեռելային դունաթափութիւն պատեց բոլորին : Կթոտեցին ոտքեր եւ շատերն սկսեցին ծնկները ծեծելով լալ :

Լսվում էին հառաչներ միայն : Տեսնուում էին կոյս-կոյտ , փոթորկից ջարդուած հօտի պէս միմեանց վրայ ինկած , գետնի վրայ փռուած ,

անկիւններում կծկուած , աննպատակ թափառող , անմիտ հայեացքով նայող ծերեր , մանուկներ , կանայք . . .

Բ . ՆԱՄԱԿ

Կէս օրն անցել է : Շատերը մեզնից , յաջողութեցան տուն գնալ , պաշար ու ծածկոց բերել :

Գաղաքում տիրում է մի մեռելային ծանր , ճնշող լուսթիւն : Անցուդարձ գրեթէ չկայ : Շատեր դեռ մնում են իրենց տների մառաններում թաղնուած : մութ խորչերում պահուած :

Մի քանիսը յոյս են տածում որ վտանգն անցել է , որ փոթորիկը վերջացել է : Բայց խորին լուսթիւնը աւելի է սարսափ ազդում :

Այդ լուսթիւնը փշրող փոթորիկի նախընթացն է : Այդպէս է լինում մի բոլակ , երբ հետեւում է կործանիչ հեղեղը , աւերիչ ուրագանը : Այդպէս է լինում այն բոլակն , որից յետոյ ամպերը որոտընդոստ գոռում են եւ կայծակը հրային գծերով պատառում օդը , ոսկեգոյն սուրիներ ցրում եթերին մէջ . . . Այդպէս է լինում այն բոլակն , որից յետոյ ճրագը բոցափայլում է ու հանգում , մեռնողն աղաղակում է եւ յաւիտեան ննջում . . .

Եւ արդարեւ , յանկարծ մի խուլ դղրոց կոհակածեւ ցնցեց օգն ու խուժեց դէպ ի մեզ : Մի աղմուկ , որ դուրս գալով հազարաւոր ոռնացողների կոկորդից , անցնում էր փողոցներ , գողացնում ամէն ինչ , շարժում ծառերը , ցնցում գետինը . . . մի յարատեւ գայլային ոռնոց միշտ մեծացող , հետզհետէ մօտեցող : Լսվում էին նաեւ թմբուկների ձայներ : Կարծես քաղաքից դուրս բանակած զնչուները իրենց թմբուկներով պար էին սարքել քաղաքի հրապարակում : Եւ դրան հետեւում էին փշրուող , ջարդուող դռների ձայներ , կացինների թնդիւն , տների մէջ մորթուողների սուր , աղետարշ ու կծուութեամբն օդը քեղդող ճիչեր , թալանողների յաղթական խոպոտ կանչեր . . .

Գալի՛ս էին :

Մի բոլակ ոչ ոք մեզնից չկարողացաւ մի բառ արտասանել : Դադարեց ամէն հատույ , ամէն ողբ : Ոտքի թռան բոլորը զսպանակաւոր

գործիքի պէս ոստնելով , լարեցին ջղեր ,
ակնապիշ՝ քարացան հայեացքներ . . .

Յետոյ , ա՛հ յետո՛յ . . . մի խառնաշփոթ ,
մի ժխո՛ր . . .

— Տղե՛րք , գալի՛ս են , լուեց յանկարծ մի
երիտասարդի ուժգին ձայն— մի՞թէ թողնելու
ենք որ ոչխարի պէս մեզ մորթեն :

— Մեռնեն՛ք քաջերի պէս . . . ձայնեց մի
ուրիշը :

— Ձէ՛նք , զէ՛նք . . .

— Դուրս յարձակենք . . .

Էլ ոչինչ չէր որոշուում : Առաջին ձայն
տուողը բազ գուրս եկաւ . բոպէսպէս բոլորս
կիտեցինք նորա շուրջը , մեր զէնքերը
գննեցինք , յետոյ խմբերի բաժնեւեցինք եւ
գուրս թանք բազից :

Ամէն կողմից հասնում էին նոր փախտա-
կաններ եւ րարեբազդարար՝ զինուած :

— Մինչ վերջին շունչ , տղե՛րք . . . դոչեց
զլխաւորը :

— Անձնատուր չլինի՛նք , ասաց մի ուրիշը -
միեւնոյն է , մեզ ողջ չեն թողնիլ ո՛չ մի
հանգամանքում :

Ահա եւ խուժանի , յարձակող գայլերի
ծայրը : Ի՛նչ խուժան :

Առջեւից ու մէջտեղից երեւում էին զին-
ւորներ , բայց անկանոն կանգնած . քիւրտ եւ
թիւրք ամբողջ զինուած էր ամէն տեսակ
զէնքով : Աղաղակում էին որքան ձայն ու-
նէին , եւ կանայք , թմբուկներ ձեռքերնին՝
պար էին բռնել , ոստոստում , ու գրգռում
էին իրենց վայրենի ամուսիններին . . .

Չարհուրելի էր , երբե՛ք այդպիսի կատա-
ղի , գազանային ամբոխ չես կարող երեւա-
կայիլ :

Քայլում էին միշտ ոռնալով . հանդիպածին
տապալում էին , մորթում : Եթէ տուն էր—
գուռը ջարդում կացինի հարուածներով , ներս
էին խուժում , մի բոպէի մէջ տունը մերկա-
ցնում , քանդում , աւերակ դարձնում ու
անցնում . . . կարծես մորեխներ լինէին , որ
մի իջնելով՝ ամբողջ արտեր են ոչնչացնում :

Մական մեր գնդակները կանգնեցրին
նրանց : Բոլորս միասին կրակ տեղացինք
նրանց վրայ : Չինուորները փորձեցին խմբ-
ւիլ , պատասխանել մեզ , բայց խառնե-
ցին , կատաղի խուժանի յաղթական ոռնոցը
փոխեց ճիչերի , թմբուկները ընկան , կա-
նայք ետ փախան , հրեցին , հրմշտկեցին . . .

ու մի խառնածաղանձ , զգուելի խառնուրդով
ցրուեցին :

Այո՛ , բարեկամ , ցրեցինք 10,000 ից ա-
ւելի մի խուժանի , որ մեր արիւնն էր ու-
զում , մեր ինչքը , մեր պատիւը : Ցրեցինք
մեր չնչի՛ն զէնքերով : Ա՛խ , եթէ աւելին
ունենայինք . . .

Քա՛ջ ընկերներս . . . պէտք էր տեսնել թէ
ինչպէ՛ս սիրտ առած՝ մտան տների մէջ , լու-
սամուտներից կրակ ու ամէն ինչ սկսեցին
տեղալ գայլերի վրայ , ջարդել ու փշրել ,
հալածել ու ցրուել . . . Ես էլ էի կրակում ,
անդադար հրացանում . եւ ո՛չ մի գնդակս պա-
րապ չէր վրիպում , ո՛չ մի :

Բայց ի՛նչ կարող ենք անել մեր այս խրդ-
ճալի զէնքերով , գնդակների ու վառողի
չնչին պաշարով , եթէ ոչ՝ միայն աւելացնել
արիւնարբուների կատաղութիւնը .

Եւ չի՛ անցնիլ մի օր , գուցէ մի քանի ժամ
ու կը գան նրանք զինուած պետութեան
սուած զէնքերով , կը գայ զինուորական ուժ
թնդանութեանով , ու մեզ կը սպաննեն , մեզնից
մինչեւ յետինը կը մորթեն . . .

Չը գիտեմ այլեւս թէ քանի ժամ կեանք
ունիմ . . .

Գ . ՆԱՄԱԿ .

Դեռ ապրում եմ :

Ապրե՞լ ես դու այսպէս , բարեկա՛մ , կանգ-
նած՝ ծխացող , արիւնաշաղախ աւերակների
կոյսի , հառաչող , վէրքերի մէջ տառապող ,
արիւնի մէջ տապալակող ազգականներից ծը-
նողներից , բարեկամներից դիակների , փլող
տների , սարսափից ապշած , վախից՝ սարսուե-
ցընող քրքիչ արձակող կանանց , իրենց կոր-
ցըրած՝ երեխայի պէս լացող , հեկեկող աղա-
մարգերի մէջտեղ . . .

Ապրե՞լ ես դու երբեք այսպէս , կանգնած
մի քանի խումբ գունաթափ , բայց անյող-
գողք երիտասարդի հետ , ուրի ի բռին , դիտա-
կից ու պատրաստ մեռնելու , գոհելու իր
կեանքը :

Եւ սուլում են ահա գլխիս չորս դիէն թըշ-
նամիների արձակած գնդակները , ահանջս
խլացնում են շրջապատիս շփոթն ու լացը ,
թշնամու ոռնոցն ու լայնոյանքը :

Առաջին ժամին կորցրել էի ինձ : Հրացանս պարպուում էր անօգուտ կամ՝ առանց նպատակի , նայում էի՝ առանց տեսնելու , լսում էի՝ առանց ականջ դնելու : Ոչինչ չէի հասկանում , տեսնում էի որ շրջապատումս ընկնում էին ծանօթներս ու բարեկամներս եւ զայրուում : Դիմացից նոյնպէս : Վայրկեան մը դադրեցան հրացանների ձայները եւ տիրող կարծատեւ լռութեան մէջ ականջիս հասան վիրաւորեալների հառաչներ... սպա հեռաւոր անթիւ ամբոխի ոռնոցներ եւ գետի տխուր , միատեսակ խշոցը...

Առաջին ժամից յետոյ մի տեսակ սթափման մէջ գտայ ինձ . եւ տեսայ եւ ականջ դրի :

—Տղե՛րք , քա՛ջ եղէք ... հասկանում եմ մեր գլխաւորի որոտացող ձայնը , — կրակեցէ՛ք , ողջ-ողջ անձնատուր չը լինիք :

Եւ պայթում են հրացաններ , կրակ ժայթքում . տաք ծուխը ծածկում է մի բոպէ ամէն ինչ , յետոյ ցրում եւ հետզհետէ նորից երեւցնում մօտեցող զինուորների աւինների շարքը...

Զինուորներ են , շարքով կանգնած , լըցնում են հրացանները , միասին բարձրացնում... Թնդում է սպա մի անեղ ձայն եւ մեր դռների ու լուսամուտների վրայ ցնցումներ են տեղի ունենում , փշրուածքներ , անագին ճեղքուածներ . . . լսում են ճիչեր , աղաղակ . . .

Ու որքա՛ն տեւեց այդ—չը գիտեմ...

Յանկարծ եկող զինուորների շարքը կանգ է առնում . նրա ետեւից լսվում են էլի ոռնոցներ , երեւան է գալիս ամբոխը , կատաղի , դուրս եկած թալանած տներից , քարչ է տալիս իր հետ ուտելիք , հագնելիք , գորգ , վերմակ ու... աղջիկներ , ծերեր , մայրեր...

Ա՛հ , մշուշի պէս աչքիս առջեւ են գալիս ուշաթափ , մազերը ցրուած՝ մատաղահաս աղջիկ ու կանայք , վայրագ Քիւրտերու բազուկներու մէջ սեղմուած , ծերունիների ալեգարդ գլուխներ , որոնք խեղդուած գազանաբարոյ թիւրքերի թեւերով՝ քարչ են տալիս իրենց մարմինը փողոցի փոշու մէջ եւ մանուկներ , որոնք ճշում են , իրենց թաթիկները պարզում...

—Մայրի՛կ , մայրի՛կ...

Էլ ոչինչ չեմ տեսնում : Հրացանածգութիւնը զադարել է . ընդհանուր քարացում է տիրել , իսկ թշնամին յառաջանում է դէպ ի մեզ : Մեր

ծնողները , մեր կանայքն ու մանուկները նրանց առաջից , մեր ինքնապաշտպանութեան գլուխներին դիմացը գալիս են :

Ա՛հ , վստե՛րը ... ստիպում են մեզ մեր ձեռքով սպաննել մեր քոյրերին , մեր մայրերին ու զաւակներին :

Չէնքերը ցած են իջնում , բազուկներս թուլանում : Բայց անա գլխաւորը , որ յանկարծ ցցում է իր երկար , խրոխտ հասակը եւ գունաթափ՝ ձայնում է .

—Տղե՛րք , այդ ի՞նչ է , վարանո՞ւմ էք . չէ՞ որ եթէ կենդանի մնան դրանք , միեւնոյն է , զոհ են գնալու այդ գազանների կրքերին եւ սրերին... Յառա՛ջ , կրակեցէ՛ք , թող մեռնին գոնէ պատուաւոր մահով...

Ու բարձրացրեց հրացանը , նշան առաւ , կրակեց... մի ծեր կին էր որ գնդակն առաւ , բարձրացրեց ձեռքերը , նայեց իր զարնողին եւ մեռաւ...

Մայրն էր...

Գազանները սարսափահար՝ կանգ առին , բնագդաբար իմացան որ որդին մօրը հարուածեց : Այդ զարհուրելի , հսկայական սպանութեան առաջ՝ ապշեցին նրանք . վախեցան , սկսեցին ետ քաշուիլ...

Բայց երկար չը տեւեց : Անշուշտ չատ չէին կարող լինել այդպիսի անսիրտներ— մտածում էին նրանք :

Եւ սխալում էին : Բոլորս բարձրացրինք հրացանները : Ծերունի կիներ , ընկած փոշու մէջ՝ մեր դրօշակն էր դարձել...

—Կրա՛կ... որոտաց գլխաւորը խուզոտ ձայնով —մայրս էր որ սպաննեցի... կրա՛կ , թող մեռնի՛ն բոլորն էլ...

Ու գունաթափ էր որպէս մահ :

Ահա այդ բոպէին էր որ աչքս յանկարծ ինկաւ մի Քիւրտի բազուկների վրայ քարչ եկող կնոջ դէմքին :

Կինս էր :

Բարձրացրել էի հրացանս . ետ չը քաշեցի . աչքերս միայն փակեցի եւ... կրակեցի...

Եւ երբ բացի , կինս ինկած էր եւ Քիւրտը թաւալում էր նրա կողքին : Շատ հեռուն չէին . ինքնամոռացութեան մի բոպէի մէջ դուրս նետուեցի , երկու ոտիւնով հասայ , խլեցի կունջս , բարձրացրի եւ ետ եկայ :

Ոչ ոք չը դպաւ ինձ :

Մեռել էր . գնտակս ծակել էր գլուխը , եւ աչքերը սոսկումով ինձ էին նայում : Ցած դրի պառաւ մօրս կողքին .

Գըթա՛ւ ո՛վ Տէր . գըթա՛ւ , Յիսո՛ւս մարդասէր ,
Դո՛ւ որ մանկանց Քեզ կանչեցիր սիրաբար .
Կանչիր մե՛զ էլ , կանչի՛ր քու ծոց , ո՛վ
հայր մեր .

Աշխարհից ենք , բայց աշխարհին ենք օտար :

8 Յունիս 99 .

Բերլին

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՐԳԸ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՆՔ ԿԱՐՕՏ

— 0 —

Ո՛վ իշխաններ , թագաւորներ աշխարհի ,
Բաւակա՛ն է որքան մատաղ մեր որդիք
Կըռիւններում զո՛հ դընացին կապարի
Կամ առն զարձան հաշմանդամ ու վիրաւիք :

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ ,
Մեր որդիներ խաղաղութեան են կարօտ :

Բաւակա՛ն է որքան մայրեր խառնեցին
Պըղտոր արցունք իրենց որդոց վարդ արեան .
Բաւակա՛ն է որքան հարսեր թառմեցին
Ըսպասելով փեսաների գալըստեան :

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ ,
Մայրեր , հարսեր խաղաղութեան են կարօտ :

Բաւակա՛ն է որքան սըրտեր յուզեցին
Պատերազմի աղաղակից վայրենի ,
Որքան հայրեր իրենց որդոց զաս աըւին՝
— Բարբարոս դաս , — թափել արիւն նըմանի :

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ ,
Բոլոր հայրեր խաղաղութեան են կարօտ :

Մենք չե՛նք ուզում հարըստութիւն ու ընծան
Որ խըլւած են մի այլ ազգից կործանւած .
Մենք չե՛նք ուզում շողուն փառքի ծիածան
Որ օտար մօր արցունքում է կամարած :

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ ,
Բոլոր ազգեր խաղաղութեան են կարօտ :

Ո՛վ իշխաններ , թագաւորներ աշխարհի ,
Ա՛խ , ե՞րբ մեզ հետ ձեր գահոյքի բար-
ձունքից

Կը քարոզէք աննենգ սըրտով եւարի՛
Եղբայրութեան աւետարանը անբիծ :

«—Անկցի՛ վըրէժ , անկցի՛ ն կապար ու վառօդ .
«Մարդկութիւնը խաղաղութեան է կարօտ :

Ե Ր Գ Ե Ր

Ա.

Կ'ուզէի քեզ հետ մի նաւակ նըստել ,
Ու թիավարել լուս ծովի վերայ ,
Երբ պարզ երկընքում լուսինն է ծագել ,
Հանդարտ շողում է քուն ջըրի վերայ :

Քար լըռութեան մէջ կ'ուզէի միայն
Թիանց հետ սըրտիս զարկերը լըսուէր .
Լուսնի շողի տակ մեր հեղուկ ճամբան
Կ'ուզէի , որ ա՛խ յաւիտեան տեւէր :

Բ.

Մի՛ տըխրիւր որ մենք յոգնած ենք այսպէս
Ամպոտ երկնի տակ , մըթնում ու հողմում .
Որքան շատ յոգնինք , անգի՛ն նազելիս ,
Այնքան եւ անուշ կը քընենք հողում :

Եկ ձեռք ձեռքի տանք ու քալենք յամառ
Դէպ ի նըպատակ՝ մըթնում ու հողմում ,
Մինչեւ վերջին շունչ յոգնինք անգագար ,
Որ ամենից խոր մենք քընենք հողում :

Գ.

Օ՛ , մի՛ սարսափիր մահուան ճանկերից .
Ես քեզ հետ կուզամ , չեմ թողնիլ մենակ .
Այս իմ բազուկը զոր քեզ միշտ հըսկեց ,
Քեզ կը պաշտպանէ եւ մահուան դիմաց :

Օ՛ , մի՛ սարսափիր մահուան խաւարից
Ես քեզ հետ կուզամ , չեմ թողնիլ մենակ .
Այս սիրտը որ քեզ միշտ առաջնորդեց ,
Քեզի լոյս կուտայ եւ մութ հողին տակ :

ԱՐԱՄ ՉԱՐԸԳ

Բերլին , 1899



ԼՍՄՐԻՆ ՎՐԵԾԸ

Կատուի ողորմուկ մլաւումներ կը ծանուցանեն անոր պժգալի մերձեցումը . երբ փոշոցին անկիւնէն դառնայ , ամէն իրիկուն՝ մուկը տիրելուն մօտ , զազիր տեսարան մը կը պարզուի . քուրձ մը որ մինչեւ գնդղուցները կ'երկարի , կը ծածկէ կոշտուպլոշտ հաստկուկ մարմինը , թշուառութեան եւ աղտոտութեան մէջ գիրցած ու իւղոտած . ճիտը , ցլային թանձրութեամբ , ծոճրակին վարօքէն սկսած մինչեւ մազոտ թուխ լանջքին մօտ , որ ահաւոր հեւքով մը կ'ելլայ կ'իջնայ միշտ , կ'երեւայ բաց ու մրկած . ջիղերու եւ երակներու բիրտ ու վայրագ հիւսուածք մը յանկարծ դուրս կը ցատքէ լայնչի ուսերէն , բռնելով՝ անտաշ պատուանդանի մը պէս՝ անհեթեթ գլուխ մը , տարօրինակ , յիմարական բան մը , որ կ'երեւայ , բորենիի զիակնախոյզ վայրենի օրօրումովը : Բերանը բաց է , ցուցնելով ապուշ ծիծաղէ մը լայնցած կաշեգոյն շրթներուն մէջ՝ լղրճուկ ակուաները , տեղ տեղ կոտորած . ու այդ նեխոտ խոռոչին մէջ միշտ կուստուկլոր կեցած է մսի կարմիր կտոր մը՝ տգրուկի լպիրծ մորթին վէտվէտու մնեցողը , թանձրացած լորճուքի ճերմակութեամբ մը ծեփուած , եւ որ մերթ , չկարծած աստնդ , դուրս կը պոթկայ մինչեւ թուշը , զոր կը լգէ , կ'անցնի կը դառնայ , նորէն շուրջը , միջոցը կը լզուըստէ , բան մը փնտռելու պէս զոր չի գտնար , ու կամաց մը կը սքլի կը մտնայ իր խոռոչին մէջ , քիչ ետքը նորէն դուրս երկննալու ու շարժումները կրկնելու համար : Կապիճներէն դուրս վիժած սաստիկ խաժ աչուըները , ցաւոտարցունքով միշտ ճպոտտած , ամենէն տխուր ու գարշելի տպաւորութիւնը կը թողուն տեսողին վրայ . իրենց անասնական արայայտութեամբը սեւեւուն են անոնք , կը գամուին կը մնան տեղ մը , յամառ թափանցութիւնով մը . բայց կան վայրկեաններ ուր անոնք կ'ելլ լան իրենց կանանչ անշարժութենէն , ու ճերմկուցները յիմարօրէն կը թաւալին , կը գլորին , կը դառնան , կարծես առանցքի մը վրայ ամրապէս ագուցուած : Ականջները , բուռի թեւերու պէս ,

կ'երկննան գլխուն երկու կողմերէն , քիչ մը կորանալով բրդէ գունատ ու հին գտակի մը տակ , որ ամբողջ գանկը կը պարարկէ : Քուրձին ներքեւ մերկ սրունքները կ'երեւան , խանձած ու ճեղքրտուած , ու ոտքերը , լայն , ահազին , տափակ , կոշկոռոտ մատուըներով , որ ամառը փոշիի կոյտեր կը կոխկոտեն ու ձմեռը սառ , ձիւն , ցեխ : Բնութիւնը , որ այս աստիճան անողորմաբար ժլատ հանդիսացիր էր այս խեղճ մարդուն ֆիզիքական կազմակերպութեանը համար , ահռելի կատակով մը կամ քմայքով մը լըսելու եւ խօսելու կարողութիւնն ալ զլացեր էր անոր : Ու այսպէս անիկա՝ միսի ու ոսկորի հրէշային շաղախ՝ ամբոխին սովորականութեան մէջ Տգեղութեան քստմնելի պատկեր մը կը պտըտցնէր , իր ֆիզիքական ապաշնորհութեան վրայ ատելութիւն ու սիրտխառնուք միայն հրաւիրելով : Շարժուն դիակ մը պիտի կարծուէր ան՝ եթէ երբեմն կսկծեցուցիչ ճիգով մը , որ ատեն աչուըները տարապայման կ'ընդլայնին ու ճիտին ու քունքին երակները կ'ուռէին , կցկտուր կաղկանձիւններ ու խոճկորի խանչիւններ չարձըկէր , զորս կը կերկրէր իր լեզուին խօշ շարժումներովը , դուրսը , օդին մէջ :

Համբը , սակայն . մուրացկան մը չէր : Եւ ո՞վ պիտի ուզէր ողորմութիւն տալ իրեն , քանի որ արգահատանքի տեղ նողկանք միայն կ'ազդէր : Ամէն մարդու պէս առուտուրով ապրող մարդմըն էր : Եւ չխարի աղիք կը ծախէր : Բռնած արհեստն ալ իրեն պէս ազտոտ :

Այլ՛ք . օ՛հ , տեսնալու էր զինքը իր աղիքներուն հետ . դաստակներէն ու մատներէն վար կախուած էին անոնք , թաց , կակուզ , լպրճուն , օձի պէս իրար փաթթուած խառնուած , անծայր անվերջ գալարուածք մը մսի , արիւնի , փրորտիքի : Բայց ատիկա էր իրեն միակ հաճոյքը զոր կարենար վայելել աշխարհի լիաբուն հաճոյքներու մէջ : Տեսակ մը հեշտութեամբ կը գրկէր իր աղիքները , անոնց կակուզ ցուրտ հպումէն անբացատրելի վայելք մը զգալով . կը սեղմէր , կը սրորէր զանոնք իր մատներուն մէջ , անոնց թացութիւնը կը շօշափէր՝ իր վայրենի մարմնոյն անձառ զգայազրգուցութիւն մը բաշխելով : Մինչեւ իսկ — ու իր կատակն էր ասիկա — երբեմն իր բաց կըլափին մէջ կը մխրճէր զանոնք յեղակարծ շարժումով մը , յետոյ ետ կը քաշէր կոկորդային սուր կոխնչով մը , որ պահ մը սարսա-

փահար ընկրկիլ կուտար կատուներու ճշացող, կզւրտող, սովալլուկ երամակը զոր փողոցներուն մէջ, իր ետեւէն կը քաշկոտէր, գրգռելով զայրացնելով անոնց անկուշտ քաղցը: Երբոր իրեն ու իր աղիքներուն կծու հոտը առնէին, պատերէ, ցանկերէ, պատուհաններէ խենդի պէս վար կը նետուէին կատուները, կուլային, կը մլաւէին, համրին շուրջը պար կը դառնային աղերսելով, ողբալով, մերթ նենգօրէն յարձակում մը յանդգնելով: Բայց անիկա երկայնամիտ համբերութեամբ կը սուկար այս անդուլ թխանձագին, խօլական հալածանքին. նոյն իսկ չես գիտեր ինչ հաճոյք մը, տեսակ մը գոռոզութիւն կը զգար ինքզինքը շրջապատուած, հետապնդուած ու ըզձացուած տեսնալով եթէ ոչ մարդերէ որ խոյս կուտային իրմէ, գէթ անօթի կատուներէ:

Ու այսպէս կ'անցնէր ամէն իրիկուն, մըթընշաղին, աղիքները կախ տուած թեւերն ի վար, մերթ ինք իր մէջ ամփոփուած՝ թըշուառութեան պատկերը քալեցնելով ամբոխին մէջ, մերթ լեզուն դուրս, աչքերը թաւալուն, ատամները ցցուած, հրէշութեան տիպարն արձանացնելով, մինչ կատուները ետեւէն, քովէն, առջեւէն իրենց անվախձան պաղատանքը կը փռէին:

* *

Անկիւնը այն փողոցին ուսկից համր կ'անցնէր սովորաբար, կը գտնուէր ցածուկ խանութ մը նպարավաճառի, ստացուածքը ութսունամեայ ծերունի պուլկարի մը որ առտըւընէ մինչեւ իրիկուն իր խոնջ ու պառուած մարմինը կծկած կը հանգչեցնէր ալիւրի, լուբիայի, սուրճի պարկերու անթափանց պատնէշի մը ետին: Ինք իր այդ անշուք գահոյքէն մինակ աչքի հսկողութիւն մը ի գործ կը դնէր, խանութին գործը ձգելով իր աղջըկան, քսանը անցուկ սիրուն պուլկարուհի մը, որ ամեն ճիգ կը թափէր իր զտամ հօր նեղսիրտ դիտողութիւններուն չենթարկուիլ: Աչխոյժ հաճոյակատարութեամբ կը վարուէր յաճախորդներուն հետ որոնք քմահաճոյ զեղումներ չէին կրնար ունենալ՝ ակնածելով ծերուկին աններող սուր նայուածքին խոտոտութենէն. անանկ որ նպարավաճառուհիին միակ հաճոյքը՝ իր առուծախի միօրինակ ու ձանձրանալի զբաղման մէջ՝ իր կատուն էր,

պզտիկ, կունտլիկ անասուն մը, գոհարը իր ցեղին, երկար խիտ մազերու փափու ճերմկութեամբ մը հանդերձաւորուած, աչխոյժ, ցատքրտող, կատակի մոլի, զգուհնք ու փայփայանք գրգռող չարածճի կապկութիւններով, որոնք ծերուկին անհանդուրժելի խստութեան քով ցայտուն հակապատկեր՝ անոր սաստկութիւնը կը մեղմացնէին: Կանանչ աչքերուն կայծովը ու մանր թաթիկներուն արագաշարժութեամբը զինուած՝ կենդանութեան, զուարթութեան շունչ մը կը պտրացնէր պարկերու, սակառիկներու, զարակներու յամառ անշարժութեան շուրջը: Աղջիկը սրտանց կը սիրէր իր կատուն որ հըտպիտի ոստումներ կ'ընէր անոր գլխուն, ոտքերուն, ձեռքերուն վրայ: Գրկին մէջ կը սեղմէր զայն, ափերուն մէջ գորովանքով կը թալթլէր, ծոծրակին խարտեաչ մազերուն կը քսէր՝ մինչ ան կը խաղար այդ ոսկի թելերուն հետ, խածխծելով, ճանկելով ստանց ցաւցնելու. ու իր սիրելու խանդին մէջ կորսուած, խելայեղ, կը պագնէր անյագութեամբ անոր աչուկները, թուշը, բերանը, մարմնոյն ամէն կողմը, ուր որ հանդիպէր. յետոյ կշտացած, կը նետէր զայն պարկի մը վրայ, անասնիկը այդ գերկընդխանումէն սահմուկած, խելացնոր, շնչապառ, կը թոթուէր, կը փոնգտար, կը քթւըտէր, կը լզւըտէր:

Ամէն իրիկուն երբ անցնէր համրը իր աղիքներու ընդին հետ, կոչունքունէր փխսիկը: Նպարավաճառուհին, ակամայ, հակառակ իր սաստիկ պժգանքին, կատունն սիրուն, կը կանչէր համրը եւ մանրուք դրամի մը փոխարէն աղիք կը դնէր: Մեծապէս կը զուարճանար դիտելով իր կատունն որ ճանկերովը մոլեգնաբար կ'իջնար փորտիքին վրայ, փոքր պիտերը ցցած, մուտալով, լափելով լափիլեզելով: Միւս կատուները, անոնք որ սիրական տէր մը չունէին՝ այդ խնճոյքը իրենց հրամցընելու համար, կը շատանային աղիք ծախողը հալածելու հաճոյքով. աւելի կը գրգռուէին իրենց ցեղակցին եղած այդ ըմբոստացընող առանձնաշնորհումէն, ու աւելի մոլեգնութեամբ կը հետապնդէին հրէշին ետեւէն իրենց ողբազին լացը շարունակելով:

Իրիկուն մը, սակայն, համրը որ ընդհանրապէս մեքենաբար կ'առնէր դրամը աղջկան ձեռքէն եւ առանց անոր երեսը նայելու կու-

տար աղիքին կտորը ու իր ճամբան կը շարունակէր երկրակալով, յանկարծ իր կանանչ եւ թաւալուն աչքերուն ամբողջ խենդութեամբը անոր երեսը նայեցաւ: Մանկամարդ պուլկարուհին ստսկումի ու նողկանքի ընկերկում մը ունեցաւ, բայց զսպեց ինքզինքը. ի՞նչ կրնար վախնալ այդ ցաւագարէն որ ամէն կարողութիւնէ զրկուած էր, եւ որ, անշուշտ գիտակ իր նայուածքին անհաճոյ տրպաւորութեանը, շուտ մը առաւ քալեց, թեթեւ կռինչ մը արձակելով, որ իր քով հառաչի նշանակութիւնը ունէր: Յաջորդ երեկոյին, համրին նայուածքին մէջ զոր ուղեց աղջկան աղւոր դէմքին, յայրատ ըղձանք մը կը վառէր, ու տեսնալով անոր զըզուանքի խոժոռ ծամածոռ մը, լեզուն շաչեցողք բերնին մէջ ուսկից կերկերուն ձայն մը ելաւ, տեսակ մը աղերսանքի աւաչ, որ խղզուեցաւ կողորդին մէջ: Նպարավաճառուհին բան մը չհասկնալով, աղիքին կտորը առնելուն պէս ներս փախաւ, կատուն գիրկը, որ կը ճչար բերանը կաս կարմիր քացած:

Ա՛լ անկէց ետքը, ապուշը, փոխանակ ըսպաւ սելու որ կանչուի, ինքը կերթար կը կենար խանութին առջեւ, աղիքի երկար, առատ կտոր մը առաջուց պատրաստած, աւելի մօտ տեսնալով աղջկան, աչքերը անյագ պագշտութեամբ մը ցոլարձակ, շրթները՝ հաճոյական ժպիտ մը ձուացնելու ջանքին մէջ՝ վայրենիօրէն ընդլայնուած. քիչ քիչ, աղջիկը վարժուեցաւ համրին այս տարօրինակ ձեւերուն, որոնք վնաս մը չուէին իրեն եւ որոնք, անշուշտ, հաճոյքի սաստարներ էին այդ խեղճ ցաւագարին, ամէն վայելումէ, ամէն արբշուութենէ յաւէս զրկուած: Ուստի ձայն չհանեց, բայց զգուշացաւ քաջալերել վայն, թոյլատրել անոր մեծ յանդգնութիւններ, սահմանափակելով վայն իր մարմնին տառապեցնող շարանքին չէզոքութեանը մէջ:

Իժմազգարար, շնորհազեղ աղջկան թոյլատրած այս վայելքովը բաւականանալու առաքինութիւնը չուենեցաւ համրը. իրեն ցուցուած ներողամտութիւնը զրգիւ մը կարծեց: Մանրուք զրամին փոխարէն իր տուած աղիքին կտորը հետզհետէ շատցաւ, երկնցաւ, եւ հասաւ անանկ համեմատութեան մը որ կատուն իր փորիկը կշառապինդ ունեցնելէ ետքը, կարեւոր մաս մըն ալ կ'աւելցնէր զոր աղջիկը վեհանձնօրէն կը նետէր դուրսի կատուներուն կճոտող ակոսներուն, ու թէեւ ինք

նշանացի կը հասկցնէր աղիքին տարապայման քանակը, բայց համրը տալու, ամէն բան տալու մարմաջով բռնուած էր: Եւ իրիկուն մըն ալ, համրը, ջղային զգայնակախութեան բորբոքումէ մը մղուած, աղիքը յանձնելէ յետոյ, իր լայն, եղոտ, գարշելի ձեւքը յանկարծ երկնցնելով բռնեց աղջկանը ճերմակ լեցուն կզակը: Աղջիկը, սարսափահար, ճիչ մը արձակեց ու ներս փախաւ խանութէն:

* *

Յաջորդ իրիկունը, անշուշտ զգալով թէ ի՞նչ ընդունելութիւն կը սպասէր հոն իրեն, համրը փողոցին միւս եղերքէն անցաւ, գողի պէս, աղիքներովը բեռնաւորուած, ու շեղակի արագ ակնարկով մը խանութին նայեցաւ, որուն դրան առջեւ ա՛լ ոչ աղջիկը կար ոչ կատուն, ու ներսը՝ պարկերուն ետին, ծերուկ պապօին խոժոռ, ահարկու կերպարանքը միայն, որ գաւազան մը կը ցուցնէր իրեն ըսպանազին:

Կատուն, իրիկունները, նոյն ժամուն, շատ ճչաց, մլաւեց, թապլակեցաւ իր տիրուհիին թեւերուն մէջ. ի գո՛ւր, ընդ միշտ զրկուած էր իր առօրեայ ոռճիկէն: Համրը, օրեր անցնելէ ետքը, ի դուր խանութին մօտէն անցաւ, փոխիկին աչքերուն առջեւ ցուցադրելով իր փորտիքներուն ախորժագրգիւկապոցները: Մանկամարդ աղջիկը, անկարիկիւր, աններող, իր գեղեցիկ աչուրներուն անարգական շանթովը վանեց խեղճ համրը, գիրկը բռնած իր քրիական կենդանին, բանի սեղ չգնելով անոր ճշոցներն ու ճանկոթուքները: Իր դէմքին եզրած պղծութեան վրէժը կը լուծէր:

Համրը յուսահատեցաւ, բայց ո՞ր կապեց: Իրիկուն մը, կատուն, օգտուելով իր տիրուհիին զրաղած մէկ վայրկեանէն, դուրս վազեց մինչ համրը կ'անցնէր, ինք ալ միւս կատուներուն հետ սկսելով ուտելիք պահանջել:

Ապուշը տեսաւ կատուն, կեցաւ շուրջը դիտեց ու կայծակի արագութեամբ աղիքի կտոր մը հանեց նետեց կատուններուն վոհմակին, որոնք մէկ թափով խուժեցին անոր վրայ, ճանկերնին դուրս: Յետոյ, վագրի ոստումով, ցատքեց բռնեց աղջկան կատունին ծոճրակէն, սեղմեց անոր կակուղ վիզը իր ջղոտ մասներուն մէջ, աչքերը թաւալելով մոլիկախութեամբ, լեզուն դուրս ցցած՝ օճի լեզուի պէս. խղզեց կենդանին որուն խած աչուր-

ները դուրս ցատքեցին կապիճներէն . յետոյ մօտեցաւ դիմացի պատին , զարկաւ ջախջախեց անոր բրդոտ գանկը . արիւնը , ըզեղով խառն , դուրս պոռթկաց . ու զարկաւ , զարկաւ անոր , խանչիւններ , կառաչներ արձակելով , մոլեգնելով այդ ափ մը միսին վրայ , որ ա՛լ անճանաչ կոյտ մը եղած էր արիւնշաղախ . խածաւ փրցուց անոր կակղիկ մանր թաթերը , ծամեց , դուրս նետեց , արիւն թքաւ , ու երբ ա՛լ բան չմնաց խեղճանասունը յայտնող , ճզմեց , աճրոնեց , արիւնոտ խմոր մը ձեւացուց , ու վայրագ ծիծաղով մը դարձաւ խանութէն ներս նետեց զայն , յետոյ , անճոռնի բրքիջով մը , անցաւ ճամբան շարունակեց :

ԵՐՈՒԽԱՆ

Վառնա



ՊԱՏՐԻԱՐԿ ՄԸ ՈՐ ԿԸ ԶԲՕՍՆՈՒ

— 0 —

Պոլսոյ հայերէն թերթի մը մէջ կարգացի նկարագրութիւնը հացկերոյթի մը որ Բերայի մէջ տեղի ունեցեր է Ս . Երրորդութիւն եկեղեցիին տօնախմբութեան առթիւ : Օրմանեան պատրիարք նախագահեր է սեղանին . կերեր , խմեր , բաժակներ պարպեր են սուլթանին կենացը , պատրիարքին կենացը , շուն շնորին կենացը : Օրմանեան պատրիարք , ճաշէն առաջ , օղիին զուարթ ազդեցութեան տակ , քմահաճոյքը ունեցեր է խորտկացուցակը հայերէնի թարգմանելու , բան մը որ սեղանակիցներու թօնափին եկեր է եւ ճաշի միջոցին բաւական կատակարանութեան նիւթ հայթայթեր է :

Ճնձուն , անճնգիւր , ախորժելի ճաշ մը վերջապէս : Ծոխ ու առատ սեղան , քանի մը տեսակ գինի , բիլաֆ ու գէթիկեաղլը տրչնա : Անշուշտ երբ ճաշը աւարտեցաւ , տէրտէր ու վարդապետ , իրենց պարարտ փորը ծեծելով՝ «Փա՛ռք քեզ տէր» մը խանչեցին՝ ի խորոց սրտի : Անկեզծ , սրտաբուխ , շնորհակալու եւ երախտապարտ փառաբանութիւն մը փիլաֆի ու գինիի , գէթիկեաղլը տրչնայի ու աստայ յիւնաւի Աստուծոյն :

Նոյն օրը կը կարդայի ֆրանսական թերթի մը , «Սոսո»ի մէջ , հետեւեալ տողերը .

«Նորին կայսերական Վայրադութիւնը՝ Ապտիւլ Համիտ՝ զինաթափ չ՛ըլլար : Մեծ Մարդասպանը յամառութեամբ կը շարունակէ Փոքր Ասիոյ մէջ իր կառավարական ջարդերը :

«Ահաւասիկ վերջին ամսուն հաշուեցուցակը .

Յրոնքի մէջ , — Պիթլիզի վիլայէթ , — սուրիկաններն ու Համիտի Բիւրտերը , Սերոբ անուն բացակայ յեղափոխական մը փնտնելու պատրուակով , շատ մը մարդիկ մեռուցին ու հազարի չափ արջառ աւարի տուին : Յետոյ հինգ գիւղ այրեցին եւ Սուրբ-Աղբիկայ վանքը կործանեցին , վանահայրն ու երկու վարդապետներն սպաննելէ ետքը : Այս զինուորական շահատակութիւններէն ահաբեկած , ընակիչները լեռները ապաստանեցան :

«Մուշի մէջ՝ կոռի մը հետեւանքով՝ սասիկանները եւ Տաճիկները 800 հոգի ջարդեցին :

«Վանի մէջ կան այժմ 6000 որբ , 4000 այրի :

«Պիթլիս 1649 որբ , 782 այրի :
«Մուշ 6632 որբ , 3668 այրի :»

«Սուլթան Ապտիւլ Համիտ մարդկութիւնը անպատուող ամենէն գէշ զաղաններէն մէկն է : Այս եղածներէն աւելի ի՞նչ հրէշային ոճիւրներու կը սպասեն քաղաքակիրթ կոշուած պետութիւնները՝ զբպելու կամ սպանդանոց զրկելու համար այդ գազանը :»

..

Իրողութիւն է այս :

Հայաստանի մէջ վանքերը կը կործանեն , գեղերը կ'այրեն , գեղացիները կը ջարդեն , եւ Օրմանեան պատրիարք , այսօր Ս . Փրկիչ վաղը Առնաւուտ գեղ , միւս օր Բերա հացկերոյթի կը պարտի : Հայաստանի մէջ Թուրքերը հայ աղջիկները կը տաճկցնեն , Պոլիս Օրմանեան պատրիարք Էնկիւստ պաւստրիսն ու իւնալ պալլոյսին կը հայացնէ . անոնք մեր արիւնը կը խմեն , ասիկա անոնց օղին կը կոնծէ : Իրա՛ւ , սուլթանը զազան մըն է , բայց Օրմանեան պատրիարքն ալ խոզմը պարզապէս :

Փարիսեցի մը չեմ ու չեմ պահանջեր մեզ պատրիարքէն որ գլուխը մոխիր ցանէ , ծոմ բռնէ ու նստի լայ . բայց չեմ ներեր իրեն եւ ինծի հետ ո՛չ մէկ Հայ կը ներէ որ հալածանքի ու արիւնի այս օրերուն մէջ ա՛յս ասաի-

ճան մոռնայ իր ժողովրդագետի դիրքը , իր կրօնաւորի դիրքը , իր հայ մարդու դիրքը , եւ կերուխումի սղմուկին , պնակներու , պատառաքաղներու եւ դգալներու խշրտոցին , գինիի բաժակներու բաղխման շշնկոցին մէջ խեղդել փորձէ սովեալներու , մորթուածներու , բռտնաբարուածներու վախատուը , անէ՛՛ծքը . . .

* *

Այդ ճաշը պատահական դէպք մը չէ . երկուքուկէս տարուան պատրիարքական պաշտօնավարութիւնն է :

Մտիկ ըրէ՛ք նամակի մը սա տողերը զոր վերջերս Պոլսեցի մը գրած էր իր Բարիդի մէկ բարեկամին .

«Բոլոր հայ ընտանիքները գայթակղած են Օրմանեանի ընթացքէն : Բարով խէրով կաթովիկ մնար այս մարդը : Ո՛չ միայն ձեռքէն եկածը չ'ընէր Հայաստանի եւ Պոլսոյ հալածանքները քիչ մը մեղմացնելու համար , այլ կրնամ ըսել լռիկ համախօսը դարձած է Սուլթանին , ուրկէ դրամ ու պատուանշան կ'ընդունի ամէն առթիւ : Վերջերս ազգապետներէն ինքը առաջինը եղաւ պալատ գացող , շնորհաւորելու համար Սուլթանին մէկ ձագուկին թլփատութեան երջանկաբեր հանդէսը :»

«Կ'ուզե՞ս գաղափար մը ունենալ իր ներքին կեանքին վրայ : Ահա ինչ որ լսեցի իր տունը յաճախող անձէ մը : Ամէն իրիկուն պատրիարքարանէ դարձին՝ օղիի ափսէն պատրաստուած է սենեակին մէջ , տեսակ տեսակ ազանդերներով զարդարած : Անգամ մը որ խալփախն ու անպպին մէկ կողմ կը նետէ , կուգայ կը բազմի սեղանին գլուխը , ուր արդէն իրենց տեղերը գրաւած են Սրբազանին օղիի ընկերները . . . (*) ու խրատճանութիւնը կը սկսի : Կամաց կամաց գլուխները կը տաքնան , հոգ ու թախիժ կը փարատին , ճակտի կընձիւնները կ'անհետանան , զուարթ շունչ մը (Միթարիչ Հոգին Սուրբ՝ գուցէ) կը սաւառնի սեղանին վրայ , լեզուները կը բացուին ու սեղանին տակ ոտքերը կը շարժին՝ տաք հըպուսներէ գրգռուած :»

Այս պորձիական մանրանկարը առաջ չպիտի բերէի եթէ վստահ չըլլայի իր ճշգրտութեան մասին : Ինչ որ բարեկամս կարգաց ինձի՛ նոյնը լսած էի արդէն ուրիշ նամակներէ : Իրա՛ւ է որ Յիսուս ալ շատ մը Մարիամներէ

(*) Հոս թղթակիցը կը յիշէ երեք կիներու անուաններ , զորս զանց կ'ընեմ հրատարակել :

չըջապատուած էր , սակայն ի փոխարէն գոնէ Սաչին վրայ մեռնելու քաջութիւնը ունեցաւ եւ Պիղատոսին ու Կայիափային առջեւ դատամած , դատաքարչ չքծնեցաւ , ինչպէս Օրմանեան կ'ընէ Ապտիւլ Համիսին առջեւ :

Օրմանեանի մասին չէինք լսած , պատրիարքութենէն առաջ , թէ Տօն-Փուսնական հակումներ ունի , եւ կը կարծէինք որ , Ս . Պողոսին պէս , տեսակ մը դաշինք կնքած է՝ ընութեան հետ՝ չբորբոքելու համար : Սա ճըշմարիտ է որ Արմաշի վանահայր եղած միջոցին ըսուեցաւ թէ Աւետարանի «Թոյլ տուէք մանկանց գալ առ խոս»ը սխալ մեկնելով անպատեհ արարքներու մէջ ինկած էր , բայց այդ աստուածաբանական նուրբ հարցին սխալ մեկնութիւնը այնչա՛փ յաճախադէպ է կուսակերօններու քով որ երրորդ կարգի ներելի մեղք մը իսկ չենք համարիր զայն . . . կղերականներու համար :

* *

Արդեօք ծպտեալ գնոտիկե՞ան մըն է մեր պատրիարքը , Բասիլիտոսի կամ Վաղեստիոսի դպրոցէն ու «Մարմնոյն մարմնական պէտքեր , հոգւոյն հոգեկան պէտքեր» սկզբունքը կը դաւանի . եթէ այդպէս է , վա՛յ մեր գլուխին : Այս միջոցիս մանաւանդ՝ գնոտիկոսի մը ատենը չէր պատրիարքական գահին վրայ :

Օրմանեանի այս հեշտամուլ ու թրքամուլ տըրամպրութիւնները , միանալով իր Ֆիդիքաական թաթար-մոնկոլեան կազմուածքին , մեղ կը մղեն ենթադրել թէ Իզմիրլեանի յաջորդը գուցէ ծագումով հայ չըլլայ եւ երակներուն մէջ Ղեւոնդ երէցի մը կամ Ներսէսի մը արիւնէն աւելի Լէնկթիմուրի կամ Ճինկիզխանի արիւնն է որ կը հոսի : Թերեւս ասոր մէջն է գաղսնիքը այն անհարկի ու մեղապարտ փութկոտութեան որով Օրմանեան պատրիարք կը վազէ սուլթանին հողաթափները համբուրել ամէն անգամ որ նոր ջարդ մը կամ հալածանք մը տեղի կ'ունենայ Հայերուն դէմ :

Տօն-Փուսն , Գնոտիկոս կամ թաթար , Օրմանեան պատրիարք երբեք չի կրնար արգարանալ իր բռնած ուղղութեամբ :

Մենք կ'ըսենք իրեն՝ —Ա՛լ ամօթ է . Գուցէ ուրիշներ պիտի ըսեն՝ —Ա՛լ բաւական է :

ՎԱՀՐԱՄ

Բարիդ



ՊԷՇԻԿԹԱՆԵԱՆԷՆ ԷՋ ՄԸ

Հետեւեալ բանաստեղծութիւնը Պէշիկթաշլեանի երկասիրութեանց հատորին տպագրութենէն յետոյ բարեկամի մը քով գտնուած և 1872ի մայիսին «Մասիս»ի մէջ հրատարակուած է: Բարձր ու ազնուական ներշնչմամբ ու վեհաշուք ձևով էջ մըն է, ուր քերթողը կը խորհրդապատկերէ ազգային քնարին մոգութիւնը որ աւերակներուն մոխրին յէջէն կ'արթնցնէ հին դիւցազնական Հայաստանին ուրուականը և յոյսը ընդնշմարել կուտայ ապագայ մեծ գարթումներուն՝ Յիշատակին ցնցումին տակ: Կը հրատարակենք բնագիրը՝ աշխարհաբար թարգմանութեամբ մը:

Ք Ն Ա Ր Կ Ո Ւ Ս Ի Ն

Նըստէի ի մութ գիշեր ի բարձրագէտ բըլրոյն կասար,
 Եւ գուրուականս ամպոց յեթեր հիւսիս վարէր հալածական:
 Մերթ ընդ մերթ փայլասականք ցոլանային ի հանդիպոյ,
 Թըւէր ոգւոյն ամրոպաց ըզհրանըշոյլ սուր իւր ճօճել:
 Բազմահոյլք իսկ յիմ ճակատ տատանէին ծուփք խորհրդոց,
 Հայրենին իմ աշխարհ յիշատակօք արտասուելի
 Եւ ամենայն շիջեալ իւր Փառք կանգնեալ կային ինձ յանդիման,
 Եւ միտք իմ բարձրաթռիչ եղեալ արծույ հանդունատիպ
 Խոյանայր եւ թափառիկ շրջէր ի դաշտս Հայաստանու,
 Եւ դադարէր մօտ ի բըլուր գերեզմանաց իւր դիւցազանց:
 Անգ խիտ առ խիտ նոճեաց շարք ամբառնային նըսեմաստուեր,
 Եւ ուռնիք արտասուեալ որք սըզալից ոստքըն՝ վայրահակ
 Ո՛չ մի ձայն, ո՛չ մի շըշունչ, մահ եւ մըռայլ բազմին անդէն:
 Խուլ հրնչի՛ւն միայն հողմոց ընդ սօսափիւնս թաւուտ ոստոց
 Յօրինէին եղերերգ, թըւէր մեռեալ ոգւոց մըրմունջ,
 Կամ ողբոց ձայնակցութիւնք գերեզմանաց ի գերեզմանս:
 Եւ ահա բացան յանկարծ շիրիմքըն, վէմք թաւալեցան,
 Ի վե՛ր ընդոստեան հոյլք մեռելատիպ ուրուականաց՝
 Գիշերոյ որպէս հըսկայք՝ ի խորանիստ իւրեանց յայրէն,
 Աչս մեծամեծս ընդ չորս բոլոր շուրջանակի յածեցուցեալ,
 Աւազալի կերկեր հառաչ խոր ի սըրտից հեղձամըղձուկ
 Հընչեցուցին յամայնս առիւծատիպ որպէս մորնչիւն:
 «Ո՛հ, մի՛ աբխրիք, ո՛վ հեղինակք եւ փառք Հայոց աշխարհի,
 Մըռայլ ի վիհ ապագայից խոնարհեցէք հըսկայարար,
 Գալ առ ձեզ տեսչիք յայնժամ համատարած ըզձեր համբաւ
 Ի թեւս սըբարչաւ ժամանակացն ուղեւորեալ:
 Տեսչիք գանուան Ձեր արձագանք թըռուցիկ դար ի դարէ:»
 Քերթողուհի կոյսն էր Հայոց որ նըւագէր զայս քընարաւ,
 Կոյս զոր գեղ եւ փափկութիւն փայփայէին եւ զըզուէին,
 Ում աստղունք ըզչողն անբիծ եւ զփայլ իւրեանց շընորհեալ,
 Եւ ծողկունք ըզբոյր իւրեանց բոլոր նըմա տըւեալ պարգեւ,
 Եւ սոխակ գիշերախօս զիւր ըզձայնիկ հոգեզըւարձ,
 Ձի նազելի եւ զըզուելի էր կոյսն համայն անմահ բնութեան:
 Դարձեալ երգեաց, եւ յանկարծ երկնից մութ զէմք պայծառացան,
 Լոյս սըփոռեցաւ յանտարին, ի շող աստեղց փայլին նոճիք,
 Ձըւարթացան հըսկայքն Հայոց, ելին ի պար բոլորեցան,

Ի թիւդ ոտից կայթեցին վերայ վիճաց դամբանական :
Եւ կոյսն երգէր , եւ հրակայքն մըտին յիւրեանց ի քննարանն ,
Եւ քնարն անուշ փափուկ կուսին դեռ որորէ ըզքուն նոցա :

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ



ԿՈՅՍԻՆ ԲՆԱՐԸ

Մութ գիշերին մէջ բարձրագիւր բլրին կատարը նստեր էի . հիւսիսահողմը ամպերուն ուրուականները հալածական կը վարէր . մերթ ընդ մերթ դիմացէն փայլատակունքներ կը ցոլանային . կարծես թէ ամպրոպներու ոգին իր հըրանշոյլ սուրը կը ճօճէր . իսկ իմ ճակտիս վրայ մտածումունքներու բազմահոյլ ծփանքներ կը տատանէին . իմ հայրենի աշխարհս իր արտասուելի յիշատակներովը , եւ իր բոլոր մարած փառքը , դէմս կայնած էին . ու միտքս բարձրաթռիչ՝ արծիւ դարձած՝ կը խոյանար եւ թափառիկ կը շրջէր Հայաստանի գաշտերուն մէջ , անոր գիւցազներուն գերեզմանաբլրին մօտ կը դադարէր :


Հոն խիտ առ խիտ նոճիներու շարքեր նսեմասուներ կը բարձրանային . եւ արտասուածոր ուռենիներ՝ սգալից ոստերնին վայրահակ . ո՛չ մէկ ձայն , ո՛չ մէկ շշուշ , մահն ու խաւարը հոն կը բազմին . հովերուն խուլ հնչիւնը լսկ , թաւուտ ոստերուն սօսափուններուն հետ , եղբերդ մը կը յօրինէին , որ մեռած հոգիներուն մըմունջն էր կարծես , կամ գերեզմանէ գերեզման ողբադին ձայնակցութիւններ : Եւ ահա յանկարծ շիրիմները բացուեցան , վէմերը թաւալեցան , մեռելատիպ ուրուականներուն հոյլերը վեր ցատքեցին , գիշերուան հսկաներու պես՝ իւրաքանչիւրը իր այրէն ելլելով . մեծ մեծ աչուրնին իրենց չորս գին պտըտցնելով , հեղձաւ մղձուկ սրտերնէն աւաղալից կերկեր հպուսչներ հնչեցուցին ամայութիւններուն մէջ՝ առիւծի մունչիւններու նման :

Թ՛՛՛՛ , մի՛ տիրիք , ո՛վ հեղինակներ ու փառքեր Հայոց աշխարհին , ապագային մռայլ վիճին մէջ հսկայաբար խոնարհեցեք . այն ատեն պիտի տեսնէք որ ձեր համատարած համբաւը ձեզի կը դառնայ՝ ժամանակին սըրարչաւ թեւերուն վրայ ուղեւորելով . պիտի տեսնէք որ ձեր անունին արձագանքը դարե՛ դար կը թռչի :

Քերթողուհի կոյսն էր Հայոց որ քնարովը այս խօսքերը կ'երգէր , կոյսը զոր գեղեցկութիւնն ու փափկուածիւնը կը փայտայտէին ու կը շոյէին , որուն շնորհեցին ասագերն իրենց անբիծ շողն ու փայլը , եւ ծաղիկներն իրենց բոլոր բոյրը պարգև տուին , եւ գիշերախօս սոսակն իր հոգեղուարթ ձայնիկը , վասնզի կոյսը նազելի եւ գգուելի էր ամբողջ անմահ բնութեան համար :

Դարձեալ երգեց . յանկարծ երկնքին մութ գէմքը պայծառացաւ , լոյս ծաւալեցաւ անտառին մէջ , աստղերուն շողումէն նոճիները փայլեցան . Հայոց հսկաները դուարթացան , ելան պարի բուրուեցան , դամբանական վէմերուն վրայ ոտնատրոփ կայթեցին :

Եւ կոյսը կ'երգէր . եւ հսկաներն իրենց քնարանը մտան . եւ փափուկ կոյսին անուշ քնարը դեռ անոնց քունը կ'որորէ :



Բ Ր Ո Յ . Պ Ի Ի Խ Ն Է Ր .



Թերթերէն տեղեկացանք բրոֆ . Պիւխնէրի մահը : Ամէն անոնք որ քիչ շատ զբաղած են իմաստասիրական խնդիրներով , ծանօթ են այս անունին : Այն սերունդները որ կարգացած են իր գրութիւնները՝ կը յիշեն անշուշտ մտքերու մէջ յառաջ բերած այն արմատական յեղաշրջութիւնը որով կը քանդուէին հիմները կըրօնական դաստիարակութեան որ զարերու ընթացքին մէջ մինչեւ մեր մանկութեան օրերուն ժառանգաբար կը հասնէր : Իրողութիւն մըն է թէ Պիւխնէր եղաւ անոնցմէ որոնք աւանդէն աւելի նպաստեցին աւանդուածները առանց վիճաբանութեան , առանց քննութեան , կոյր հաւատքով ընդունելու եղանակին տեղ հաստատելու ազատ խորհրդածութեամբ , համոզումով եւ գիտակցութեամբ ընդունելու զբութիւնը : Իր «Ուժ եւ Նիւթ» գրքին Ֆրանս սերէն թարգմանութեան նոր սուպրոթեան մը հրատարակման առիթով , Ֆրանսացի գիտուն մը ըսած է , «Այս գրքին կը պարտիմ ինչ որ եմ» . կը կարծենք որ դեռ չատերը պիտի կարենային սոյն խոստովանութիւնը ընել . եւ մեզ ալ իր գրութեան ընթացումին յատկացուցած այն խանդավառ եւ կազդուրիչ ժամերուն յիշատակն է որ կը մզէ այս տողերը գրելու , եւ ասիկա կ'ընենք յարգանքի եւ երախտագիտութեան պարտականութիւն մը նկատելով գրեթէ : (*)

Բրոֆ . Լիւտվիկ Պիւխնէր , գերմանացի բժիշկ եւ Տարմշխառի համալսարանին ուսուցիչ , եղած է մեր դարուն իմաստասիրական նիւթապաշտ դպրոցին գրեթէ ամենէն կարեւոր ներկայացուցիչը : Ինքը մղած է Գերմանիոյ մէջ , պառոն տը Հոլպարտէն եւ Ֆուէրպարտէն ետքը , Մոլլէշտի , Քաուլ Ֆոկի , Հէյքէլի , եւ Վիրխովի հետ , կրօնական եւ հոգեպաշտ դաւանանքին դէմ ամենէն կատաղի պայքարը : Իր գործին մասնաւոր յատկութիւնն է՝ գրութեան եղանակին այն յանդգնութիւնը որ կը պակսի ուրիշներու գործին մէջ , նոյնպէս ուճին գեղեցկութիւնը որ այնքան հազուադէպ է գերմանացի իմաստասէրներուն քով , եւ ա-

(*) Տը Լիւտվիկ Պիւխնէր ծնած է Տարմշխառ (1824-1899) . Տր . Էռնէսթ Պիւխնէրի որդի , բժշկութիւն ուսում Միւրազպուրկի համալսարանը , Թուրինի հիւանդանոցին բժիշկ անուանուած է , վիրաօֆի հետ Journal Médico-légal աշխատակցելէ եւ բժշկական զանազան խնդիրներու վրայ ասենախօսութիւններ ըրած ըլլալէ զատ՝ իբր իմաստասէր իր գործերէն կը յիշուին Force et matiere, l'Homme selon la science, Lumiere et vie, Nature et Science, La vie psychique des betes. Tableaux psychologiques, Lyellի երկրաբանութեան գերմաներէն թարգմանութիւն մը եւ Conférences sur la théorie darwinienne, որ իր Միացեալ հասնագոց մէջ ըրած ասենախօսութիւններն են :

տիկա մասնաւորապէս նպաստած է Պիւխնէրի Ֆրանսացիներէն շատ սիրուելուն : Ինչ որ ուրիշներուն քով հազիւ կ'ընդունարուի , ոմանք իրենց մասնագիտական խրթնութիւններով ընդհանրութեան անմատչելի եւ ոմանք ալ ժամանակին տիրող դադափարները չվրդովելու զգուշութիւններով թեթեւօրէն անցած ըլլալուն համար , Պիւխնէրի գործին մէջ կը յստակի , կը շնչուի եւ կ'ընդլայնի : Իր յստակ , կորովի եւ յանդուգն կերպով ներկայացուած ամբողջութեանը շնորհիւ , Պիւխնէր կը հասունցնէ թէ՛ նախորդ դարերուն մէջ եւ թէ՛ այս դարուս սկիզբը զինքը կանխողներուն ըսկըսած ուղղութիւնը , եւ մասնաւոր իր գործին զիւրամատչելի ըլլալուն առաւելութեամբ՝ ամենէն աւելի կը յաջողի ազդել մտքերուն վրայ եւ ծնունդ տալ ազատ վիճաբանութեանց ու փոխադարձ յարձակումներու այն ասպարէզին ուր յառաջ եկած դադափարներուն բաղխումը դեռ կը շարունակուի երկու հազարակ հոսանքներու մէջ :

Պիւխնէրի իմաստասիրութիւնը ամենէն աւելի երեւան կուգայ իր համայնածանօթ «Ուժ եւ Նիւթ» անուն գրքին մէջ : Այս իմաստասիրութիւնը կ'ամփոփուի այս երկու բառերուն զուգաւորութեանը մէջ որոնցմով գիրքը անուանուած է . «Չկայ ուժ առանց նիւթի , չկայ նիւթ առանց ուժի» : Հեղինակը այս ճշմարտութիւնը ընդլայնելով կ'ըսէ թէ ուժը չէր կրնար նիւթը ստեղծել , որովհետեւ ուժը մինակ առանց նիւթին գոյութիւն չէր կրնար ունենալ նիւթը չէր կրնար ուժը ստեղծել , որովհետեւ նիւթը մինակը առանց ուժին չէր կրնար գոյութիւն ունենալ : Արդ այս երկու բաները իրարմէ կարելի չըլլալով բաժանել , մէկը առանց միւսին կարելի չէ ընդունիլ , որով երկուքն ալ ապրած են միշտ իրարմէ անբաժան : Ասոր եղբակացութիւնը կ'ըլլայ թէ այն տիեզերական ստեղծող եւ աննիւթական ուժը որ Աստուած կ'անուանուի՝ գոյութիւն չունի , վասնզի աննիւթական ուժ չ'ըլլար եւ այդ ուժը իր հետը եթէ նիւթ ունէր որպէսզի ուժ ըլլար , նիւթ ստեղծելու այլեւս պէտք չէր մնար , քանի որ այդ ուժը իր հետ արդէն նիւթ ունէր : Այսպէս ստեղծագործութիւն մը ընդունիլն ալ այնքան անկարեւոր կը դառնայ որքան անհնարին էր արդէն : Արդ , թէ՛ նիւթին եւ թէ՛ ուժին ստեղծագործութիւն մը ընդունիլը բացարձակապէս անհրեւակայելի ըլլալով , առոնց սկզբնաւորութիւն մը ընդունիլն ալ հաւատարապէս անեղբակայելի է . ամէն սկզբնաւորութիւն չունեցող բաներ վերջաւորութիւն մը ալ չեն կարող ունենալ . արդ երկուքն ալ , թէ՛ ուժը եւ թէ՛ նիւթը , յաւիտենական են , միշտ գոյութիւն ունեցած են եւ միշտ պիտի ունենան : Այս իմաստասիրութեամբ հոգեպաշտ ըմբռնումը իր հիմերէն կը տապալի : Գիտական ճշմարտութիւններէ միշտ մեկնելով , Պիւխնէր յաջորդաբար կ'անցնի բացաարել նիւթին եւ ուժին անջնջելութիւն

նը, նիւթին ձեւափոխութիւնը, շարժումը, երկնքին, հողագնախին եւ կենդանային գոյութեանց կազմութիւնը. կը խօսի ուղեղին եւ իմացականութեան, Աստուծոյ գաղափարին, բնածին գաղափարներու եւ կարգ մը զանազան բնազանցական խնդիրներու վրայ, որոնց եղբակացութիւնը կ'ըլլայ միշտ հոգեպաշտ իմաստասիրութեան հերքումը:

Այս գիրքը որ կը ներկայացնէ իր պաշտպանած իմաստասիրութեան վրայ գրուած գրքերուն մէջ ամենէն ամփոփ եւ կատարեալ ամբողջութիւնը, շատ մը տեսակէսներով կ'արժէ կարդալ եւ թարգմանուած է քաղաքակրթեալ ազգերու գրեթէ ամէն լեզուներով: Գրքին յառաջարանին մէջ նոյն իսկ հայերէն թարգմանութեան մը խօսքն ալ կայ, որուն հ'րը եւ ո'ւր հրատարակուած ըլլալը չենք գիտեր:

Պիւիսնէրի միւս գրութեանց գալով, կարելի է ըսել որ ժամանակակից ուրիշ նիւթապաշտ խորհողներու եւ գիտուններու հայեցողութեանց հանրախնայութեան եւ անոնք, ինչպէս իր Տարվինական սեսութեան վրայ գրած գիրքը, «Լոյս եւ Կեանքը» Անասուններու հոգեկան կեանքը»: «Բնութիւն եւ Գիտութիւն» տիտղոսով հատորները հաւաքածոյ մը կը կազմեն զանազան պարբերական հրատարակութեանց մէջ իրմէ երեւցած ուսումնասիրութիւններուն: Ասոնցմէ գուրս ունի դեռ գերմաներէն լեզուով ուրիշ աշխատասիրութիւններ, ինչպէս «Բնախօսական պատկերներ», եւն, որոնք օտար լեզուներու թարգմանուած չեն դեռ: Ասոնց ամենուն մէջ կը պահէ միշտ միեւնոյն իմաստասիրական ձգտումները, գիտական ճշմարտութիւններէն հեռացնելով իր եզրակացութիւնները՝ հասնելով փորձառական իմաստասիրութեան մը որ կերպով մը Օկիւսթ Գոնթի գրական փիլիսոփայութեան կը յանգի: Չունիսական Օկիւսթ Գոնթի եւ թէ ուղղակի կամ մօտաւորապէս իրեն հետեւներուն տեսակ մը վերապահումը, Անծանօթին այն խոռվքը զոր Սքէնսէր «Գիտական կրօնք» կ'անուանէ: Հակում մը ունի, եւ ասիկա շատ տիրական է, տեսնելու մարդկային մըտքին բարձրութիւնները միայն. եւ խոստովանելու է որ դուցէ ասիկա իր գործին տկար կողմն է: Իր «Ուժ եւ նիւթ»ին վերջին տպագրութեանը մէջ, ինչպէս իր «Գիտութիւն եւ Բնութիւն» գործին մէջ մասնաւոր գլուխով մը կը ջանայ ծաղրել Սքէնսէրի «Անծանօթ»ը: Ըստ Պիւիսնէրի իբրեւ թէ սա հոմանիշ է աստուածաբաններուն Աստուծոյն, մինչդեռ Սքէնսէր մարդկային ծանօթութեանց անխուսափելի կերպով յարաբերակալներէն կը հասնի այդ Անծանօթին, որ բացարձակն է: Պիւիսնէր մարգարէ կ'անուանէ զինքը, որովհետեւ Սքէնսէրի համար այս անծանօթը մարդկային մտքին դիմացը միշտ կանգնող անխուսափելի եւ անթափանցելի պատմըն է որուն ետեւը չպիտի կարենայ գիտնալ

երբեք թէ ինչ կայ պահուած: Սքէնսէրին Անծանօթը հերքելով, Պիւիսնէր տեսակ մը հակասութեան մէջ կ'իյնայ նոյն իսկ իր այն տողերուն հետ ուր կը գրէ «Մեր գիտութիւնը չի թափանցեր մինչեւ բնութեան խորը, եւ նիւթին բուն իսկական ուղին հաւանականաբար միշտ մեզի անշուշտ անլուծանելի խընդիր մը պիտի մնայ»: Կը կարծենք որ ասիկա ասելի արդիւնք է մասնաւորապէս իր քննադատի խառնուածքին քան իմաստասիրական դաւոյն. արդէն Լանկէի վկայութեամբ ալ (*) «Պիւիսնէր Գերմանիոյ մէջ ասելի հրապարակազիր քննադատի մը համբաւը կը վայելէ, մինչդեռ Անգլիոյ եւ Յոլանտայի մէջ ճշմարիտ փիլիսոփայ մը կը նկատուի»: Իրօք ալ իր գործերուն մէջ կը յայտնէ մանաւանդ քննադատական եւ հարուածող ոգի մը. նոյն քննադատը կ'աւելցնէ. «Լուրջ, անողորմելի եւ տրամաբանական է մանաւանդ ժխտումին մէջ. բայց այս շատ հզօր կերպով արտայայտուող ժխտումը բնաւ չոր եւ զուտ քննադատական ոգիի մը հետեւանք չէ, այլ արդիւնքն է յիշաւորապէս մարդկային յառաջադիմութեան մասին ունեցած խանդավառ մոլեռանդութեան: . . . »

Թէ Պիւիսնէրի պաշտպանած նիւթապաշտութեան տրամաբանական եւ բնական հետեւանքը կ'ըլլայ ընկերութեան մէջ ամէն բարոյականի ջնջումը եւ կը նպաստէ միայն անյագ համոզութիւններու զարգացմանը (ինչ որ եղած է նիւթապաշտութեան եւ մանաւանդ Պիւիսնէրի հակառակորդներուն մեծ մասին մըտածելու եղանակը) կարելի է ատոր լաւագոյն պատասխանը ստանալ կարդալով հեղինակին «Մարդը ըստ գիտութեան» անուն գործը. այդ գրքին առաջին երկու մասերուն մէջ Պիւիսնէր կը զբաղի մարդուն ծագումովը եւ իր ներկայ վիճակին քննութեամբը եւ ասիկա, իր տարվինականութեան վրայ գրած հատորին հետ, տարվինական բարեշրջութեան օրէնքին պարզում մըն է: Իսկ վերջին մասին մէջ ուր կը զբաղի մարդուն ապագայով, ցոյց կուտայ թէ մարդկութիւնը, իր մինչեւ ցարդ կատարած բնաշրջութեան մէջ գծած ուղղութենէն, ո'ւր կրնայ ձգտիլ, եւ ի՞նչ յառաջդիմութիւններ ընդունակ է կատարելու: Ամենագեղեցիկ եւ խորունկ հայեացքներ ունի արդի ընկերական յոռի կազմակերպութեան վրայ, կը բացատրէ թէ ինչպէս ներկայ մարդկութեան մէջ ամենէն ուժովը իրմէ տկարը ջնջելով, ամբողջ ընկերութիւնը կը տկարանայ ատով, եւ թէ փոխանակ իւրաքանչիւր անհատ իր վայելքը շատցնելու, իր կեանքը ապահովելու համար իրմէ տկարը ջնջելու. եթէ իր ուժերը միացնէր իրմէ տկարին, ուժերու բազմապատկութիւն մը առաջ կուգար. «այրելու պայքարին» եթէ «բնդհանուր կեանքի պայքար» մը յաջորդէր, եթէ մարդկութեան

(*)Lange — Histoire du Matérialisme.

լաւագոյն ուժերը մէկզմէկ ջնջելու չլաւանու-
 էին, կը ծնէր «ընդհանուր ներդաշնակու-
 թիւնը», «տիեզերական սէրը», «տիեզերա-
 կան ատելութեան» տեղ: Եւ դեռ քննելով
 արդի ընկերական դրութիւնը ու բազմա-
 տելով զայն Տարվինի գրած բնաշրջա-
 կան օրէնքին, Պիւխնէր կը ցուցնէ թէ
 այդ «կեանքի պայքար»էն փոխանակ հաս-
 նելու ազնուագոյն եւ լաւագոյն ուժե-
 րուն բնական լաւ ընտրութեան մը, արդի
 ընկերական վատ կազմակերպութիւնը կը հաս-
 ցընէ մեզ բոլորովին հակառակ արդիւնքի
 մը: Լաւագոյն ուժերն են այսօր որ ստի-
 պուած են վնասակար ուժերէն ընկճուելու եւ
 վնասակարներն են յաճախ որ կը յաղթանա-
 կեն: Այս ազնիւ մարդու եւ բարձր հոգիի աշ-
 խարհահայեցողութեանն է որ հասած է Պիւխ-
 նէրի խմաստասիրութիւնը: ասկից կը յայտ-
 նուի թէ ո՛րքան կշիռ ունին անբարոյակա-
 նութեան ամբաստանութիւնները: Եւ իր գըր-
 քերուն մէջ մէկ ծայրէն միւսը, իր բոլոր հա-
 կառակորդներուն հետ ունեցած վիճաբանու-
 թեանցը մէջ, ըսածին խորունկ համոզումը
 ունեցող, ստութեան եւ անարդարութեան
 դէմ բողոքողի, վեհանձն ու անկեղծ մարդու
 շեշտն է որ կը գտնուի: Բնութեամբ խանդա-
 վառ, ճշմարտութեան եւ գեղեցկութեան սի-
 րահար մըն է: Այս յատկութեանցը կը պար-
 տի Պիւխնէր իր վայելած ընդհանուր համակ-
 րանքը եւ այն տեղը գոր կը գրաւէ այս վեր-
 ջին կէս դարու շրջանին մարդկային մտաու-
 րական զարգացման պատմութեան մէջ:

Բարից

ՏԻԴՐԱՆ ԵՍՍՅԵԱՆ



Հ Ե Ր Ո Վ Դ Ի Ա

Բ

Շար. (*)



Արեւը խոյրերուն ծայրերը, սարերուն
 դաստագունսը կը փայլեցնէր, սալաքարերը
 ծայրայեղօրէն կը տաքցնէր, եւ աղաւնիներ,
 ծոփորներէն թռչելով, բակին վերեւ կը դարձ-
 դարձէին: Այն ժամն էր ուր սովորաբար Ման-
 նայի անոնց հատիկ կը ցանէր: Կկըզած կը

(*)Տես Անանիս, քիւ 1, 6—7, 8 .

մնար Չորրորդապետին առջեւ, որ ոտքի
 վրայ էր վիտելլիոսին մօտ: Գալիլեացիները,
 քահանաները, զինուորները ետեւէն շըր-
 ջանակ մը կը ձեւացնէին: ամենքը կը լռէին,
 պատահելիքին անձկութեամբ բռնուած:

Նախ մեծ հառաչանք մը լսուեցաւ, անձաւա-
 յին ձայնէ մը արձակուած:

Հերովդիա զայն լսեց պալատին միւս ծայ-
 րէն: Թովչութենէ մը յաղթահարուած, ամ-
 բոխը ճեղքեց անցաւ, ու մէկ ձեռքը Ման-
 նայիին ուսին դրած, մարմինը կիսա-
 հակ, մտիկ կ'ընէր:

Չայնը բարձրացաւ .

—Վա՛յ ձեզի, Փարիսեցիքու Սագուկեցիք,
 իժերո՛ւ ծնունդներ, ուռա՛ծ տիկեր, մեծա-
 ժըխո՛ր ծննդաներ:

Հասկցան որ Եւքանանի ձայնն էր: Անունը
 բ'ընէ բերան պտըտեցաւ: Ուրիշներ վազեցին
 եկան:

—Վա՛յ քեզի, ո՛վ ժողովուրդ, ու վա՛յ
 Յուդայի մատնիչներուն, Եփրայիմի գինով-
 ներուն, անոնց որ պարարտ հովիտը կը բը-
 նակին եւ գինիին ազգեցութեան տակ կը
 դանդաչեն:

«Թող ջնջուի՛ն ինչպէս ջուրը որ կը հոսի,
 ինչպէս կոխլանձը որ քալած ատենը կը հալի,
 ինչպէս կնոջ մը սաղմը որ արեւ չի տեսնար:

«Պէտք է որ դուն, մ'ովա՛ր, ճնճուկներուն
 եւ նոճիներուն մէջ ապաստանիս, կամ քա-
 բայրներուն մէջ ինչպէս ափրիկեան ճագար-
 ները: Բերդերու դռներն ընկուզի կեղեւէն ա-
 ւելի շուտ պիտի կոտորուին, պատերը պիտի
 փլչին, քաղաքները պիտի այրին, եւ Անմահին
 պատուհասը պիտի կանգ չառնէ: Ձեր անդամ-
 ները ձեր արիւնին մէջ պիտի տրորէ, ինչ-
 պէս բուրդը ներկարարի մը կարասին մէջ: Նոր
 ցաքանի մը պէս՝ ձեզ պիտի բզկտէ, ձեր մարմ-
 նոյն կտորուանքները լեռներուն վրայ պիտի
 թափէ:»

Ո՞ր աշխարհակալին կ'ակնարկէր: Վիտելլիո-
 սիո՞ն արգեօք: Հոովմայեցիք միայն կրնային այդ
 կոտորածը կատարել: Գանդատներ կը բարձրա-
 նային, «Հերի՛ք, հերի՛ք, թող լռէ՛:»

Ան շարունակեց, աւելի բարձրաձայն .

—Իրենց մօրը գիակին քով, երախաները
 մոխիրներուն վրայ պիտի քաշկոտուին: Ամէն
 մարդ պիտի երթայ իր հացը փնտռէ՝ փլատակ-
 ներու մէջէն, սրէ անցնիլ աչք առնելով: Շը-
 նագայլերն ոսկրոտիքները իրարու բերնէ պիտի

քաշեն հրապարակներուն վրայ , ուր ծերու-
նիներն իրիկունը կը խօսակցէին : Գու կոյսերդ,
արցունքնին կուլ տալով , քիթառ պիտի նը-
ւադեն օտարին խնջոյքներուն մէջ , եւ քու ա-
մենէն արի որդիներդ պիտի կքեն իրենց ող-
նայարը՝ ծանրածանր բեռներէն սկրդուած : «

Ժողովուրդը իր աքսորի օրերը կը յիշէր , իր
պատմութեան բոլոր ալեաքները : Հին մարգա-
րէներուն խօքերն էին : Եւքանան , մեծ հա-
րուածներու պէս , ետեւէ ետեւ կ'արձակէր
զանոնք :

Բայց ձայնը քաղցր , դաշն , երգեցիկ դար-
ձաւ : Կ'աւետէր աղատում մը , երկնքին մէջ
շողշողումներ , նորածինը՝ մէկ թեւը վիշապին
քարայրին մէջ , կաւին տեղ ոսկի , անապատը
վարդի պէս փթթած . — «Ինչ որ հիմա վաթ-
սուն քանքարի արժէքունի , դանկ մը պիտի
չարժէ : Կաթի աղբիւրներ պիտի բլխին ժայ-
ռերէն , ամէն մարդ՝ փորը կուշա՝ հնձաննե-
րուն մէջ պիտի քնանայ : Ե՞րբ պիտի գաս ,
դո՛ւն որուն կը սպասեմ : Առաջուց , բոլոր
ազդերը կ'երկրպագեն , եւ քու թագաւորու-
թիւնդ անվախձան պիտի ըլլայ , Դաւթի՝
որդի :

Չորրորդապետը ընկրկեցաւ , Դաւթի որդ-
ւոյն գոյութենէն վերաւորուած՝ ինչպէս ըս-
պանալիքէ մը :

Եւքանան զայն թշնամանեց իր թագաւո-
րութեանը համար , — «Անմահէն ուրիշ թագա-
ւոր չկայ» — եւ իր պարտէզներուն , արձաննե-
րուն , փղոսկրէ կահերուն համար , ինչպէս
ամբարիշտ Աքաբը :

Անտիպաս իր կուրծքն ի վար կախուած կը-
նիքին շղթայիկը փրցուց , ու զայն փոսին մէջ
նետեց , հրամայելով որ լռէ :

Չայնը պատասխանեց .

— Պիտի՛ պոռամ ինչպէս արջ մը , ինչպէս
վայրենի էջ մը , ինչպէս կին մը որ գաւակ
կը բերէ :

«Պատուհասը քու պղծութեանդ մէջն է ար-
դէն , Աստուած ջորիին ամուլութեանը կը գա-
սապարտէ քեզ : »

Ու ծիծաղներ բարձրացան , այիքներուն
ճողփիւնին հանգունակ :

Վիտելլիոս կը յամառէր դեռ կենալ : Թարգ-
մանը , անխոով շեշտով մը , Հռովմայեցուց
լեզուով կը կրկնէր բոլոր նախատինքները զոր
Եւքանան կը մոնչէր իր լեզուովը : Չորրոր-
դապետը եւ Հերովդիա ստիպուած էին զանոնք

երկու անգամ կրելու : Կը հեւար ան , մինչ
կինը՝ բերանարաց՝ հորին խորը կը նայէր :

Ահարկու մարդը գլուխը դէպ ետեւ նետեց,
եւ վանդակապատին ձողերը բռնելով , անոնց
փակցուց երեսը որ կը նմանէր մացառի մը ,
ուր երկու ամուխ կը վատէր :

— Ա՛ , դո՛ւն ես , Յեղարել :

«Անոր սիրտը գողցար ոսնամանիդ ճարձա-
տիւնովը : Զամբիկի պէս կը խխնջէիր : Ան-
կողինդ լեռներուն վրայ փոցցիր , քու պատա-
րագդ կատարելու համար :

«Տէրը պիտի խլէ դինդերդ , ծիրանիէ պատ-
մուճաններդ , վուշէ քողերդ , բազուկներուդ
օղակները , ոտքերուդ մատնիները , եւ
պզտիկ ոսկի մահիկները որ ճակտիդ վրայ
կը դողան , արծաթէ հայելիներդ , ջայ-
լամի փետուրէ հովահարներդ , սասափէ չը-
մուշկներդ որ հասակդ կը բարձրացնեն , ա-
զամանդներուդ հպարտութիւնը , մազերուդ
բուրմունքները , եղունգներուդ ներկուածքը ,
մեղկութեանդ բոլոր հնարքները . եւ գայլա-
խազները պիտի չբաւեն շնացող կինը քար-
կոծելու համար :

Հերովդիա աչքովն իր շուրջը պաշտպանու-
թիւն մը փնտռեց : Փարիսեցիները կեղծաւորա-
բար գետինը կը նայէին : Սազուկեցիները գը-
լուխնին անդին կը գարձընէին , վախնալով որ
Անթիիւկատոսը կը վերաւորեն : Անտիպաս
մահամերձ կ'երեւար :

Չայնը կը խոչորնար , կ'ընդլայնէր , կը
թաւալէր՝ որոտման հերձոտումներով , եւ ար-
ձագանգը լերան մէջ զայն կրկնելով , կը շան-
թահարէր Մաքերոսը բազմապատկուած պայ-
թումներով :

— Փոչիին մէջ պառկէ՛ , Բաբելոնի աղջիկ՛ կ :
Ալիւրաղա՛ : Գօ՞ւրդ քակէ՛ , մուճակդ հանէ՛ ,
փէշերդ վե՛ր առ , գետերը անցի՛ր , ամօթդ
երեւան պիտի ելլէ , խայտառակութիւնդ պիտի
տեսնուի , հեծեծանքներէդ ակոսներդ պիտի կո-
տրրտին : Յաւիտենականը քու ոճիրներուդ
գարչահոտութիւնը կ'ատէ : Անիծա՛ծ , անի-
ծա՛ծ : Եան պէս սատկէ՛ :

Վերնազուրը գոցուեցաւ , կափարիչը վար
խնկաւ : Մաննայի կ'ուզէր Եւքանանը խեղդել :

Հերովդիա անհետացաւ : Փարիսեցիները գայ-
թակղած էին : Անտիպաս , անոնց մէջտեղը ,
ինքզինքը կ'արգարացնէր :

— Անշուշա , յարեց Եղիազար , պէտք է որմարդ
իւր եղբօրը ամուսինը իրեն կնութեան առնէ ,
բայց Հերովդիա այրի չէր , եւ մանաւանդ թէ

զաւակ մըն ալ ունէր , ինչ որ գործին զարշի-
լիութիւնը կը կազմէր :

—Սխալ , սխալ , առարկեց Յովնաթ :
Սաղուկեցին , օրէնքը այսպիսի ամուսնու-
թիւններ կը դատապարտէ , բայց բացարձա-
կապէս չ'արգիլեր :

—Ինչ կ'ուզէ ըլլայ , կ'ըսէր Անտիպաս , շատ
անիրաւ են ինծի նկատմամբ . վերջապէս Ա-
բիսողոմ իր հօրը կ'նիկներուն հետ պառկեցաւ ,
Յուդա իր հարսին հետ , Ամոն իր քրոջը
հետ , Ղովտ իր աղջիկներուն հետ :

Աւելոս որ քնանալու գացած էր , այս միջո-
ցին երեւան ելաւ : Երբ խնդիրը բացատրեցին
իրեն , Չորրորդապետին վարմունքին հաւանու-
թիւն յայտնեց : Այդպիսի անմիտ բաներու
համար մարդ նեղութիւն քաշելու չէր : Ու
կուշտուկուռ կը խնդար քահանաներուն պար-
սաւին ու Եւքանանին կատաղութեանը վրայ :

Հերովդիա , զոնառաջքին մէջտեղը , անոր
կողմը դարձաւ :

—Յը սխալիս , տէ՛ր : Ժողովրդին կը հրա-
մայէ որ մերժեն հարկ վճարել :

—Իրա՞ւ , հարցուց իսկոյն Հարկահանը :

Պատասխանները ընդհանրապէս հաստատա-
կան եղան : Չորրորդապետը հարկերը բազմա-
պատկած էր :

Վիտելլիոս մտածեց թէ բանտարկեալը կրնար
փախչիլ . եւ որովհետեւ Անտիպասի ընթացքը
կասկածելի կը թուէր իրեն , պահակներ կե-
ցուց զոններուն առջեւ , պատերուն տակ եւ
բակին մէջ :

Յետոյ գէպ ի իրեն յատկացուած սենեակները
ուղղուեցաւ : Քահանաներու պատգամաւորու-
թիւնը իրեն ընկերացաւ :

Առանց պատարագչութեան խնդրոյն դպչելու ,
իւրաքանչիւրը իր գանգատները կը յայտնէր :

Գլուխը կը տանէին : Ամենքը ճամբու դրաւ :

Յովնաթաս կը բաժնուէր իրմէ , երբ ասա-
մունքի մը մէջ նշմարեց Անտիպասը որ կը
խօսէր երկայն մազերով ու ձերմակ պատմու-
ճանով մարդու մը , Նսենացիի մը հետ : Ու
զղջաց զանի պաշտպանած ըլլալուն :

Աորհրդածուլթիւն մը Չորրորդապետը մխի-
թարած էր : Եւքանան այլեւս իրմէ կախում
չունէր . Հոովմայեցիները անոր գործը վրանին
կ'առնէին : Ի՛նչ թեթեւացում : Փանուէլ այդ
պահուն կը պտըտէր պահպանութեան ճամ-
բուն վրայ :

Կանչեց զայն , եւ զինուորները ցոյց
տալով ,

—Աստուք մենէ ուժով են . չեմ կրնար ասոնց
ձեռքէն ազատել , յանցանքը իմս չէ :

Բակը մարդ չէր մնացած : Սարուկները հանգ-
չելու գացած էին : Երկնքին կարմութեանը
վրայ , որ հորիզոնը կը բոցավառէր , ամենէն
փոքր ուղղաձիգ առարկաները սեւ կ'երեւա-
յին : Անտիպաս որոշ տեսաւ աղարանները՝
Մեռեալ Մովուն միւս ծայրը , բայց Արաբներու
վրանները չնշմարեց : Մեկնա՞ծ էին :
Լուսինը կը բարձրանար : Հանդարտացում մը
կ'իջնէր սրտին մէջ :

Փանուէլ , յուսաբեկ , կը մնար՝ դունչը
կուրծքին վրայ : Վերջապէս , յայտնեց ինչ որ
ունէր ըսելու :

Ամսուն սկիզբէն ի վեր , արշալոյսէն առաջ
երկինքը կը զննէր , այն պահուն ուր Պերսէ-
ոս համաստեղութիւնը Չենիթը կը գանուի :
Ազալա հաղիւ կ'երեւնար , Ալգոլ նուազ կը
փայլէր , Միրա-Պետի անհետացած էր . ատ-
կից կը դուշակէր թէ այդ գիշերն իսկ Մա-
քեթոսի մէջ ամենակարեւոր մարդ մը պիտի
մեռնէր :

Ո՞վ պիտի ըլլար այդմարդը : Վիտելլիոս չա-
փազանց ազէկ պաշարուած էր , Եւքանանը պիտի
չզլխատէին : «Ուրեմն ես եմ» , մտածեց Չոր-
րորդապետը :

Թերեւս Արաբները պիտի դառնային : Անթի-
հիւպատոսը պիտի իմանար Պարթեւներուն
հետ իր ունեցած յարաբերութիւնները : Երու-
սաղէմացի սիկարեաններ քահանաներուն հետն
ի վեր կ'երթային . իրենց զգեստներուն տակ
դաշոյններ ունէին . եւ Չորրորդապետը Փա-
նուէլի գիտութեան վրայ չէր տարակուսեր :

Մտածեց Հերովդիային դիմել : Կ'ատէր զայն ,
բայց ան կրնար սիրտ տալ իրեն . եւ բոլոր
կապերը խզուած չէին այն կախարդանքին
զոր ատենով կրած էր :

Երբ անոր սենեակը մտաւ , պորփիւրէ աւա-
զանի մը վրայ կիւնամոն կը մխար . եւ փոշի-
ներ , օծանելիքներ , ամպի նմանող կերպաս-
ներ , փետուրէ աւելի թեթեւ աղնապորժու-
թիւններ ցրցքնուած էին այնտեղ :

Փանուէլի գուշակութիւնը չըսաւ , ոչ ալ
Հրեաներէն ու Արաբներէն զգացած վախը :
Հերովդիա զինքը վատ պիտի համարէր : Հոով-
մայեցուց խօսքը ըրաւ միայն . Վիտելլիոս
զինուորական ծրագիրներէն ոչինչ վստահած էր

իրեն : Կ'ենթադրէր թէ անի բարեկամ է Կայրոսին որուն հետ Ագրիպաս յաճախ կը տեսնուէր : Աքսոր պիտի զրկէին զինքը , կամ թերեւս խողխողէին :

Հերովդիա , արհամարհոտ ներողամտութեամբ մը , ջանաց զանի ապահովել . վերջապէս փոքր արկղէ մը տարօրինակ մետայլ մը հանեց , Տիբերիոսի կիսագէմքովը զարգարուած : Ատի կը բաւէր սակրաւորները գունատեցնելու եւ ամբաստանութիւնները հալեցնելու :

Անտիպաս , երախտագիտութենէն յուզուած , հարցուց թէ ինչպէս ձեռք անցուցած էր :

—Տուին ինձի , վրայ բերաւ Հերովդիա :

Դիմացը , վարագուրակի մը ներքեւ , մերկ բազուկ մը երկնցաւ , մատղաշ բազուկ մը , սիրուն , եւ կարծես Պոլիկլետի ձեռքով փղոսկրի մէջ ճախարակուած : Քիչ մը անճարակ , բայց շնորհալի ձեւով մը օդին մէջ կը թեւձակէր , պատին մօտ մոռցուած շապիկ մը ափելու համար :

Պառաւ կին մը վարագոյրը կէս բացաւ ու կամաց մը շապիկը ներս սահեցուց :

Չորրորդապետը վերյուշում մը ունեցաւ , զոր չկրցաւ ճշդել :

—Քո՞ւկդ է այդ սարկուհին :

—Քեզի՞ ինչ , պատասխանեց Հերովդիա :

Գ

Կոչնականները սրահը կը լեցընէին :

Սրահը , մայր-եկեղեցիի մը պէս , երեք թեւ ունէր , զոր իրարմէ կը բաժնէին ալգուամիմի փայտէ սիւներ՝ քանդակազարդ պոստիկ խոյակներով : Անոնց վրայ կը յենուէին երկու վանդակապատ ճեմելիքներ , եւ երրորդ մը , ոսկի հիւսկէնէ , կը կորնթարդանար խորը , ահագին կամարի մը զիմացը՝ որ միւս ծայրը կը բացուէր :

Բազմաստեղնեան աշտանակներ ընդունարանին ամբողջ երկայնութեամբը շարուած սեղաններուն վրայ բացալատ , հրեղէն մացառներ կը ձեւացնէին՝ ներկուած հողէ բաժակներուն ու պղնձէ պնակներուն , ձիւնի կիւբիկոններուն , խաղողի զիզուածքներուն մէջ տեղը . բայց այդ կարմիր պայծառութիւնները աստիճանաբար կը կորսուէին՝ ձեղունին բարձրութեանը պատճառով , եւ լուսաւոր կէտեր կը փայլէին , ինչպէս աստղեր՝ գիշերը՝ ոստերու մէջ տեղուանքէն : Պատին մեծ բացուածքէն , տուներու տամալիներուն վրայ

ջահեր կը նշմարուէին . որովհետեւ Անտիպաս կը տօնաւորէր իր բարեկամները , իր ժողովուրդը , եւ ամէն անոնք որ ներկայացած էին :

Ստրուկներ , շան պէս աշխոյժ , ոտուընին թաղիքէ սանդալներանցուցած , կ'երթեւեկէին , սկուտեղներ բերելով :

Անթիւպատոսին սեղանը , ոսկեզօծ վերնատունին տակ , զետեղուած էր ժանտաթղենիէ տախտակներով ձեւացած բարձրաւանդակի մը վրայ : Բարեւոնի գորգեր զայն կը շրջափակէին տեսակ մը վրանի մէջ :

Երեք փղոսկրէ անկողին , մէկը զիմացը եւ երկուքը քովերը , իրենց վրայ կը կրէին Վիտելլիոսը , անոր որդին , եւ Անտիպասը . Անթիւպատոսը զրան մօտ էր , ձախ կողմը , Աւլոս՝ աջ կողմը , Չորրորդապետը՝ մէջտեղը :

Ունէր ծանր սեւ վերարկու մը , որուն հիւսուածքը կ'անհետանար գոյնզգոյն վերադրութեանց տակ , երեսները շպարած էր , մօրուքը հողմահարածեւ կտրած , ու երկնագոյն փոշի ցանած՝ մազերուն մէջ որոնք ալանակուած ամակալով մը կը սեղմուէին : Վիտելլիոս պահեր էր իր ծիրանի ուսընդանութը , որ շեղակի կ'իջնէր վուշէ պարեգօտի մը վրայ : Աւլոս իր արծաթաճամուկ մանիշակագոյն մետաքսէ պատմուճանին թեզանիքները կ'ունակը կապել տուած էր : Մազերուն պարոյրները յարկ յարկ կը ձեւացնէին , եւ շափիւղայ մանեակ մը կը շողար կնկան լանջքի պէս մտտ ու ճերմակ կուրծքն ի վար : Քովը , փսիաթի մը վրայ՝ ծալապատիկ կը նստէր շատ գեղեցիկ տղայ մը , որ միշտ կը ժպտէր : Խոհանոցներուն մէջ տեսեր էր զայն , եւ ա՛լ չէր կրնար անկից զատուիլ . ու գժուարութիւն կը լիով անոր քաղաքական անունը միտքը պահելու , պարզապէս «Ասիացի» կ'անուանէր զայն : Մերթընդ մերթ , ետընկողմանոցին վրայ կը փռուէր : Այն ատեն իր բոպիկ ոտքերը կոչնականներուն զլխուն կը ցցուէին :

ԿԻՒՍԹԱՎ ՖԼՈՊԷՌ

(Շարունակելի)



Միս-մինակ , անխօսուկ , աչուրները մարած ,
 Տըժգոյն ճամբուն մէջէն , Մահը կ'անցնի կ'երթայ .
 Մազերն հովուն կուլան , ու ձեռքը՝ կիսաբաց՝
 Խաշխաշներ կը թօթվէ յոգնած կեանքին վրայ :

ՏԵՐՎԻՇ

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

Մարդկային մտքի եւ ոգու արտայայտութիւնները՝ գիտական ուսումնասիրութեան նիւթ դառնալիս՝ տարբեր ժամանակներում ուղղութիւնների տարբեր շրջանով են անցել : Բայց մի աչքի ընկնող եւ որոշ չափով հասկանալի հետեւողականութեամբ այդ արտայայտութիւնները եւ կամ նրանցից առաջացած որոշ համախմբումները որքան բարդ են եղել ըստ էութեան , որքան խորհրդաւոր եւ հոգեբանօրէն դժուարըմբռնելի , նրանց բացատրութիւնն էլ փոխադարձաբար նոյնքան մութ , նոյնքան երբուն է եղել , դրական հիմքերից միանգամայն հեռու , միստիքական անթափանցիկ քողով շղարշուած կամ բնազանցական անսանձ մտքի մոայլ շերտերով խտացած : Արեւելեան եւ արեւմտեան համարեա բոլոր ազգերի քաղաքակրթական զարգացման երկարաձիգ ընթացքում նկատելի է այս բնորոշ գիծը , որին անխտիր կարելի է հետեւել ոչ միայն բնագիտական ըմբռնման մանկական շրջաններում , այլ եւ այն հասկացողութիւնների ամբողջութեան մէջ , որոնք պարտում են կրօնի , բարոյականութեան , իրաւունքի եւ գեղարուեստի շուրջը :

Այնտեղ ուր քննութեան եւ շրջանկատ հետազօտութեան փոխարէն տիրում է միայն վառ եւ սրընթաց երեւակայութիւնը , վերլուծման փոխարէն՝ վերացական մտքի թռիչքը եւ բնազանցական ընդհանրացումների տեսչը , յիշատի անբնական կը լինէր մի ուրիշ հետեւանք սպասել :

Բնազանցութեան յատկանշական գծերից մէկն է անենազիտութիւնը՝ Մինչդեռ գի-

տութիւնը որ եւ է բարդ եւ առժամանակ անլուծելի մի երեւոյթի առաջ կանգ առնելիս , ըմբռնելու եւ հասկանալու ծարաւով պապակում է եւ միւս կողմից համեստութեամբ խոստովանում է՝ Չգիտեմ , բնազանցութիւնը մի յաւակնոտ ինքնավստահութեամբ ճգնում է մանրակրկիտ երեւոյթների ամենակնճոռոցանցը պարզել , տիեզերքի ամենախոր դաղանիքը լուծել : Ոչ մի առեղծուած , ոչ մի խորհրդաւորութիւն նրա համար գոյութիւն չունին . կամ թէ ծայրայեղ դէպքում՝ իւրաքանչիւր առեղծուածի հետ կարծես նրան շնորհուած է լինում եւ ամենազօր բանալին . բաւական է մտքի մի յանդուգն եւ կամայական շարժում , եւ ահա գորտեան ամէն մի հանգոյց անհետացած է նրա համար :

Մի սրամիտ եւ վերին աստիճանի յաջող արտայայտութեամբ՝ Սէն-Սիմոնը գնում է մեր առաջ բնազանցութեան ամբողջ կորիզը . «բնազանցութիւնը տարբերում է գիտութիւնից նրանով , որ նա ձգտում է ամեն ինչ նախատեսել՝ առանց սակայն դեռ մի բան տեսած լինելու , այնինչ գիտութիւնը նախ տեսնում է եւ ապա նախատեսում :»

Բնազանցութեան եւ առհասարակ վերացական մէթոտի տիրապետութիւնը ուժեղ կերպով նկատելի է ինչպէս բարոյագիտութեան նոյնպէս եւ էսթետիկի սահմանում : Այս մեթոտի գլխաւոր յատկութիւնն է՝ փոխանակ հոգեբանական վերլուծութեան—որը ներկայփորձնական ուղղութեան հիմնաքարն է կազմում— մի քանի բարձրագոյն գաղափարներից առաջացնել էսթետիքական այս կամ այն գաղափարը . օր . «գեղեցկի» գաղափարից «ողբերգականի» կամ «կատակերգականի» գաղափարը , եւն :

Հանձարեղ Քանթը իւր «կրիտիցիզմ»ով ուրոշեց վերջապէս «զուտ բանականութեան» սահմանը եւ գրանով մի ջախջախիչ հարուած հասցրեց «ամենագէտ» բնագիտութեան հիմքերին, որի փլատակներէց սակայն ապագայում նոր ծիրեր արձակեցան եւ գուցէ կ'արձակեն զեռ երկար :

Գեղարուեստի փիլիսոփայութեան տեսակէտից Քանթի գլխաւոր արժանիքներից մէկը կայանում է նրանում, որ նա իւր Kritik der urtheilskraft աշխատութեամբ «գեղեցիկ»ի գաղափարը հետեւաբար եւ էսթետիկը ինքնուրոյն հիմքերի վրայ դրեց : Նրանից առաջ թէեւ աղօտ կերպով արդէն գտնուած էր այս ինքնուրուենութեան հողը, բայց սխտեմական մշակումը զեռ պակասում էր, որը եւ գլուխ բերեց Քանթը :

Նա այսպէս թէ այնպէս թէեւ թօթափեց րուցիոնալիզմի հիմքերը, բայց պէտք է նկատել որ յայտնի չափով ինքը միաց դարձեալ նրա փոշիների տակ (*)

Այսպէս ուրեմն սկսենք այն հարցից թէ ինչու մն է կայանում էսթետիկական հայեացքի առանձնայատկութիւնը : Այս առիթով բազմատեսակ կարծիքներ են արտայայտելի : ոմանք էսթետիկական ըմբռնումը նոյնացրել են տւրամաբանականին, իսկ ոմանք բարոյականին, եւ այսպէսով նրան տուել են միայն երկրորդական, ինքնուրուենութիւնից զուրկ մի դիրք : օր, Պլատոնի էսթետիկը ուրիշ բան չէ, բայց եթէ «գեղեցիկ բարոյականութիւն» : նա գեղարուեստական երկի յառաջ բերած խաբէութիւնը ընդունում է իբրեւ իսկական խաբէութիւն : բայց որովհետեւ այս տեսակ խաբէութիւնը ցած է եւ մերժելի, հետեւաբար, նրա կարծիքով գեղարուեստագէտներին պէտք էր պետութեան մէջ նոյնպէս ցած տեղ տալ : Այս պատճառով ահա, «գեղեցիկ»ը, ըստ Պլատոնի, դառնում է «բարի»ի ծառան : Կորնէյլի եւ Բուալոյի համոզմունքով գեղարուեստը նոյնպէս բարիին ծառայող մի միջոց է : համարեալ նոյնն են մտածում Բրակին եւ Տալ-

(*) Նա պահանջում է «գեղեցիկ»ի անպայման ներդաշնակութիւնը «բարի»ի հետ, — «եթէ միայն գեղեցիկը արժանաւոր մի բան է ուզում ներկայացնել :» Թէեւ զարմանալի է, որ նա միւս կողմից Շիլլէրի հետ միասին դէմ էր Գոտշէտի էսթետիկական դաւանանքին՝ գեղարուեստը չարլոնական բարոյականութեան ծառայեցնելու :

ստոյը, որի մասին կը խօսինք զեռ յետոյ : Նոյնիսկ այնպիսի մի հեղինակաւոր եւ նրբամիտ էսթետիկագէտ ինչպիսին Ֆոլկէլտն է (Պրոֆեսոր . Լապցիգի համալսարանում) ազատ չէ այս կարծիքից : «բարոյականը գեղարուեստական գործունէութեան բարձրագոյն աստիճանն է» : «գեղարուեստի վերջնական նպատակն է մարդկութիւնը զէպ ի բարին առաջնորդել » —սուտ է նա իր աշխատութիւններից մէկում (Aesthetische Zeitfragen) :

Այսպիսի վարդապետական ոտնձգումներ էսթետիկի սահմանում՝ հառկանալի է որ վերջինիս ինքնուրոյն նշանակութիւնը միանգամայն անգամահատում են : էսթետիկը մի փորձնական գիտութիւն է եւ ոչ դաւանաբանական, եւ նրա նպատակն է ցոյց տալ գեղարուեստական առարկաները եւ երեւոյթները այնպէս ինչպէս ցանկալի էր որ լինէին :

էսթետիկական ըմբռնումի ինքնուրուենութիւնը փրկելու համար՝ շատերը էսթետիկականը միայն ձեռի մէջ փնտոցին : բարոյական եւ տրամաբանական ըմբռնումով ձեռք բերուած նիւթը իւր ինքնուրոյն գրոշմն ստանում է միայն ձեռի միջոցով : Բացի այս առարկայական հիմքից (որովհետեւ ձեռը մի առարկայական երեւոյթ է՝ իրերին յատուկ) վերջերս էսթետիկական ըմբռնումին փորձում են աւելի անհատական բնաւորութիւն ունեցող հիմքեր ընծայել : էլստըր իւր Principien der Litteraturmissenschaft գործումնկատում է որ էսթետիկական ըմբռնման հիմքն է «զգացմունքներով յառաջացում»ը : Այն դերը ինչ որ տրամաբանական եւ բարոյական ըմբռնումների տեսակէտից կատարում են միտքը եւ կամքը—նոյնը կատարում է եւ զգացմունքը՝ էսթետիկականի նկատմամբ(*) : Այս կարծիքը—փոքր ինչ տարբերելով էլստըրից—պաշտպանում է եւ Մ Դից իւր Theorie des gefühls

(*) Օր ., Շիլլէրի կարծիքով գեղարուեստական երկում «ձեռք» առաջնակարգ տեղն է բռնում, իսկ բովանդակութիւնը՝ երկրորդական, եւ արուեստագէտ վարպետի գաղտնիքը կայանում է նրանում, որ նա նիւթը բովանդակութեան ձեռով ծածկել կարողանայ : Շիլլէրը «ձեռի» տակ չէ հասկանում յայտնի գլուխներ առաջացնող արտաքին երեւոյթների ինչպէս՝ օրինակ՝ համակարգութիւն, չափ, շեշտ, եւն. այլ գեղարուեստական ստեղծագործութեան կերպն ընդհանրապէս (այն ինչ որ նորագոյն էսթետիկագէտները «գեղարուեստական պատրանք» (illusion) են համարում :

zur Begründung der Aesthetik գրուած քում :

Այս ընդհանուր ակնարկին վերջ տալուց եւ բուն խնդրին անցնելուց առաջ՝ աւելորդ չենք համարում առաջ բերել այն յաջող եւ շօշափելի համեմատութիւնը , որ անում է Մ . Դէսսուառը գիտութեան եւ գեղարուեստի մէջ . «Կեանքը , ստում է նա , անմիջական իրականութիւն է . գիտութիւնը եւ գեղարուեստը իսկապէս ձգտում են թէեւ դէպի այդ իրականութիւնը , բայց միմեանցից բոլորովին տարբեր ճանապարհներով : Գիտութիւնը իրական կեանքի տպաւորութիւնները դարձնում է ճանաչելի , իսկ գեղարուեստը՝ վայելելու , ճաշակելու արժանի : Այս պատճառով մի տեղ տիրում է բանականութիւն , առարկայացում , պատճառականութիւն եւ անհրաժեշտութիւն , իսկ միւս տեղը՝ զգայականութիւն , անհատականութիւն , նպատակայարմարութիւն եւ ազատութիւն . մի տեղ մշակուած գաղափարների , իսկ միւս տեղը պատկերների համախմբում : Գիտութեան գիրքը դէպի բնութիւնը կարծես ստրկական է . այնինչ արուեստին՝ աւելի տիրական . մէկը կարծես ասում է . «այսպէս է» , — այնինչ միւսը՝ «այսպէս կամենում եմ ես» : (*)

Էսթէտիկական նոյնիսկ ամենատարրական ճաշակով օժտուած մի անհատ գեղարուեստական տարբեր ստեղծագործութիւններ , — երաժշտական թէ թատերական , նկարչական թէ բանաստեղծական , եւն , — նկատելիս՝ զգում է որ համարեա բոլորը միանում են մի ներքին օղակով . նա ակամայ զալիս է այն եզրակացութեան թէ կայ ինչ որ մի գիծ , որ գեղարուեստի բոլոր ճիւղերի համար կարծես կեդրոնական է , եւ որը հարկադրում է ընդունիլ հոգեկան գործունէութեան մի նոյնութիւն այս բոլոր ճիւղերի մէջ : Բայց այս «ինչ որ» ի մասին նասկզբում իրան կատարելապէս հաշիւ տալ չէ կարող , դժուարանում է պարզ եւ շօշափելի կերպով ձեւակերպել :

(*) Այս վերջին խօսքերը թող ընթերցողին թիւրիմացութեան չեն թարկեն . այն ազատութիւնը , որի մասին Դէսսուառն ակնարկում է , այսպէս թէ այնպէս սահմանափակ է եւ գոութիւն ունի միայն գեղարուեստի այսինքն գեղարուեստական բուն ստեղծագործութիւնների մէջ , իսկ գեղարուեստի փիլիսոփայութեան , էսթէտիկի սահմանում՝ երբե՛ք :

Էսթէտիկական իրականութիւնը ամենահին ժամանակներից այս «ինչ որ» ի , գեղարուեստի այս ընդհանուր նշանի՝ անունը մկրտել է «գեղեցիկ» բառով : Եւ հին էսթէտիկագէտների կարծիքով գեղարուեստը «գեղեցիկ»ը պատկերացնելու արուեստն էր , ինչպէս եւ էսթէտիկն առհասարակ ուրիշ բան չէր , բայց եթէ ուսումը գեղեցիկի մասին (*) : Իսկ թէ ինչ բան է «գեղեցիկ»ը , — այս մասին տրւած են շատ թեր ու դէմ եւ երբեմն կամայական սահմանումներ . ոմանք գեղեցիկը փնտոել են գաղափարական կատարելութեան , ոմանք զգայական հաճոյքի , ոմանք ձեւերի համակարգութեան մէջ , եւն : Բայց եւ այնպէս գեղարուեստի էութիւնը սրանով ամբողջովին չէ պարզւել : Չին էսթիտիկագէտների միակողմանիութիւնը կայանում է նրանում , որ «էսթէտիկական»ը եւ «գեղեցիկ»ը նրանք նոյնանիշ են համարել , այնինչ նոր ըմբռնումով այս երկու գաղափարները տարբերում են միմեանցից : Գիզէնի համալսարանի Պրոֆեսոր Կ . Գրոզը այս գաղափարները հետեւեալ ձեւակերպութեամբ է զանազանում . «Որ եւ է առարկայի ազդեցիկ տեսքը կամ երեւոյթը եւրեսիկական է . իսկ եթէ այդ տեսքը կամ երեւոյթը զգայալիս համեմատ է , այն ժամանակ նա դառնում է գեղեցիկ : «Այնպէս որ այն ամենը ինչ որ գեղեցիկ է , միեւնոյն ժամանակ կարող է եւ էսթէտիկական լինիլ , բայց ո՛չ այն ամենը ինչ որ էսթէտիկական է՝ գեղեցիկ : Մի Մֆիկատոֆէլ , մի Եազօ , մի Մակբեթ , մի Յրանց-Մօր էսթէտիկական տիպարներ են — բայց գեղեցիկ՝ երբե՛ք : Ուրեմն այնտեղ , ուր գեղեցիկը բացակայում է , դարձեալ կարող ենք էսթէտիկական որ եւ է ազդեցութիւնից խօսել :

Շատերը դժուարանում են , «զգայապէս հաճելին» իբրեւ գեղեցիկ բնորոշ հիմքը ճանաչել , երկիւղ կրելով որ զրանով կը նսեմանայ գեղեցիկի ամբողջ արժանիքը եւ իդէալականութիւնը . այն մաքուր զգացմունքը , այն ազնուացող էութիւնը , որ յատուկ է գեղեց-

(*) Այս հասկացողութեան հիման վրայ է որ «էսթետիկ» բառը հայերէնում թարգմանուած է «գեղեցկագիտութիւն» կամ «գեղագիտութիւն» , որը մեր կարծիքով սխալ է , որովհետեւ՝ ինչպէս յետոյ կը տեսնենք՝ էսթետիկական» եւ «գեղեցիկի» գաղափարները տարբերում են միմեանցից :

կին՝ նրանք չեն ուզում զգայապէս հաճելի ցած մակերեւոյթին իջեցնել, օր . . մի տապա- կած մտի համին ու հոսին հաւասարեցնել : Կրօնը այս առիթով նկատում է . «Երբ էսթե- տիկականի եւ ոչ-էսթետիկականի մէջ եղած տարբերութիւնը որոշուած է , այն ժամանակ որոշ է նաեւ զգալապէս հաճելիի եւ գեղեցիկի մէջ եղած նուրբ տարբերութիւնը : Գեղեցիկը չէ ստորանում եւ հաճելիին չէ հաւասարում , այլ ընդհակառակն հաճելին ազատ եւ իդէա- լական միջոցներով անցնում եւ էսթետիկա- կանի բարձրութեանն է հասնում ու զբանով գեղեցիկի փոխում : Արտաքուստ ի հարկէ շատ դժուար է զգայապէս հաճելին եւ գեղեցիկը տարբերել որ եւ է առարկայից . իսկ ներ- քուստ դա կայանում է այն մեծ զանազանու- թեան մէջ , որը առաջ է բերում գիտակցու- թեան էսթետիկական եւ ոչ-էսթետիկական գրութիւնը » :

Այս խօսքերից հետեւում է . որ գեղեցի- կը միշտ բարձր է , որովհետեւ էսթետիկա- կան է (*) :

Գեղարուեստը բնութեան ընդօրինակու- թիւնն է , բայց ի՞նչով է տարբերում բնու- թիւնը գեղարուեստից : «Բնութիւնը հաստա- տակազմ է , ասում է Գէօթէն , նրա քայլերը չափուած , բացառութիւնները հազուադիւս եւ օրէնքներն անընկճելի են » : Բնութիւնը բազմազան երեւոյթների եւ զօրեղ ազդեցու- թիւնների մի անվերջ պանորամա է . լեռների հսկայական բարձրութիւնը , գիշերուայ հանդի- սաւոր լուսութիւնը , ջրվէժի կաշկանդող ուժը , ծովի անեղրութիւնը , աստղերի կախարհա- կան փայլը , վերջալոյսի մեղամաղձոտ գե- ղեցկութիւնը , գոյների եւ հնչիւնների ան- վերջ քառք , վերջապէս կենդանի մարդը իւր ամբողջութեամբ , իւր հիասքանչ խորհրդա- լորութեամբ , ահա այդ պանորամայի հեռա- նկարը , մի հեռանկար որ գեղարուեստը հա- րուանցի գոյներով , սահմանափակ ծաւալով միայն կարող է ներկայացնել : Բայց ի՞նչ ունի գեղարուեստը բնութեան այս անհա-

սանելի բազմազանութեան առաջ դնելու . նա տալիս է մեզ ոչ թէ բնութիւնը , այլ բնու- թեան էսթետիկական տեսքը , որի տպաւո- րութիւնը աւելի չէզոքացած՝ հետեւաբար եւ աւելի մաքուր է : Բնութիւնը ի հարկէ նոյնպէս էսթետիկական տպաւորութիւններ է առաջաց- նում . բայց սա կարծես միպատահական , միանգա- մայն աննախամտածուած երեւոյթ է : Բարե- պաշտ զգացումներով սողորուած մի անհատ գուցէ տիեզերքն ստեղծողին փառաբանէ , որ նա օգտակարի կողքին դրել է եւ գեղեցիկը : Բայց այս փառաբանումը եւ հաճոյքը այն չէ ինչ որ մենք ընծայում ենք իսկական գեղա- րուեստագէտի եւ նրա ստեղծագործութեանը— նկատում է իրաւամբ Գրոցը) :

Միւս կողմից չպէտք է մոռնալ նաեւ , որ գեղարուեստի ստեղծած զգացմունքների նըր- րութեան եւ խորութեան առաջ՝ բնութիւնը (նեղ մտքով վերցրած) ոչինչ չունի դնելու : Մարդկային կարիքը յուզող , տակնուվրայ անող ամենաուժեղ զգացմունքներին , եռուն կրքերին , հրատապ աւելին՝ միմիայն գեղա- րուեստի միջոցով կարելի է էսթետիկական բնաւորութիւն տալ . օր . . երաժշտութիւնը՝ գեղարուեստի ճիւղերից այս ամենասահասա- կանը , բնութեան մէջ ոչինչ չունի իր նմանը (թէեւ ումանք փորձում են առուակի կարկաջի կամ ալիքների շառաչման մէջ որո- նել երաժշտութեան բաղմբը :

Գուցէ նկատողներ լինին՝ Եթէ գեղարու- եստը օւրիշ բան չէ բայց եթէ բնութեան ընդօրինակութիւնը , այն ժամանակ դաճում է միանգամայն աւելորդ , որովհետեւ այդ դէպքում մենք ունենք եւ կը վայելենք հէնց բնութիւնը , որին գեղարուեստը երբեք չէ կարող հասնել , բայց մտածողութեան այս եղանակով կը նշանակէ գեղարուեստի էութիւնը հիմնովին շրջել . կարծես թէ խնդիրը վերա- բերում է բնութեան ու գեղարուեստի մէջ եղած աստիճանական տարբերութեանը . չէ՞ որ գեղարուեստի էսթետիկական արժէքը հէնց նրանումն է կայանում , որ նա ընտրիւն չէ եւ նա չէ էլ կամենում բնութիւնը դաճնալ , այլ միայն ներկայացնել . օր . . երբ մի վար- պետ գնում է մեր առաջ բնութիւնից նկարուած մի տեսարան՝ մենք մեր բաւա- կանութեան աղբիւրը որոնում ենք ոչ թէ նիւթի տեսարանի մէջ ինքնըստինքեան , այլ այն երեւոյթի մէջ թէ ի՞նչպիսի բնութեան որ

*) Գեղեցիկի գաղափարից պէտք է զանազա- նել եւ «վեհ» ի գաղափարը . էլստորի կարծիքով կեանքի եւ բնութեան մէջ գեղեցիկը՝ կանո- նաւորը , տիպականը եւ նորմալն է . իսկ վեհի գաղափարը գեղեցիկից աւելի բարձր է , «տիպական կատարեալի» սահմանից աւելի վեր : Երկրորդ իւր գրեւորներում «վեհի» ա- մենաուժեղ շեշտողներիցն է , այն ինչ Գէօ- թէն՝ գեղեցիկի առաջնակարգ թարգմանը :

եւ մի է շերտ գծերի եւ գոյների խառնուրդով կտաւի մի կտորի վրայ դրոշմւած է :

Վերջերս մի կողմից դարվինականութեան եւ միւս կողմից բնախօսական հոգեբանութեան ազդեցութեան տակ, գեղարուեստի պաղափարը, հասկացողութիւնը, մի աչքի ընկնող յեղաշրջման ենթարկւեց : Հետզհետէ աւելի ուժեղ եւ բազմակողմանի կերպով շեշտուած է կենդանիների եւ մանուկների խաղի ու գեղարուեստի մէջ եղած նմանութիւնը : Փամանակին, Դարվինը, Սպէնսէր, Վայսման, Էւն, Իրենց գրուած քննելով այս հանգամանքի վրայ թէեւ ուշադրութիւն դարձրել են, բայց նորագոյն աշխատութիւններն աւելի լիակատար են եւ այս խնդրի վրայ մեծ լոյս են սփռում : (ուշադրութեան արժանի են մանաւանդ Կ. Գրոգի Die spiele der Thiere, Einleitung in die Aesthetik, եւ Գ. Լանգէի Kunsflerische Erziehung der deutschen Jugend, Die bemusste selbstauschung als kern des kunstl. genusses.)

Բարձր աստիճանի վրայ կանգնած բոլոր կենդանիները, նաեւ մանուկները իրենց խաղով՝ ինչպէս եւ մարդիկ գեղարուեստի միջոցով՝ ձգտում են մի առերեւոյթ գործունէութիւն առաջացնել : Վազնէր այս գործունէութիւնն անուանում է «գիտակցական ինքնախաբէութիւն» : Այսպէս՝ կատուն թաշկինակի հանգոյցի հետը խաղում է, երեւակայելով թէ միան հետ է խաղում : Թութակները երբեմն զիտմամբ հիւանդ են ձեւանում : երախան մօր ծունկին նստած իրան երեւակայում է ձիու վրայ, կամ թէ որ եւ է աթոռ համարում է կառք եւ իրան կառապան, Էւն : Մանուկների ինքնապատրանքի ընդունակութիւնը նոյնքան ուժեղ է ինչպէս եւ չափահասներին, որոնք զիցուք թատրոնում նստած՝ դրամատիկական ինքնապատրանքին անձնատուր են լինում : Մանուկը՝ համաձայն իւր բնածին գեղարուեստական ընդունակութեանը՝ ձգտում է ոչ թէ բռն առարկաներն ունենալ, այլ խաղալիքները : Թեւից կամ փայտի կտորից շինուած մի մտրակ՝ օրինակի համար, նրան աւելի է գրաւում քան թէ որ եւ է մի գործարանում պատրաստւած իսկական մտրակը : Ճիշդ այսպէս նաեւ՝ էսթետիկապէս կրթուած չափահասը գեղարուեստական բաւականութիւն ստանալու համար ցանկանում է բնութեան կամ կիանքի ոչ թէ կատարեալ, այլ առերեւոյթ ընդօրինակութիւնը :

«Բէալիզմի» ծայրայեղ ծաղրանկարը, իսկականի հաւատարիմ ընդունակութիւնը միանգամայն ոչնչացնում է էսթետիկական հաճոյքը, օր. : մտից շինած մարդիկ, որոնք երբեմն այնքան բնական են, որ թւում է թէ շարժում ու շնչում են, էսթետիկական ոչ մի բաւականութիւն չեն կարող պատճառել, որովհետեւ այս մտեղէն շինուած քներում իսկականի եւ երեւութականի մէջ եղած սահմանը բոլորովին անհետանում է : Նոյնպէս իսկական պարախաղը (ballet) (ո՛չ միջկատակայինը) թատերական արուեստներից ամենաստորինն է, որովհետեւ գրաւիչ մարմինների եւ սիրուն շարժուածքների առաջացրած հաճոյքը, որը կարելի է կրկեսում եւ ուրիշ տեղերում աւելի լաւ վայելել, բնական հաճոյք է եւ ոչ էսթետիկական (կրկեսում էսթետիկական որոշ տպաւորութիւն առաջացնում է միայն կլօուսը՝ գիտակցական ինքնախաբէութեամբ) :

Տեղի եւ ժամանակի համեմատ փոխւում են նաեւ գիտակցական ինքնախաբէութեան եւ «իլլիւզիոն»ի պահանջները : օր. , անհետեւութիւն կը լինէր թատրոնական այն «իլլիւզիոն»ը որը ընդունուած էր զիցուք Շէքսպիրի ժամանակ՝ այժմ առաջացնել : Ինչպէս մանուկը իւր զարգացման տարբեր աստիճաններում ինքնապատրանքի տարբեր միջոցներ է գործածում (օր. , աթոռը իբրեւ կառք է ընդունում, յետոյ անցնում է շինուած փոքրիկ կառքին) — այնպէս էլ ժամանակի ընթացքում կրթութեան աւելի բարձր աստիճանի վրայ կանգնած հասարակութիւնը պահանջում է «իլլիւզիոն»ի աւելի նոր եւ նուրբ արտայայտութիւն : Հանձարեղ Վազնէրը իւր գեղարուեստական եւ թատերական նրբազացութեամբ շատ խոր կերպով ըմբռնեց այս գիծը եւ այդ է պատճառը որ առանձին մի չէնք յատկացրեց իր օպերաների համար (Բայրոյթի նշանաւոր թատրոնը), այնպէս որ ապագայում թատրոնական դանլիճին բոլորովին մթ ընցնելը, նուագախմբի ծածկուելը եւ յուշարարական արկղի վերցւելը գուցէ ընդհանուր սովորութիւն գտնայ :

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Բօն
(Շարունակելի)



ԲՈՒՇՔԻՆ ԵՒ ՄԻՅՔԻՆԵՎԻՉ



Այս միեւնոյն տարուան մէջ սլաւ ցեղը տօնեց իր երկու մեծ բանաստեղծներուն յիսնամեակը : Փետրուարին Բոլոնիացիք Միցքեիվիչին յիշատակը հանդիսաւորեցին . այս վայրկեանիս Ռուսերը Բուչքինին անունը կը պանծացնեն : Երկու համացեղ բանաստեղծները համարադգ չեղան . կը պատկանէին ցեղին երկու գլխաւոր ճիւղերուն , եւ այդ երկու ճիւղերը մոլեգին մրցակիցներ էին . Բուչքին կը ներկայացնէ այն ճիւղը որ մրցմանը մէջ յաղթական ելաւ ու միւսին տէրն ու բռնաւորը դարձաւ . Միցքեիվիչ գերագոյն արտայայտութիւնն է յաղթուած ճիւղին հանճարին ու տառապանքին : Ու թէպէտ ոռւս բանաստեղծը շատ աւելի աղմկալից , ընդարձակ ու երկարատեւ տօնաւորում մը կ'ունենայ , լեհ քերթողին յիսնամեակը , իր խղճուած ու վեհ պարզութեանը մէջ , այլապէս նշանակալից էր եւ յուզիչ : Բուչքին մարդկութեան համար ուրիշ բան չէ բայց եթէ նուրբ արուեստագէտ մը , որուն երգին մէջ ժողովրդի մը զգայութիւնը նոր կը սկսի կազմակերպուիլ . Միցքեիվիչ կը մարմնաւորէ մեծ դժբաղդ ժողովրդի մը զիւցազնական ծաւը՝ ամենէն հօր քնարերգական խառնուածքներէն մէկուն մէջ արտայայտուած : Մեզի Հայոց համար ու եւ է վարանում կարելի չէ՝ երկու անուններուն միջեւ մեր նախընտրութիւնը որոշելու համար : Բուչքին մեզ կը շահագրգռէ իբրեւ մին այս դարու տասը-քսան տաղանդաւոր քնարերգականներէն . Միցքեիվիչ մեր հիացմանը մէջ տեղ պէտք է ունենայ իբրեւ բարձրագոյն հերոսներէն մէկը մարդկային բանաստեղծութեան , եւ մեր սրտին մէջ ամենէն կաթողին անկիւնը՝ մեր ազգային քերթողներուն անմիջապէս քովը՝ իբրեւ գերագոյն երգիչը մարտիրոս ժողովուրդներուն :

Լեհ բանաստեղծին յիսնամեակը կատարուեցաւ ոստիկանական ամենախիստ հսկողութեան տակ , ամենէն ծայրայեղ սեղմումներով . Քրաքովիոյ մէջ արձանին բացումին՝ արգիւրուած էր ու եւ է ճառ արտասանել . Բոլոնիացի գրագէտներու խումբ մը գնաց՝ անխօսուկ՝ ծածկոյթը վար առաւ արձանին վրայէն , ու խոնուած բազմութիւնը , լուռ ու մունջ , զսպուած յուզմունքով մը դիտեց պաշտուած բանաստեղծին զէմքը եւ յիշեց անիծուած օրերը զորան երգեց : Ռուս բանաստեղծին փառաւորումը տեղի կ'ունենայ կառավարութեան հովանաւորութեան տակ , ամենէն պաշտօնական հանդիսաւորութեամբ . եւ բանաստեղծի մը յիշատակին համար չկայ աւելի աղարտող , աւելի երկդիմի պատիւքան բռնապետական կառավարութեան մը մեծարանքը : Եւ ոռւս կառավարութիւնը , որ թալսթոյի յորելեանին առթիւ այնքան ցուրտ

ու նոյնիսկ թթուած զէմք մը ցուցուց , իր այս ծայրայեղօրէն փութկոտ ու պոռոտ խանդավառութեամբը զոր կը շոյալէ Բուչքինի յիշատակին առջեւ , ցաւալի կերպով կը շեշտէ այն ամբողջ անձկօրէն ազգայնամոլական , գրեթէ կառավարական գոյնը որ կը գտնուի Բուչքինի գործին մէկ մասին մէջ : Բուչքին Նիքոլա Ս . ի պաշտպանեալը եղաւ , արքունիքի բանաստեղծի դերը ընդունեցաւ , «ոռւսական տիեզերապետութեան» երգիչը դարձաւ , ու մինչեւ արիւնլուայ Բոլոնիային եւ անոր կարեկից Ֆրանսային երեսին՝ ոռւսական դահիճ զօրութիւնը ջատագովելու չափ յառաջ գնաց «Ինչո՞ւ լայնափ աղմուկ , ժողովրդական ճարտասանի՞ր , կը գրէր Ֆրանսայի լեհասէրներուն ուղղուած քերթուածի մը մէջ . ինչո՞ւ բանագրանք կը սպառնաք Ռուսաստանին : Ի՞նչ է որ ձեզ իրար կ'անցընէ : Լիթուանիոյ խոզութիւնները : Կեցէ՛ք : Ատի Սլաւներու ներքին վէճ մըն է , ինդիք մը զոր դուք չէք կրնար լուծել : Երկար ատենէ ի վեր այդ ժողովուրդները կը պայքարին . . . մէկէն աւելի անգամներ անոնց կողմը կամ մերը մըրթիկին տակ գլուխ ձեւ ստիպուեցաւ : Ո՞վ յաղթական պիտի ելլէ այս անտար կռիւէն . արքարտաւան Լեհը թէ հաւատարիմ Ռուսը : Սլաւ առուակները ոռուսական ծովուն մէջ պիտի երթան հալի՞ն թէ այդ ծովը պիտի չորնայ :»

Սակայն Բուչքին լոկ շովէն մը չէր , նոյն իսկ իրականապէս՝ բնաւ երբեք չովէն մը չէր . պաշտօնական խանդավառութեան կը միանան այս վայրկեանիս Ռուսիոյ մտաւորական դասակարգին յարգանքի արտայայտութիւնները . եւ հետաքրքրաշարժ վէճ մը ծագած է պահպանողական ու ազատական կոռուսակցութիւններու միջեւ որոնց իւրաքանչիւրը Բուչքինը կ'ուզէ իրենը համարել : Բուչքին «բանաստեղծ» մըն էր ամէն բանէ առաջ , եւ առաջին արուեստագէտը եղաւ որ ոռուսներէն լեզուն ողորկեց , գրական գործիք մը դարձուց : Այդ շովէնի դերը կատարեց ստիպմամբ , պարագաներէն բռնադատուած , առանց անկեղծութեան . խառնուածքով ու դաստիարակութեամբ ազատասէր մըն էր , դպրոցին մէջ սնած էր Ֆրանսական տասնեութեորդ դարու հեղինակներովը եւ իր առաջին փորձերուն մէջ Անտոէ Շէնիէի նմանողութեամբ Ազատութեան ուղղուած գեղօններ յորինած էր . նոյն իսկ մասնակցած էր ազատական գաղանի ընկերութիւններուն որոնք ոռուս երիտասարդութեան մէջ կազմուեցան 1812ի Նարոլէնեան ցընցումէն յետոյ եւ որոնք պիտի յանգէին 1825ի յեղափոխութեան . հրատարակած էր բազմաթիւ հակահռավարակական պարսաւագրեր ու երգիծանքներ . իր ընկերներէն շատերը Սիպերիա աքսորուեցան , ուրիշներ մահուան դատապարտուեցան , եւ Բուչքին աքսորուեցաւ կովկաս . հոն Պայրընի բանաստեղծութիւնները ճանչցաւ ու , անոնց ազդեցութեան տակ , ապրստամբ անհաւատ քերթուածներ շարագրել

սկսաւ . Կովկասի կառավարչապետը Բեդերս-
պուրկ դանգատ յայտնեց անոր մասին , եւ
Բուշքին հեռացուեցաւ նախ իսկ Կովկասէն ու
ղրկուեցաւ Բսքով , իր հօրը կալուածին մէջ ,
ուր զինքը փակեցին , ո եւ է յարաբերութենէն
ո եւ է միջավայրէ խզուած : Կենցաղամու ու
անհանդարտ , Բուշքին չկրցաւ հանդուրժել
այդ բանտի կեանքը , ու անկից ազատելու
համար յանձն առաւ տեսակ մը «մեղայագիր»
գրել Զարին , որով կը խոստանար «իր կար-
ծիքներով չհակասել ընդունուած կարգուսար-
քին» եւ երգում կուտար ոչ մէկ գազանի ըն-
կերութեան շմանակցելու : Նիքուլա Ա . ըն-
դունեցաւ աղերսագիրը , ներեց Բուշքինին ,
զայն Մոսկուա բերել տուաւ , եւ որոշեց , —
ահռելի շնորհ—որ անոր գրաքննիչը ինքն իսկ
պիտի ըլլար . այնուհետեւ Բուշքին ստիպուած
եղաւ իր բոլոր գրածները՝ հրատարակելէ ա-
ռաջ՝ կայսեր ցուցընել , որ կը ջնջէր անոնցմէ
ինչ որ անհաճոյ կը թուէր իրեն : Այս սեղմիչ
ու նուաստացուցիչ կացութիւնը ճնշեց Բուշ-
քինի միտքը եւ տառապեցուց զինքը .
եւր 1829ին ոռւսո-թրքական պատերազմը
ծագեցաւ , Բուշքին իրեն վիճակուած կեան-
քէն զղուած ու գանամ , արկածախնդրական
մղում մը ունեցաւ պատերազմի դաշտը նե-
տուելու , փախաւ Մոսկուայէն Կովկաս ու
անկից անցաւ Տաճկաստան , ոռւսական բա-
նակը . անգամ մը թուրք զինուորներէ պաշա-
րուեցաւ , ու քիչ մնաց մեռնէր անոնց ձեռքը ,
եթէ իր բարեկամները չփութային զինքը
ազատել : Պատերազմին աւարտէն յետոյ պար-
տաւորուեցաւ Ս . Բեդերսպուրկ զառնալ , ուր
դարձեալ իր կեանքը եւ գրուածները ամենա-
խիստ հսկողութեան ենթարկուեցան . մինչեւ
իսկ գազանի ոստիկանութեան պետը անոր կը
ցուցընէր այն ուղղութիւնը որով պէտք էր
գրէր . . . Բուշքին , ազնիւ բայց թոյլ խառ-
նուածք , մէկ քանի անգամ հետեւեցաւ այդ ոս-
տիկանական մուսային ներշնչմանը : «Փայլէ՛
ուրեմն , կ'երգէ Ս . Բեթերսպուրկը փառաբանող
քերթուածի մը մէջ , ո՛վ քաղաք մեծն Պետ-
րոսի , եւ տեւէ՛ միշտ անդրդուի ինչպէս
նոյն ինքն Ռուսաստանը : Թող յաղթահարուած
տարրերը հաշտուին քեզի հետ : Ֆինլանտա-
կան ծովուն կոհակները թող իրենց ատելու-
թիւնները , իրենց վաղեմի պարտութիւնները
մոռնան . իրենց սնտոի մոլեգնութիւնները
Պետրոսին յաւերժական քունը վրդովիլէ թող
դադրին . »

Վերջապէս յանձն առաւ արքունի սենեկա-
պետի պաշտօնը զոր կայսրը իրեն տուաւ եւ
եղաւ տեսակ մը մանկլաւիկ , ազնուականնե-
րու ընկերութեան մը մշտական արհամարհան-
քին ենթարկուած : Չափազանց շղոտցած այս
անարգ կացութենէն , օր մը կասկածեցաւ իր
կնոջը վրայ , մենամարտի հրաւիրեց ա՛յն թէս
անուն ֆրանսացի մը զոր իր կնոջը տարփա-
ծուն կարծեց , եւ անոր գնգակէն մեռաւ :
Կայսրը բերել տուաւ անոր բոլոր անտիպ

գրութիւնները եւ անոնցմէ ջնջեց ինչ որ վը-
նասակար նկատեց . . .

Դժբազդ , ջախջախուած կեանք մը , յօշո-
տուած , բռնաբարուած տաղանդ մը , ահա ինչ
որ եղաւ Բուշքինը : Այնպէս որ այդ «չովէն»
կարծուած , «չովէն» երեւնալու բռնադատուած
բանաստեղծը զո՛հ մըն էր բռնութեան , եւ ա-
ւելի ազատ պայմաններու մէջ , եթէ կարենար
արտայայտել ինչ որ անկեղծօրէն կը զգար ,
ապահովապէս ամենէն խանդոտ երգիչներէն
մէկը պիտի ըլլար ըմբոստացումին : Իր լաւա-
գոյն էջերը նորէն անոնք են որոնց մէջ , թէեւ
զսպուած , թէեւ սքողուած , ազատական
ձգտումներ թարգմանած է : Ատոր համար է
որ Ռուսիոյ ամենէն ազատական մտքերը այսօր
կը մասնակցին Բուշքինը փառաբանելու գոր-
ծին : Ուրիշ կարեւոր պատճառ մը որ Բուշ-
քինը սիրելի կը դարձնէ բովանդակ ոռւս
ժողովրդին , սա անժխտելի իրողութիւնն է
որ Օնեկիինի քերթողը ճշմարիտ ոռւս գրա-
կանութեան ոահվիրան եղաւ եթէ ոչ հիմնա-
գիւրը , ու ոռւս գրական լեզուն ստեղծողն ու
մէկ հարուածով գեղարուեստական բարձրա-
գոյն կատարելութեան հասցնողը : Մինչև
ժուրովսքի եւ Բուշքին , ոռւս գրականու-
թիւնը ֆրանսականին տոգոյն ու անհանձնակա-
ն մամտողութիւն օրն էր . ժուրովսքի ուրուա-
գծած էր , իր պալլադներով , իսկականապէս
«ոռւս» բանաստեղծութեան մը նախապատ-
կերը . Բուշքին , կրած ըլլալով հանդերձ
ֆրանսական գրականութեան ու յետոյ մաս-
նաւորապէս Պայրրիստն բանաստեղծութեան
խորին ներգործութիւնը , կրցաւ , ազղուած
իր գեղջուկ դայեակէն որ հեքեաթներ կը
պատմէր իրեն , եւ իր թափառաշրջիկ
կեանքին մէջ ոռւս ժողովրդին հետ ուղ-
ղակի շփման մտնելով , ընդհանարել այն
ուրոյն հոգին , ուրոյն հրատուրը , ուրոյն
գեղեցկագիրտութիւնը որ կար այդ ժողովրդին
մէջ թաքուն . իր գործերուն մեծ մասը ,
ձեւով մանաւանդ , չափազանց համբերողական
են , այն շրջանին եւրոպական ոռումնդիկ
բանաստեղծութեան ոռուսական ցուացումը
կը ներկայացնեն . բայց նիւթերը ոռւս ժողո-
վրդականաւանդութիւններէն , ազգային պատ-
մութիւնէն , կամ տեղական բարքերէն առնուած
են , եւ , տեղ տեղ , մասնաւոր գոյն ու շեշտունեցող
զգայնութիւն մը կը սկսի նշուլիլ , որ
արդէն արշալոյսն է «ոռւս հոգիին» . Նիքուլա
Կոկոլ , որ ոռուսական գրականութեան ճշմա-
րիտ հիմնադիրը եղաւ , կը խոստովանի թէ
իր ճամբան գտաւ շնորհիւ Բուշքինի օրինակին
ու մասնաւանդ անոր խորնորդներուն : Բուշ-
քին , իր իր կարգ մը բանաստեղծութիւններով
ու մանաւանդ մէկ քանի տեղային կեանքէն
քաղուած վիպակներով , հողը պատրաստեց
ոռուսական իրապաշտութեան , որ կոկոլէն
յետոյ , պիտի տար աշխարհիս այն երեք
հսկաները որ կը կոչուին Տասթայեվսքի ,
Թուրկենէֆ ու Թալսթոյ :

Առանց ո եւ է ստուերի , առանց ո եւ է երկգիծութեան , վեհապանձ գեղեցկութեամբ գէմք մըն է Միգքիեվիչը : յուզուած ու հրա-
ցական դարերուն առջեւ իր շողարկած խրոխ-
տութեանը մէջ կանգուն : Խորունկ ,
թրթռազին , թեւաոր հանճարը զոր բնու-
թիւնը պարզեւած էր իրեն , սարօրինապէս
մեծցաւ ու ազնուացաւ շնորհիւ այն ողբեր-
գական կեանքին (*) զոր բազդը նշանակեց
անոր : Միգքիեվիչ , ամենէն հզօր , ամենէն
ազնուական ու ամենէն հարուստ զգայնու-
թիւններէն մէկը որ երեւցած ըլլան մարդ-
կութեան մէջ , Բնաբը եղաւ ուր հնչեցին
երազանքը , տառապանքը , հաւատքը եւ յու-
սահատութիւնը մարդկութեան ամենէն գեղե-
ցիկ , ամենէն նուրբ եւ ամենէն զժբաղդ
ժողովուրդներէն մէկուն :

Գարու մը մէջ ուր իմացականութիւնը
գերազօր ուժը եղաւ , ոչ միայն գիտութեան ,
այլ նոյն իսկ գեղարուեստի ու գրականութեան
ուրօրտին մէջ , Միգքիեվիչ յամառեցաւ մնալ
նեղկայացուցիչը Չգայնութեան , որուն վրայ
տարամերժօրէն կը հիմնուէին հին ներշնչում-
ները : Հաւատքի , երեւակայութեան ու
երաժշտութեան ժողովուրդի մը զաւակ ,
զիւզի մը նախնական ու երազկոտ բարձրուն
մէջ ծնած ու կազմուած , այս բանաստեղծը
արհամարհեց Վերլուծումը որ կը արէր իր
շուրջը , հեգնեց Գիտութիւնը զոր անզօր ու
անհրապարկ կը գտնէր , ճշմարտութիւնն ու
Գեղեցկութիւնը իր սրտին բաբախումներուն
մէջ փնտնեց , ուր խառցած կը զգար ամբողջ
ժողովրդի մը սրտին արիւնը : Միգքիեվիչ
վերջինն է հին աշխարհին բանաստեղծներուն :
Թէպէտ ժամանակակից Կէօթէին ու Պայրընին
լեհ քերթողը շատ աւելի եզրայրութիւն ունի
Տանթէի մը հետ քան ժի՛ . գարու այդ քերթող-
ներուն : Կ'երգէ Հոգին որուն կը հաւատայ .
Կ'երգէ զայն իր ամէն ձեւերուն մէջ , սկսեալ
ժողովրդական պարզուկ երեւոյթներէն — ու-
րուական , ոգի , գեւ , եւն — մինչեւ բնազան-
ցական մեծաշուք յղացումները , — Աստուած ,
հրեշտակներ , յաւիտենական կեանք , եւն :
Ու ոչ մէկ սկողաստիկ իմաստակութիւն , ոչ
մէկ աստուածաբանական մեկնամոլութիւն չի
կարծրացներ , չի շորցներ այդ ներշնչումը .
ան կը բղխի միմիայն հաւատքէն , միմիայն
խանդէն , անսպառ , վիթխարի խանդէ մը որ
իբր իր մէջ ամբողջ երաժշտութիւն մը , ամ-
բողջ իմաստասիրութիւն մը , ամբողջ գեղեց-
կութիւն մը կը գտնէ : Միգքիեվիչ երգեցիկ
Չգայնութեան կենդանի հրաշալիք մը եղած է .
իր ամբողջ գործը յանպատրաստից քերթու-
թիւն մըն է , Յուզմունքին յանկարծական կայծին
սակ ցառքող կէս-անգլխակից եւ այդ պատ-

(*) Միգքիեվիչի կեանքին վրայ մանրամասն տեղե-
կութիւններ տալ ու համար մեր ընթերցողներուն , կը հրա-
տարակենք Բարիզի Քոլէժ աջ Ֆրանսին սլաւ Լեզու-
բու եւ գրականութեանց ժամօթ գասախօս Պ . Լուի
Լէժէի մէկ ուսումնասիրութեան թարգմանութիւնը :

ճառով իսկ ծայրայեղօրէն հզօր , չփոթ ու
վրդովիչ պերճախօսութիւն մըն է . իր էջերուն
մէջ կը զգանք հին գուշակներուն եռոտանին ,
սրբազան փրփուրներովն ու ցնցումներովը .
իր անձը , ամէն անոնց որ գինքը ճանչցած
են , ներշնչեալին հրապոյրը ներգործած է .
բարեկամներու առջեւ , հաւաքումներու մէջ ,
երբ Չայնը յանկարծ կ'արթննար իր մէջը ու
երբ ամբողջ մարմինը՝ ներքին մրրկիկին
յարնումովը՝ կը զողար , Միգքիեվիչ կը ցցուէր
ու վաղանցուկ շունչին ազդեցութեանը սակ
քերթուածներ կը ստեղծէր : Բուշքին , որ
Մոսկուայի մէջ անոր արտօրին ատեն , անոր
հետ մտերմական բարեկամութիւն մը ունեցաւ ,
սարսափի մօտեցող սքանչացում մը կը զգար
անոր համար . « Ի՛նչ հանճար , կը գոչէր իրիկուն
մը , մտիկ ընիլէ յետոյ անոր մէկ յանպատ-
րաստից արտասանած քերթուածը սալոնի
մը մէջ , ի՛նչ հանճար , ի՛նչ սրբազան կրակ-
եւ ի՛նչ եմ անոր քով . . . »

Բարիզ , 1830ի լեհական Չախախու-
յետոյ , երբ Լեհաստանէն դուրս ելլող եւ օտա-
րութեան մէջ ցրուող բազմաթիւ գաղթական-
ներու հետ՝ Միգքիեվիչ եկաւ հոն ապրել , իր
խօսակցութիւնը , իր քերթուածները , եւ
Քոլէժ աջ Ֆրանսին մէջ իր դասերը , որոնք
ունկնդիրները կ'ելեքտրականացնէին , այդ
Արծիւ-Մարգուն համար երկիւղած հրացում մը
յառաջ բերին Միշլէի , Գինէի պէս մտածողնե-
րու վրայ , որոնք զինքը իրենց մեծ եղբայրը
համարեցին , ու Մոնթալամպէրի , Լամբնէի
պէս հաւատացողներու վրայ , որոնք զինքը
իրենց վարպետը հռչակեցին . « Քիչ օրէն պիտի
լոյս տեսնէ , կը գրէր Լամբնէ Լեհ Ռիսաւոր-
ներու Գրին հրատարակումէն քանի մը օր
առաջ , փոքր հատոր մը Միգքիեվիչին , որ
անվիճելի կերպով մեր ժամանակին առաջին
բանաստեղծն է : Չմայլելի բաներ կան այդ
գրքին մէջ . . . Հաւատքի եւ ազատութեան այդ-
պիսի մաքուր արտայայտութիւն մը հրաշալիք
մըն է մեր ստրկութեան եւ անհատաւորութեան
դարուն մէջ » : « Մենք զինքը երբեմն մարդէ
աւելի բարձր տեսանք , կը գրէ Միշլէ ակնարկե-
լով Քոլէժ աջ Ֆրանսի մէջ Միգքիեվիչի դասե-
րուն . կենդանի բոց մը (վսեմ ու ցաւագին
տեսարան) , արցունքներ՝ փայլակներով խառնը-
ւած , կը թափառէին իր արիւնոտ աչքերուն մէջ » :
« . . . Միգքիեվիչ , կը գրէ Ռընան , հին դարերուն հետ
թաքուն հաղորդակցութեան կապեր ունէր որ
զինքը անցեալի Տեսանող մը կը կացուցանէին :
Բայց միանգամայն Տեսանող մըն էր ապագային :
Իր ցեղին կը հաւատար . բայց կը հաւատար
մասնաւանդ աստուածային ոգիին որ կը բորբոքէ
ամէն ինչ որ կեանքի շունչը կը կրէ . եւ բոլոր
ամպերուն մէջէն կը տեսնէր փայլուն ապագայ
մը ուր խեղճ մարդկութիւնը պիտի մխիթա-
բուի իր տառապանքներէն : »

Միգքիեվիչի գործը , ծայրէծայր , « Ներշնչեալ » ի
գերականութիւն մըն է . ասով է որ կը բա-
ցատրուէին ոչ միայն անոր շքեղ գեղեցկութիւն-

ները , այլ եւ անոր անհաւասարութիւնները . Միցքիեվիչ գիտակից արուեստագէտ մը չէր ինչպէս Շէլի մը կամ Կէօթէ մը , եւ իր գործերը անճաշակութիւններէ , երկարաբանութիւններէ զուրկ չեն : Հրարուխը , իր ժայթքեցուցած ոսկի բոցերուն հետ , միանգամայն թափած է բընականաբար անագին դէզ մը տծեւ քարերու , հողի կոշտ զանգուածներու , ու լավայի , որ չորնալով կը տգեղնայ : Բայց հրարուխ մըն է ան եւ ունի այն գեղեցկութիւնը զոր հրարուխները միայն ունին : Նոր ժամանակներու բանաստեղծութեան մէջ ոչինչ կարելի է գտնել որ հաւասարի այն աւելնի կրակոտութեանն ու փայլին , այն թոփչի բարձրութեանն ու զօրութեանն զոր Միցքիեվիչ կը ցուցնէ Փարիսին , Շակֆարիսին , Խրիսի հնչեակներուն մէջ , որոնց մով վաղեմի արար բանաստեղծութեան կայծակը արթնցուց , ու Նախահայրերու Քոնրատին արտակարգ մեծախօսութեանը մէջ , որով Սայրիներուն ու Եղեկիէլներուն որոտումը վերհնչեցուց , եւ Լեհ Ուխտաւորներու Գրիֆին մէջ , ուր նոր աւետարանի մը շեշտը լսելի ըրաւ :

Միցքիեվիչ մեծ նմանութիւն ունի Արեւելիքի երգիչներուն , մասնաւորապէս երբայնցի մարգարէներուն հետ , ոչ միայն պատկերալից ու աւելնոտ քնարերգութեանը համար որով իր բանաստեղծութիւնը կը բռնկի , այլ մանաւանդ այն տեսակ մը միատիջական հայրենասիրութեամբ , ուր Աստուծոյ , Հայրենիքին ու Արգարութեան սէրը իրարու կը խառնուին : Միցքիեվիչ կը վերաբերէր ժողովրդի մը որ Հանճարին ու Տառապանքին կրկին սրբազնութիւնը ունէր . ըմբռնեց որ այդ ժողովուրդը Ազատութեան գաղափարը կը ներկայացնէր՝ ընդգէմ ոռու զօրութեան որ Բոնապարտութիւնը կը խորհրդապատկերէր իր աչքին . բանտի մէջ , աքսորի մէջ , պանդխտութեան մէջ ստրկեցաւ մեծ ատելութիւնը Բիրտ Ուփին , ու իրեն թուեցաւ թէ լեհ ժողովուրդը , որ ազատութեան գաղափարին համար մարտիրոսանալու կը դատապարտուէր , ճակատագրական պաշտօն մը ունէր կատարելու՝ ազգերուն ու ժողովուրդներուն մէջ , ինչպէս որ Մարգարէները կը հաւատային թէ Իսրայէլի ժողովուրդը , հալածուած ժողովուրդը բայց Աստուծոյ ժողովուրդը , պաշտօն մը ունէր ազգերուն մէջ , — այն է տապալել ամբարշտութիւնն ու անարգարութիւնը , եւ յազթական դարձրնել Արգարութիւնը եւ ճշմարտութիւնը : Նախահայրերու զմայլելի Քահանան իր տեսիլքին մէջ լեհ ազգը կը տեսնէ իբրեւ մեծ մարտիրոսը որ կը տառապի մարգկութեան փրկութեանը համար , իբրեւ Քրիստոսը ազգերուն . « . . . Ամբողջ Եւրոպան իմ ազգս տանջարանը կ'առաջնորդէ . . . կը ծաղրէ զայն . . . « Դատարան . . . Հոն կը կեցընեն անմեղը : Իատարանին մէջ , անսիրտ վկաներ միայն կը տեսնես , ու անհոգի դատաւորներ . . . Եւ անաթագաւորները գոչեցին . — Թող դատապարտուի եւ տանջանքի երթարկուի . անոր արիւնը թող

մեր ու մեր զաւակներուն գլխուն իջնայ . խաչեցէ՛ք Մարիամին Որդին . թող Բարաբասները արձակուին . խաչեցէ՛ք , համարձակեցաւ ձեռք վերցնել Կեսարի թագին . . . » Ահա թագաւորները բռնեցին , կաշկանդեցին զայն . անազայն աշխարհիս կը ցուցընեն՝ մարմինը հեղնութիւններով խոցոտուած , ճակատը արիւնոտ փուշերով պսակուած . . . Խաչը իր բազուկները բովանդակ Եւրոպայի վրայ կը տարածէ . կազմուած է երեք չորրորդ ժողովուրդներէ , որոնք երեք կարծր փայտի կտորներու պէս են . . . Ահա կը գամեն զայն , անա իմ ազգս փրկչական գահին վրայ ելաւ . . . ու Մայր-Ազատութիւնը , անոր ոտքին տակ կանգուն , արտասուալից աշուքները վեր կը վերցնէ . . . »

Լեհ Ուխտաւորներու Գրիֆը այս գաղափարին ընդլայնումն է . « Հաւատք եւ Ազատութիւն » կ'երգէ բանաստեղծը , եւ կը հաւատայ թէ լեհ ժողովուրդը , որ իր պղծուած հայրենիքէն հեռացած՝ աշխարհիս չորս անկիւնը տարտըղնած է , իր գիւցազնական մարտիրոսութեամբը կոչուած է ստրկացած կուրացած կաշկանդուած մարդկութեան մէջ տարածել այդ երկու լուսաւոր գաղափարները , որոնք իրեն եղբայր կը թուին , անբաժանելի կ'երեւան .

« . . . Յիսուս Քրիստոս ըսաւ . « Այն որ իմ ետեւէս կուգայ , պէտք է որ իր հայրն ու մայրը թողու , եւ սիրտը քաջութեամբ զինէ . « Լեհ ուխտաւորը կ'ըսէ . « Այն որ Ազատութեան ետեւէն կ'երթայ , պէտք է որ իր հայրենիքը թողու եւ իր կեանքը վտանգի դնէ :

« Որովհետեւ այն որ հայրենիքը կը մնայ եւ ստրկութեան կը հանդուրժէ կեանքը ապահովելու համար , կեանքն ու հայրենիքը միանգամայն պիտի կորսնցնէ , եւ այն որ հայրենիքէն ինքզինքը կաքսորէ՝ իր կեանքը վտանգելով ազատութիւնը պաշտպանելու համար , հայրենիքը պիտի փրկէ եւ յաւիտեան պիտի ապրի : »

Իր « Հաւատք »-ը ոչ մէկ առնչութիւն չունի պաշտօնական , ճնշողական եկեղեցիին հետ , որ բռնութեան նեցուկը կը դառնայ : Այդ հաւատքը զգացումէ կը ծնի եւ ոչ թէ պայմանադրութենէ մը , ու շատ աւելի կը մտնեայ յեղափոխական բողոքին քան պահպանողական օրհներգին : Միցքիեվիչ կը հաւատայ Հոգիին , որովհետեւ զայն կը կարծէ աղբիւրը գեղեցկութեան , ազնուութեան , բարութեան , ընդգէմ ներթիւն որ իրեն համար չարութիւնը , թանձրութիւնը , խաւարն է . կը հաւատայ Աստուծոյ որովհետեւ կը կարծէ որ ան գերագոյն սկզբունքն է արգարութեան : Եւ ինչպէս Մարգարէները , որոնք թագաւորներուն դէմը կը ցցուէին իրենց սրտմտութեանը մէջ զբահուած ու անոնց բռնամտութիւնը , վայրալուծութիւնը , անզգամութիւնը կը քարկոծէին , որոնք Աստուծոյ խկ բողոք կը բառնային , կը հրաւիրէին զայն արթննալ իր թմրութենէն ու մարդոց

մէջ տիրող Չարը սպաննելու փութալ, Միցքի-վիչ կ'որոտայ Չարերու մահաբեր զօրութեանը դէմ զոր կը նկատէ իբրև մէկ արտայայտութիւնը Սատանին, վիթխարի խոչընդոտ մը համամարդկային երջանկութեան հաստատմանը ու զառանցող կատաղութեան, շուարած ու խենթեցած յուսահատութեան վայրկեանի մը մէջ, (Քոնրատին վեմ մենախօսութիւնը), Աստուծոյ երեսն ի վեր իր զարմանքը, իր վրդովումը, իր զայրոյթը աղաղակելու կը յանդգնի. «Սուտ խօսեցաւ այն որ քեզ Սէր անուանեց, դուն իմաստութիւն ես միայն... Աշխարհը մտքերուն ձեռքը ձգեր ես ու կը թողուս որ արտերը յաւիտեանական ամուրթեան մը մէջ հիւժին...»

Միցքիեվիչ գրելով չբաւականացաւ. չափազանց համոզուած էր իր զգացածին ու մտածածին որպէսզի երգերով գոհանար. ուզեց որ հալածուած Լեհութիւնը կազմակերպուի, իր գերը ըմբռնել եւ գործել սկսի: Պիոս Թ. ին կոչ մը ուղղեց խնդրելով որ Եկեղեցին գլուխը անցնի այդ պայքարին որուն վնասները պիտի ըլլային Լեհերը, եւ նոր խաչակրութիւն մը յարուցանէ Բռնութիւններուն եւ Պահերուն դէմ. իր այս գաղափարները Փրանսայի մէջ մեծ խանդավառութիւն առաջ բերին, եւ Լամբրէն, հետեւողութեամբ Լեհ Ուխտաւորներու Գրիին, գրեց իր Հաւաստեցալի մը խօսքերը եւ ազատական կաթոլիկութեան մը գրօշակը պարզեց: Բնականաբար Պապութիւնը, որ կրօնական Չարութիւն մըն է, չէր կրնար կատարել դերը զոր Միցքիեվիչ կ'առաջարկէր, եւ բանաստեղծը տեսաւ որ պէտք էր միայնակ գործել: Հոմի մէջ կազմակերպեց լեհական լեզուն մը, որ Աւստրիոյ դէմ Իտալիոյ մղած պայքարներուն մէջ հերոսական մասնակցութիւն մը ունեցաւ: Իր կեանքին վերջերը, Միցքիեվիչ Պոլիս գնաց, ուր կը զբաղէր լեհական մեծ լեզուն մը պատրաստելու, Ռուսիոյ դէմ պապայ պատերազմներու համար. բայց մահը վրայ եկաւ, ու իր ծրագիրը անաւարտ մնաց:

Միցքիեվիչ, Շոթէնին հետ, կը ներկայացնէ մեծ ազգի մը հոգեվարքը, ու ոչ մէկ հոգեվարք այնքան գեղեցիկ եղած է որքան Բոլոնիայինը: Միւրալի արեւի-մուտք մը եղաւ ան, արեւնով, ոսկիով ու կրակով մեծահարուստ. անոր ցոլքերը բովանդակ Եւրոպային վրայ երկնցան ու գեղեցկութիւն բերին սրտերուն, կորովը աւելցուցին երազներուն, քաջութիւն տուին պայքարներուն: Շոթէն հնչեցուց գերագոյն Մելամաղձութիւնը, մահամերձ գիւցազներ զգնուական ու խրոխտ մերմաղձութիւնը: Միցքիեվիչ երգեց Հոգին Նիւթէն չղթայուած, եւ աւելի գեղեցիկ, աւելի խրոխտ, աւելի հզօր ու ամհի՛ որովհետեւ չղթայուած ու դժբաղդ: Եւ այդ հոգեվարքը այնքան գեղեցիկ եղաւ որ մահը արգիլեց. քաղաքական Լեհաստանը ոչ եւս է, բայց Լեհութիւնը մնաց, այդ գեղեցկութեանը

չնորհիւ զոր արտադրեց Հանճարին ու Դժբաղդութեան զուգաւորումէն. հակառակ ամէն հալածանքի, հակառակ արմատական ջնջման բոլոր ճիգերուն, Լեհութիւնը ինքզինքը կը պահէ անխախտ, եւ եղած է, ինչպէս Միցքիեվիչ կ'երազէր, ազատագրութեան ուժ մը ընդդէմ ձարական գրութեան, դիւստորներէն մին այն յեղափոխական տարրերուն որոնք ոռու բռնութեան հիմերը կը կրծեն ու կը մաշեցնեն:

Այդ տարրերէն մէկը, եւ ամենէն կարեւորը, այսօր նոյն ինքն ոռու երիտասարդութիւնն է: Բուշքին, որ անշուշտ ստիպմամբ գրած էր Բոլոնիոյ ապստամբութեան առթիւ յօրինած անպիտան քերթուածը, հիմա ինքզինքը բացարձակապէս անկարող պիտի զգար զայն գրելու: Ռուս միտքը հեռու է այսօր ըլլալէ ինչ որ էր Բուշքինի օրով: Եւ արդէն անխաւութիւն մը պիտի ըլլար սլաւ ցեղին երկու ճիւղերուն իբրև լիակատար ներկայացուցիչները համարիլ Բուշքինն ու Միցքիեվիչը: Միցքիեվիչ իր ժողովրդին հանճարին բարձրագոյն արտայայտութիւնը եղաւ. Բուշքին ռուսական գիտակցութիւնն է որ նոր կ'արթննայ, ծանրածանր չղթաներու տակ կապկրուած, ամէն քայլին բիրտ պատերու բաղխելով որ անոր թռիչքը կը կասեցնեն, ստիպուած կրելու այնպիսի ազդեցութիւնները որ զինքը ոչ միայն կը սեղմեն այլ նոյն իսկ կը չարափոխեն: Բուշքինի մեծ արժանիքը այդ դժոխային պայմաններուն մէջ ազատասէր հոգիի մը զբաւուած ծարաւը զգացուցած ըլլալն է, եւ իր գործով որ ուրուագիծ մը ու հրաւէր մըն է՝ ծնունդ տուած ըլլալը բուն ռուսական ազատ մտքին. իր զաւակներն են Կոկոլ, Տասթայիվսքի, Թուրկենեֆ, Թալսթոյ, եւ այդ գրագէտներէն աւելի հակակառավարական, հակապաշտօնական, ազատամուլ ու ըմբոստ գրագէտներ ու է ազգի մէջ կարելի չէ գտնել. նոյն իսկ այն ատելութիւնը զոր ատոնք ցուցուցին Բռնութեան դէմ՝ իր ամէն ձեւերով, այն գութը զոր յայտնեցին ճգնուածին ու դժբաղդին, այնպիսի բուն անկեղծութիւն մը, այնպիսի հարկու խորութիւն մը ունի, ինչպէս թերեւս դեռ չէր տեսնուած ոչ մէկ գրագէտի քով: Միցքիեվիչին դիմացը հանելու համար, ոռու ժողովուրդը Տասթայիվսքին ունի. ան է իր ճշմարիտ մեծ բանաստեղծը: Եւ տարակոյս չկայ որ Տասթայիվսքի աւելի ընդարձակ, աւելի մեծ, աւելի «մարդկային» է քան Միցքիեվիչը: Միցքիեվիչին մարդկութեան կը կապուի մտքովը. Տասթայիվսքի մարդկային նորագոյն ուղեղին ու նորագոյն ջղերուն թարգմանն է. Միցքիեվիչ կ'երգէ ջախջախուած ժողովուրդի մը ցաւը, եւ իր երգը մասնաւոր, անհատական շեշտ մը ունի. Տասթայիվսքի, թէպէտ կը նկարագրէ միայն ռուսական կեանքը, կ'արտայայտէ ամբողջ մարդկութեան տառապանքը բռնութեան, սգիտութեան, նախապաշար-

մանց, ախտերու, կեանքին ընկերական ու բնական բոլոր չարիքներուն բազմապատիկ բեռին տակ. Միցքիեվիչ Լեւ մըն է, եւ իբրեւ այն շահեկան. Տասթայեվսքի «մարդ» մըն է, որուն մէջ ամէն ազգի եւ ամէն վիճակի մարդիկ եզրայր մը պիտի գտնեն: Միցքիեվիչ, հնուխեամբ օծուած միտք, Կրօնքը եզրայր կը տեսնէր Ազատութեան, ու կը կարծէր Կրօնքին վրայ կրթնելով յաղթական դարձնել Ազատութեան դատը. Տասթայեվսքի, թուրկենէֆ, ու բոլոր ուրա նոր գրագէտները, մինչեւ Պաքունին ու Քրաբոթքին անիշխանականները, (բաց ի թալսթոյէն որ Միցքիեվիչի գրութեանը դարձաւ եւ միատիքական ազատասիրութեան նոր քարոզիչ մը հանդիսացաւ.) աւելի ճիշդ տեսան, աւելի հաւատարիմ եղան գարուն ոգիին, Կրօնքն ու Բռնութիւնը նոյնացուցին ու Ազատութեան յաղթանակը ցուցուցին քաղաքական, կրօնական, բարոյական, ընկերական բովանդակ հին կարգուսարքին տապալմանը մէջ: Եւ ուրս ժողովուրդը, որ ամենէն վայրագ բռնաւորներէն մէկ քանին արտադրած է, տուաւ միանգամայն ամենէն անկաշկանդ ու բռուն յեղափոխականները: Այդ ժողովուրդը անտարակուսելի կերպով կոչուած է մարդկութեան ընդհանուր ազատագրութեան գործին մէջ ամենակարեւոր գեր մը կատարել. ան պիտի «գործէ» ինչ որ իր մեծ բանաստեղծը, Տասթայեվսքին «երագեց» ու «զգաց»:—Բայց Միցքիեվիչ, իր մարտիրոսի արիւնապսակովը, իր դէմքին մեծ տօգունութեամբը որ հրեշտակներուն դալուկը կը յիշեցնէ, այն ամբողջ գերերկրաւոր շողշողումովը որ կը ծագի իր գործին գեղնած էջերէն, ունի գեղեցկութիւն մը մասնաւորապէս վրդովիչ, մեք դարուն տենդոտ եռուկեամանը մէջ իր երկայն սպիտակ հանճարովը մինաւորիկ կանգուն, վաղնջական, եղբրական ու եզական, ինչպէս մարգարէ մը անցեալէն արթնցած, ինչպէս գերեզմանէն ցատքած ուրուական մը:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵՍՆ



ՄԻՑՔԻԵՎԻՉ

1798—1855

—o—

Լեհաստան այս տարի կը սօճէ հարիւրամեակը իր մեծագոյն բանաստեղծին, անոր զոր իր ազգային բանաստեղծը կը նըկատէ, Ատամ Միցքիեվիչին: Արկու յիշատակարան կանգնուեցան ի պատիւ անոր, մէկը՝ Քրաքովիա, միւսը՝ Վարսովիա:

Միցքիեվիչ ծնած էր, 1798 դեկտեմբեր 24ին, Լիթուանիոյ Նովոկրոտէք գաւառին Զառգիա քաղաքը, այդ լճակներու եւ անտառներու երկրին մէջ որուն մեծաշուք եւ նկարագեղ գաշտապատկերները խորին տպաւորութիւն մը գործեցին իր պատանեկան երեւակայութեանը վրայ, եւ որուն հաւատալիքներն ու հեքեաթները իր գործերուն մեծ մասին մէջ կը ցոյանան: Իր հայրը, լեհական փոքր աղանուականութենէն, փաստաբանի պաշտօն կը վարէր. երիտասարդ հասակին մէջ յարաբերութիւն ունեցաւ այդ թուղթ մրտադներու եւ իմաստականերու ընկերութեան հետ, զոր այնքան գուարճալի կերպով նկարագրած է իր Պարուն Թադիսին մէկ քանի էջերուն մէջ:

Ետ դարձող հոգիներու, ուրուսիականներու, մարդազայլերու պատմութիւններով օրորուեցաւ: Հաւատաց անոնց ինչպէս ամին տղայ կը հաւատայ, բայց իր հաւատքը սովորականէն աւելի տեւեց: Երազներու, վամպիրներու, բարի ու չար հրեշտակներու գաղափարը մինչեւ մօտը իր միտքը հայտնեց. քրիստոնէական միտաբանականութեան քով, որ այնքան մեծ հոգիներ գրաւած է, իր մէջը գոյութիւն ունեցաւ տեսակ մը հեթանոս միտաբանականութիւն որմէ չկրցաւ գերծանել: Հաւասկնալու համար իր գործին մէկ քանի մասերը, անհրամեշտ է Սպիտակ-Մուսիոյ հաւատալիքները ուսումնասիրել: Ինչպէս մեր պորթիոն դեկտեմբերուն մօտ ալ կը տեսնենք, հեթանոս սնապաշտութեան այդ հաւատքը շատ բնական կերպով կը բազադրուէր խանդավառ կաթոլիկութեան մը հետ: Միցքիեվիչ իր մօթէն ժառանգած էր Աստուածամանին համար անկեղծ բարեպաշտութիւն մը, ան իր կեանքը ազատած էր իր ժանկութեանը առաջին շրջանին, ան է մուսան զոր կ'ոգէ իր Պարուն Թադիսին սկիզբը:

Մերուհի կոյս որ կը հովանաւորես պայծառ Զենութեան, որ օսթրա Պրոսմայի դրան վրայ կը ճաւազալիս, դուն որ Նովոկրոտէքի գրեակը եւ անոր հաւատարիմ ժողովուրդը կը պաշտպանես, ատենով ազայութեանս՝ դուն հրաշքով առողջութիւնս ինձի դարձուցիր, երբ արտասուածոր մայրս գիս քու ծառայութեանդ նուիրեց, ու կիտամեռ աչքս բացի, և նոյն օրն իսկ ոտքով կրցայ քու սրբարանիդ սեմը երթալ շնորհակալ ըլլալ Աստուծոյ կեանքս ինձի պարգեւելուն համար Այսպէս ալ մեզ մեր հայրենիքին պիտի դարձնես... Տա՛ր իմ ցաւած հոգիս դեպ ի անստառտ այն բլուրները, գեպ ի կանաչագեղ մարգագետինները որ հեռուն կապուտակ Նիւմենին վերեւը կը տարածուին...

Այս բարեպաշտութեան հետքը Միցքիեվիչի քերթուածներէն շատերուն մէջ կը շարունակէ երեւնալ. Միցքիեվիչ ամէն բանէ առաջ կրօնական պարտքերը կատարող կաթոլիկ մը եղաւ: Այն թուականին ուր իր կեանքը կը սկսէր, Լեհերը չէին ուզեր իրենց հայրենիքին լուծի տակ մնալը իբրեւ վերջնական իրողութիւն մը նկատելու համակերպիլ: Յուսացած էին թէ Փրանսական յեղափոխութիւնը, որ

գահերը կը գրողէր, Եւրոպայի քարաէսը կը վերափոխէր, իրենց հինաւուրց հանրապետութեանը համար ալ բան մը պիտի ընէր եւ ազատութիւնն ու հայրենիքը պիտի գործընէր իրենց: Խանդավառութեամբ ողջունած էին այդ յեղափոխութեան թագակիր ժողովուրդը, նաբողէնը: Ֆրանսայի ծառայութեանը դրած էին կամաւորներու լեգէոններ, որոնք իրենց քաջութեամբ նշանաւոր հանդիսացած էին Լուտալիոյ, Սպանիոյ, Գերմանիոյ եւ նոյն խակ Սէն-Տոմէնկի պատերազմի գաշտերուն վրայ, եւ որոնց գլխաւոր պետերուն անունը Բարիզի Յաղթական կամարին վրայ արձանագրուած է փառաւոր անուններու հետ:


Ֆրանսա, որ քաղաքականութեան մէջ Լեհերուն գերագոյն յոյսերով, գրականութեան մէջ ալ կատարեալ օրինակն էր անոնց՝ Վոլթէրի Հեկտիականը եւ Տըլիլի Պարսկեցիները Վիսթուլայի եւ Նիւմէնի փիերուն վրայ խանդաւած թարգմանիչներ ու մոլորանդ նմանողներ կը գտնէին: Ատամ Միցֆելիչ տասնչորս տարեկան էր երբ «Մեծ Բանակին» զօրագրունդերը Լիթուանիայէն անցան: Քովնոյի մէջ տեսաւ ժեռոմ թագաւորին մուտքը՝ փայլուն սպայակոյտի մը հետ:

... Հակառակ «Մեծ Բանակին» կրած ողբալի պարտութեանն ու Նաբողէնի անկումին, Միցֆելիչ չգողեցաւ յուսալէ թէ օր մը այդ նոյն գերդաստանէն մէկը գահը պիտի բարձրանար եւ պիտի վերահաստատէր Բոլոնիան, որուն կերպով մը ուրուագիծը քաշած էր Նաբողէնի՝ Վարսովիոյ վաղանցուկ գրքութիւնը ստեղծելով:

Նովոկրոտեքի գիմնագիտնին մէջ ուսումը աւարտելէ յետոյ, Միցֆելիչ Վիլնայի համալսարանը մտաւ: Լիթուանական երկիրները գրաւած ատեն, ոռւս կառավարութիւնը չէր մտածած զանոնք ոռւսացնել: Սելեքսանդր Ա. կայսրը Ատամ Չարթորիսքի յանձնած էր Վիլնայի համալսարանին խնամակալի գերը. քաւախարակութիւնը կը արուէր այնտեղ ոռւսական, բոլոնիական ու կաթոլիկ աւանդութեանց համեմատ: Գլխաւոր ուսուցիչները որոնց դասերուն հետեւեցաւ Միցֆելիչ, էին Պորովսքի, քաջ հետորազէտ մը որ թերեւս նպաստեց իր աշակերտին բանաստեղծական կոչումը որոշադրելու եւ որ զայն գուշակելու արժանիքը ունեցաւ. կրտսեք Գերմանացին, կորովամիտ դասական բանասէր մը. Լիւբովել պատմաբանը, որ հիմա մեզի շատ խառնաչփոթ եւ շատ զօրուարընթեռնի կը թուի, բայց որ պակահովապէս իրապրած ժամանակին

համար, մեծ հեռու մը եւ մեծ հայրենասէր մը եղաւ: Դասերուն հետեւելով հանդերձ, Միցֆելիչ կ'ուսումնասիրէր օտար գրականութիւնները, մանաւանդ գերմանականը, անգլիականը, ռուսականը, եւ իր ժամանակակից Լեհերը զմայլեցնող գրական սեռերէն ու տիպարներէն բոլորովին տարբեր սեռերու եւ տիպարներու գոյութիւնը կը սկսէր ընդնշմարել: Խորապէս ուսումնասիրած էր իրենց սակեղարուն դասականները, մանաւանդ Քոխանովսքին, Լեհաստանի Մալեուր. ժամանակակիցներուն մէջէն մասնաւոր համակրութիւն ունեցած էր Թրեմպկեքիին համար (1812ին մեռած) որ ֆրանսական դպրոցին պատկանող բանաստեղծ մըն էր նկարուն ու ինքնատիպ աւղանդով, եւ իր առաջին արտագրութիւնները անոր գործերուն մեկնաբանութիւններն եւ նմանողութիւնները եղան: Այսպէս մեր Լամարթինն ալ Բարնիին նմանող մը ըլլալով սկսաւ առանց մտքէն անցընելու թէ զայն

պիտի գերազանցէր ու մտցնել պիտի տար: Իր ուսումնասիրութիւնները յառաջ տանելով հանդերձ, Միցֆելիչ անդամ գրքուեցաւ Ուսումնասիրաց անունը կրող ուսանողական գաղտնի ընկերութեան մը. ինչպէս անունէն կ'երեւայ, այս ընկերութիւնը իրեն գլխաւոր նպատակ դրած էր գիտութիւնները ուսումնասիրել եւ յետոյ զանոնք լեհական հայրենիքի օգտին ծառայեցնել: Բնականաբար ոչ կամ կանոխ այդ ընկերութիւնը ոռւս կառավարութեան կասկածները պիտի գրգռէր:



ԱՏԱՍ ՄԻՑՔԻԵՎԻՉ

Երիտասարդ ուսանողին առաջին սէրը իր բանաստեղծական կոչումը որոշադրեց: Գորովագին տարիանքով մը բռնուեցաւ մանկամարդ Բոլոնուհիի մը, Մարիա Վերեսչաքայի համար, որ հաճոյք զգաց իրեն հետ պչրելով: Կարգաց կէտթէի Վերսերը, տիկին աը Գրուտէեքի Վալեռին, գիրք մը որ բոլորովին մոռցուած է հիմա եւ որ Միցֆելիչի գրական գործին մէջ գեր մը խաղացած է: Մարիա—Մարիա, ինչպէս բանաստեղծը զայն կ'անուանէր, — նըշանուած էր՝ Վերսերին Շառլոթին նման, եւ իր առաջին խոստմանը հաւատարիմ մնաց: Այս ի գերեւ ելած սէրը որուն անյոյս ըլլալը գիտէր արդէն, իր գեղեցկագոյն տաղերէն մէկ քանին ներշնչեց իրեն. իր հնչեակներուն, եղերերգներուն, Նախախաղերուն մէկ քանի մասերուն մէջ, կը գտնենք շեշտեր որոնք Նորէյոիզը, Վերսերը, Օլեւրիոյի տրսմոքիւնը եւ Միւսէի Գիշերներն ու Յիշատակը կը յիշեցնեն:

Երիտասարդ բանաստեղծները ոչ իրենց ուսանաւորներովը ոչ ալ իրենց տարփանքներովն է որ ապրուստնին կ'ապահովեն : 1819ին, Ատամ Միգքիւիլիչ Գովնոյի գիմնազիոնին մէջ ուսուցիչ անուանուեցաւ : 1822ին հրատարակեց Նաւաքածոյ մը պալլագներու եւ ոսմաններու , մեծ մասամբ Մարիլայի ներշնչմանը տակ գրուած , եւ 1823ին՝ հատոր մը որ կը պարուանակէր Նախահայրերուն երկու մասերը եւ կըրագիւնան : Պալլագները նորութիւն մըն էին լեհական բանաստեղծութեան մէջ . անոնք կ'երգէին ժողովրդական աւանդութիւններ ուրոնք դասական գիւցազներուն ու գիցազէպերուն հետ ո եւ է աւնչութիւն չունէին . շըրջանակի մը մէջ որ նմանապէս ժողովրդական հաւատալիքներէն առնուած էր , Միասիները (նախահայրերը) տեսարանի վրայ կը դնէին նոյն ինքն բանաստեղծը եւ Մարիլայի համար աւոր ունեցած դժբաղդ սիրոյն գլխաւոր դրուագները . խաբուած սիրահարին ողբը բանաստեղծութեան մէջ յաւիտենական մոթիֆ մըն է : Դասականները եղբերգին կամ հովուերգին հասարակ ձեւը պիտի գործածէին . Միգքիւիլիչ նոր շրջանակ մը կը փնտռէր յաւիտենական զգացումներու համար : Գտաւ զայն լիթուանական ժողովրդին ֆոլքլորին մէջ : Սպիտակ-ոռուսերէնով ու բոլոններէնով , Միասի բառը «նախահայր , մեռել» կը նշանակէ . Միասիներուն տօնը , ամբողջութիւնն է այն արարողութեանց զոր գիւղացիները կը կատարեն ի պատիւ մեռելներուն : Եկեղեցին կը դատապարտէ այդ արարողութիւնները , բայց դեռ չէ կըրցած ջնջել : Ժողովրդական սնապաշտութեանց ցնորական շրջանակին մէջ , յուսահատ սիրահարը կ'երեւայ նախ ուրուականի , յետոյ գիշերանց մոլորած ճգնաւորի ձեւով , վերջապէս՝ Կիւսթավ անունով : Կիւսթավ տիկին տը Բրիւտնէրի Վալդի վէպին հերոսին անունն է : Մարիլայ այդ անունը չէր մոռցած , եւ բանաստեղծը դիտմամբ զայն ընտրեց որպէս զի այդ անձին ինքն իսկ ըլլալը դիւրաւ գուշակուի : Պէտք է խորհիլ որ այդ վէպին տեսարանը կ'անցնի շատ փոքրիկ թատերաբեմի մը վրայ եւ թէ Լիթուանիոյ քաղաքներուն ու աւաններուն մէջ ամէն մարդ գիտէր Ատամի եւ Մարիլայի դժբաղդ սէրը , — ինչպէս Վեցլարի մէջ ամէն մարդ Շարլոթի պատմութիւնը գիտէր : Արդէն Մարիլայ , որչափ գիտենք , դժգոհ չէր այն փառքէն զոր բանաստեղծը կը պատրաստէր իրեն համար : Սլաւ ու գերման ժողովուորները այդ փափուկ խնդիրներուն վրայ մենէ տարբեր գաղափարներ ունին :

Ուրեմն Նախահայրերուն մէջ , թատերական քերթուածի կամ մանաւանդ տրամախօսական դրուագի ձեւով , Միգքիւիլիչ իր սիրոյն պատմութիւնը ի հանդէս կը բերէ : Տեսակ մը նախերգանքի մէջ կը ներկայանայ վամպիրու մը , ուրուական մը որ դատապարտուած է ամէն տարի մեռելոց օրը արթննալու եւ լոյս աշխարհ ելլելու . ստուերն

է երիտասարդի մը որ , ինչպէս Կեթիլի Վերքերը , իր ձեռքովն ինքզինքը սպաննած է : Կը պատմէ , տարտամ բայց ժամանակակիցներուն համար բաւական դիւրահասկանալի բացատրութիւններով , իր ողբերգական տարփանքներուն պատմութիւնը :

Ներէ՛ , կ'ըսէ իր սիրուհւոյն , ներէ՛ եթէ կը համարձակիմ քեզի գառնալ , եթէ ես՝ անցեալի ուրուական՝ կ'ըսէ յանդգնիմ ներկայ երջարկութիւնդ վայրկեան մը վրդովել . . . Թերեւս պիտի հաճիս յետի ընել գերեզմանին անդիի կողմէն եկած ձայն մը , ե հետեիլ անցած օրերու յիշատակներուն՝ որոնք կը նմանին սողակուն բաղեղներուն որ աւերակներու վրայ կը փռն իրենց կանաչագեղ դրասանդները :

Այդ ուրուականը Միասիներուն , մեռելոց տօնին արարողութեանց միջոցովը վերակոչուած է : Բանաստեղծը նոյն իսկ այդ տօնը մեզի կը պատկերացնէ . ի տես կը բերէ մոգ մը , կախարդ մը , գեղջուկներով ու գեղջիւկահիներով պաշարուած : Իրիկունը , մատուռի մը մէջ , իրենց հեթանոսական արարողութիւնները կը կատարեն : Ես կը կասկածիմ որ կղերին թոյլտուութեամբը կամ նոյն իսկ մեղսակցութեամբը տեղի ունենան ատոնք : Ոգիներ կը վերակոչեն : Չեմ գիտեր թէ Միգքիւիլիչի զգած պատկերը համապատասխան է իր աչքովը տեսածին կամ ծերունիներէ լսածին : Չի համաձայնիր լիթուանական ֆոլքլորին վրայ երեւցած նորագոյն հրատարակութեանց հետ , զոր առիթ ունեցայ աչքէ անցընելու : Այսպէս կամ այնպէս , կարելի է այս պարագային պատշաճեցնել ծանօթ առածը՝ Աւեկե բան Աերեյի Ե քսևաստեղծներուն ինչպիս Ակարիչ-Աերուն : Կիւսթավի ոգումներուն մէջ կ'երեւան ամէն տեսակ հոգիներ , երկրաւոր կեանքին մէջ չափազանց փաղաքշուած տղոց հոգիներ որոնք չեն յաջողեր մինչեւ արքայութիւն բարձրանալ որովհետեւ աշխարհիս վրայ խիստ շատ հաճոյք վայելեցին , անողորմ աւատատէրի մը չարատանջ հոգին զոր անօթութիւնն ու ծարաւը անդադար կը չարչարեն , ատենով աշխարհիս վրայ պչրասէր եղած աղւորիկ աղջկան մը հոգին որ հիմա՝ իբր պատիժ՝ դատապարտուած է յաւիտենապէս երկնքին ու երկրիս միջեւ ծածանելու , յետոյ լոբիկ ուրուական մը որ պատուած սիրտ մը ցոյց կուտայ եւ որուն վրայ արիւնի ալիք մը կը հոսի . այդ ուրուականը կը մերժէ խօսիլ եւ կամ շարժում մը ընել . կը հետեւի պչրամով հովուուհիին . կախարդը եւ հանդիսատեսներու պարտ սնոր ետեւէն կ'երթան , կրկնելով սա տողը որ ամբողջ հատուածին կարծես շարժարկիփն է .

Ի՞նչ պիտի տեսնենք , ի՞նչ պիտի տեսնենք :

Ինչ որ պիտի տեսնենք կամ մանաւանդ ինչ որ պիտի լսենք , յաւիտենական պատմութիւնն է տարաբաղդ սիրահարին որ իր յուսախաբ տարփանքները կը վիպէ , կ'անիծէ զայն որ երեւակայական երջանկութիւն մը երազել տուած է իրեն՝ յետոյ զինքը ամենէն անուրի

յուսահատութեան մէջ ընկղմելու համար: Այն ցաւերը զոր Միւսէ կը վստահի կարեկից մուսային, Միցքիեվիչի հերոսը զանոնք կը յայտնէ գիւղական աւազներէցի մը, որ սահմուկած կը մնայ, այդքան տարօրինակ խոստովանութիւն մը լսելով: Կը խօսի ոչ միայն իբրեւ վշտակոծ սիրահար, այլ եւ իբրեւ միստիքական մը որ կը հաւատայ թէ գաղտնի կամ բարձրագոյն ուժեր կան բնութեան մէջ, «որ զանոնք ո՛չ քահանաներուն ո՛չ ալ գիտուններուն պիտի յայտնէ»: Այդ տարօրինակ ձեւերով ուխտաւորին մէջ, քահանան վերջի վերջոյ իր Կիւսթավ հին աշակերտը կը ձանչնայ, տիկին տը Գրիւաների վէպին Կիւսթավը եւ որուն մէջ Ալեքսանդր Ա. ի կրազկոտ բարեկամուհին զժուարաւ պիտի կարենար վերագտնել իր նախկին հերոսը: Կիւսթավի վիպուկները ինքնակենսագրութեան հատուածներ են. Միցքիեվիչի մեկնաբանները բաւական համարած են զանոնք արձակի վերածել՝ անոր կեանքին շատ մը էջերը վերակազմելու համար: Միցքիեվիչ իսկականապէս ենթակայական է, կը շահագրգռուի միմիայն այն դրուագներուն ուր ինքը անձամբ դեր խաղացած է: Իրեն չէ որ կարելի պիտի ըլլայ, ինչպէս Կէօթէին, «ոլիմպական» վերադիրը տալ: Կիւսթավ իր խոստովանանքը կ'աւարտէ կըղերին կողմէ արգելուած հեթանոսական արարողութեանց ի նպաստ խնդրանքով մը. «Քահանայ, տո՛ւր մեզի նախահայրերու տօնը զոր եկեղեցին կ'ուզէ ջնջել»: Բայց հեթանոսական տօն մըն է ատի, կը պատասխանէ խնդրեալը: Կիւսթավ կը պնդէ. Ջերմեռանդ քրիստոնեայ մը ըլլալով հանդերձ, ժողովրդական աւանդութեանց գերբնականին հաւատալու իրաւունքը կը պահանջէ: Հոս ալ Միցքիեվիչն է որ ինքզինքն իհանդէս կը բերէ. ինքը կ'ուզէր անպատճառ պահպանել, քրիստոնէական վարդապետութեան հետ, այն հաւատալիքները զոր եկեղեցին շատոնց դատապարտած է եւ զոր գիտութիւնը հետզհետէ կը ձգտի հերքելու: Կրօնական պարտականութիւնները կէտ առ կէտ կատարող մըն էր. խոստովանանք կ'ըլլար յաճախ: Իր խոստովանահայրերը շատ անգամներ դժնդակ պայքարներ ունեցած ըլլալու են իրեն հետ: Գերմանիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի ռոմանթիկ բանաստեղծները որ իրենց գործերուն մէջ կը վերակենդանացնէին միջին դարու առասպելական էակները, վամպիրներ, սիլֆեր, գնոմներ, ճիւներ, քստմեկի ուրուականներ, այնչափ հեռու էին այդ գրական նիւթամթերքի առարկաներուն հաւատալէ որչափ ժէ. կամ ժԼ, դարու դասական բանաստեղծները՝ Մուսաներուն, Արամսուգիին կամ Փեբոսին: Ինչ որ Միցքիեվիչը կը զանազանէ այդ ամենէն, այն անկեղծ հաւատքն է զոր կ'ընծայէ՝ մերթ ժողովրդական աւանդութեան արտագրութիւններուն, մերթ բորբոքեալ երեւակայութեան մը երագներուն: Կը հետեւի յաջորդաբար Տիկին

տը Գրիւաներին (Վալտի), Կէօթէին (Ֆաուստ եւ Վերթեր), Պայրընին (Մանֆրէտ եւ Կալիս) ժանիոլ Ռիխթերին, որմէ կ'առնէ իր քերթուածներէն մէկուն բնաբանը, բայց կարող էր ըսել Անտոէ Շէնիէի պէս.

Իմ նմանողութիւնս սարկութիւն չէ:
Եթէ վարսովիայի պէս մեծ մայրաքաղաքի մը մէջ ժԼ. դարու սկեպտուսթեամբը սնած մաքերու մէջտեղը ծնած ու մեծցած ըլլար, անշուշտ ուրիշ կերպով պիտի գրէր. գրական բանաձեւերը իր գործին մէջ պիտի զգալի ըլլային. բայց Լիթուանիոյ մէկ փոքրիկ քաղաքին մէջ ապրած է, մանկութիւնը անցուցած է շատ նախնական գեղջուկ աղնուականներու, սնապաշտ գիւղացիներու հետ: Այնքան անկեղծ է որքան կրնայ ըլլալ տղայ մը որ կը հաւատայ ուրուականներուն որոնց հեքեաթը իրեն պատմած են, եւ որ ի հարկին ինքն իսկ իրեն համար հեքեաթներ կը հնարէ: Հակառակ իր դասական կրթութեանը, սրտով ու երեւակայութեամբ կը մնայ միամիտ Լիթուանացի գեղջուկ մը: Գրական պարզ արուեստակութեամբ մը չէ որ նախահայրերուն բնաբան առած է Շէքսպիրի հռչակաւոր երկտողեանը.

Շատ աւելի բան կայ երկինքն ու երկրիս վրայ քան ինչ որ ձեր փիլիսոփայութիւնը կրնայ երազել:

Այս սողերը, կերպով մը իր ամբողջ կեանքին վարիչ առածը եղած են: Միշտ գիտութիւնը արհամարհած, երեւակայութիւնը պանծացուցած է:

Նախահայրերէն զատ՝ որոնց վրայ յետոյ բանաստեղծը ուրիշ դրուագ մը պիտի աւելցունէր, Վիլնայի մէջ հրատարակուած երկու հատորները կը պարունակէին զիւցազներգական քերթուած մը, Կրագիւնա, պալլադներ ու ռոմանսներ, եւ քնարական բանաստեղծութիւններ: Կրագիւնա պատմութիւնն է Լիթուանացի զիւցազներգի մը որ իր ամուսնոյն զրահը կը հագնի ու թշնամւոյն հետ կողեւելով կը մնանի: Այս քերթուածը Միցքիեվիչի սակաւաթիւ առարկայական գործերէն մէկն է: Դիւցազնութեան դասերը զոր Միցքիեվիչ կ'աւանդէր ատով, չկորսուեցան. թերեւս Կրագիւնան է որ էմիլիա Բլաթէրի անձնուիրութիւնն ու սխրագործութիւնները ներշնչած է(*). պալլադներն ու ռոմանսները գերմանական, անգլիական ու ռուսական զբոսորդներու ազդեցութեան տակ գրուած են. Միցքիեվիչ շատ զարնուած էր ժուքովսքի պալլադներուն: Լիթուանական աւանդութիւններ կը պատմին ատոնք, ոմանք ուղղակի ժԼ. դարուն սիրական դարձած ռոմանսներէն կը սերին: Միցքիեվիչ ատաջին հարուածով չթօթափեց ազդեցութիւնը այն վարպետներուն

(*) Էմիլիա Բլաթէր գլխաւոր գրգռիչներէն ու վարիչներէն մէկը եղաւ 1830ի բոլոնիական աղետամբութեան:

որոնք իր բանաստեղծական սկզբնաւորութեանց առաջնորդները եղան : Սակայն իր լաւագոյն պալլադները կրնան մրցիլ Կէօթէի , Շիլլէրի ու Վիկթոր Հիւկոյի պալլադներուն հետ : Անոնց լեզուն ճկուն , հարուստ , նրկարագել , ներդաշնակ է : Անոնցմէ մին , Ռոմանֆիզը տիտղոսով , գրական եւ փիլիսոփայական հաւատքի դաւանութիւն մըն է : Աղջկան մը աչքին իր մեռած սիրահարը կ'երեւայ . ուրուականին վրայ կը նստուի եւ մարած կ'իյնայ :

— «Ղալը մեր» մը ըսեք , կը գոչեն տեսողները : Անոր հոգին ալստեղ ըլլալու է : Եւստի ասոն եկած ըլլալու է իր Շառլօթին՝ զոր ողջ եղած ատենը այնքան սիրեց :

— Ու ես (բանաստեղծն է որ կը խօսի) մտիկ կ'ընեմ ու կը հաւատամ : կ'արտասուեմ եւ «Ղալը մեր» մը կ'ըսեմ :

— Մտիկ ըրէ , աղջիկ , կը գոչէ ծերունի մը այս իրաւանցումին մէջ , ապահով եզիր օր իմ աչքս ու ականջներս չեն կրնար սխալել , եւ ես բան մը չեմ տեսներ ձեր ըսածներէն :

«Ոգիները գինովի հնարք մըն են , անմտութեան արդիւնք եղող քմայք մը : Այս աղջիկը կը բանդագուշէ եւ ամբիւր բանականութեան գեմ կը հասցոյէ :»

Ես կը պատասխանեմ համարձակօրէն՝ — Այս աղջիկը կը զգայ , եւ այս ամբիւր կը հաւատայ խորապէս . զգացումն ու հաւատքը շատ աւելի բան կը սորվեցնեն ինծի քան գիտականին ակնոցներն ու աչքը :

«Դուն գիտես մեռած ճշմարտութիւններ , որոնք ռամկին անծանօթ են . շիւշէի մը մէջ , կամ աստղերուն զլլուումին մէջ դուն աշխարհ մը կը տեսնես : Բայց չես գիտեր կենդանի օրէնքները . դուն հրաշք պիտի չտեսնես . սի'րտ ունեցիր , սրտին մէջ նայէ :»

Կարեւորութիւնն չունի գիտնալ թէ վերջին տողը Կէօթէին նամակագրութիւն մըն է թէ ոչ : Այդ տողը Միցքիեվիչի գաւանանքը կ'ամփոփէ : Այդ գաղափարը պիտի կրկնէ ամէն ձեւերով : Ինքնատի բանաստեղծին գործունէութիւնը յանկարծակի ընդհատեցաւ այն հալածանքով որուն ենթարկուեցաւ 1823ին լիթուանական երիտասարդութիւնը : Ռուս կառավարութիւնը կասկածանքով նայիլ սկսած էր այն գաղտնի ընկերութեանց վրայ որոնք կազմուեի էին ուսանողներուն մէջ : Ատոնք բաւական անվնաս բաներ էին . բայց հայրենասիրութեան եւ հետեւաբար բարոսացման զպրոցներ կը ձեւացնէին : Միցքիեվիչ ձերբակալուեցաւ հոկտեմբեր 23ին ի Քովնօ եւ բանտարկուեցաւ ի Վիլնայ իր հին ընկերներէն շատերուն հետ Բանտարկեալներուն վիճակը , ինչ որ նոյն իսկ բանաստեղծին նկարագրութեանն կարելի է դատել , յարաբերաբար բաւական մեղմ եղաւ . երիտասարդները կաշառք կը կերցնէին պահպաններուն , ազատօրէն կը հաղորդակցէին իրարու հետ , կը հաւաքուէին թէյ սունելու , հայրենասիրական երգեր երգելու համար :

Այս անակնկալ դժբաղդութիւնը երիտասարդ բանաստեղծին հոգւոյն վրայ փրկարար ազդեցութիւն մը ունեցաւ . իրեն մոռցնել տուաւ

արհամարհուած սիրոյն տանջանքները , եւ իրեն յայտնեց բարձրագոյն սէր մը , հայրենիքին սէրը , քիչ մը խոնկականացած հայրենիքի մը , զոր օր մը Միցքիեվիչ պիտի ներկայացնէր իբրեւ տիպար ազգը , իբրեւ ազգերուն Քրիստոսը , աշխարհիս մեղքերուն համար մարտիրոսացած : Իր բոլոր սերերուն մէջ , պէտք է միշտ կրկնել այս կէտը , միշտ միատիքական , հոգեբորբոք , գերերկրաւոր բան մը գտնուեցաւ :

ԼՈՒԻ ԼԵՃԻ

(Շարունակելի)



ՆԱԽԱՀԱՅՐԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ — ՏԵՍԱՐԱՆ Բ .

ԲՈՒՐԱՏ , բանի խցիկին մեջ , մենակ , (*)

Մինակ . . . Ի՞նչ պէտք ունիմ ամբոխին . ամբոխի՞ն համար կ'երգեմ ես . ո՞վ է այն մարդը որ իմ երգերուս բովանդակած բոլոր մրտածմանը պիտի կարենայ տոկալ . ո՞վ պիտի հոգւոյս բոլոր ճառագայթներն ընդունի առանց աչուրները վար աննելու : Վա՛յ անոր որ ամբոխին համար կը յոգնեցնէ իր խօսքն ու իր լեզուն . լեզուն կը ստէ խօսքին ու խօսքը՝ մտածումին . . . մտածումը հոգւոյն մէջ արագ կը թռչի՝ խօսքին վրայ խրելէ առաջ , եւ բաւերը մտածումը կ'ընկիւղաւանեն ու մտածման վերեւ կը դողան , ինչպէս հողը կը դողայ ստորերկրեայ հեղեղի մը վերեւ : Հողին դողալէն՝ ամբոխը պիտի կարենա՞յ գուշակել հեղեղին խորութիւնը , անոր ալիքներուն ուղղութիւնը . . .

Զգացումը հոգւոյն մէջ կը շարժի , կը վաւի , կը հրդեհուի՝ ինչպէս արիւնը իր անտես ու խորունկ բանտերուն մէջ : Որքան մարդիկ արիւն տեսնեն իմ դէմքիս վրայ , այնքան ըզգացում կը գտնեն սողերուս մէջ :

Ո՞վ իմ երգս , ա՛ստղ՝ աշխարհիս սահմաններէն անդին . . . մահկանացու տեսողութիւն մը , նոյն իսկ բերեղեայ թեւեր փոխ աննելով , երբեք պիտի չկրնայ քեզի հասնիլ . քու յարդգողիդ միայն պիտի բաղխի , գուշակելով թէ

(*) Բոնրատ լեճ բանաստեղծ-հայրենասերի տիպարն է , «Կախահայրեր» քերթուածին զլիւսւոր անձնաւորութիւնը . Միցքիեվիչ անոր մէջ ինքզինքը պատկերացուցած է :

հոն արեւներ կան , բայց առանց գիտնալու անոնց թիւն ու անհունութիւնը :

Ի՞նչ փոյթ ձեզի համար , ո՛վ իմ տաղերս , մարդոց աչքերն ու ականջները . հոսեցէ՛ք իմ հոգւոյս անգուսններուն մէջ , չողացէ՛ք իմ հոգւոյս բարձունքներուն վրայ , ինչպէս ըստորերկրեայ հեղեղներ , ինչպէս անդրերկրաւոր աստղեր :

Աստուած , եւ դուն ընութիւն , մտիկ ըրէք ինձի : Ահա երգեր ձեզի արժանի , դաշնակութիւն մը ձեզի արժանի : Ես , վարպետ երգիչ , ձեռքերս կ'երկնցնեմ , մինչեւ երկինք կ'երկնցնեմ , աստղերուն վրայ կը դնեմ , ինչպէս անսահման արմոնիքայի մը ապակեայ գունդերուն վրայ . աստղերը , իմ շունչէս , կը տատանին՝ մերթ դանդաղ ու մերթ արագ շարժումով մը . միլիոնաւոր հնչիւններ կը թափին անոնցմէ եւ ե՛ս եմ միայն որ ծնունդ կուտամ անոնց , ես եմ միայն որ պանոնք իրենց անուններովը կը ճանչնամ : Չանոնք կը հաւաքեմ , կը զատեմ , նորէն քովէ քով կը բերեմ , գաշնակութեանց , ծիածաններու , տաղերու ձեռով կ'ընդելուզեմ , որոտման , կայծակի ձեռով կը ցրցքնեմ :

Ձեռքերս կը քաշեմ եւ աշխարհիս սահմաններէն վեր կը բարձրացնեմ : Ներգաշնակութեան գունդերը յանկարծ կանոյ կ'առնեն : Միս-մինակ կ'երգեմ , եւ ես իմ երգս մտիկ կ'ընեմ : Հովին ողբերուն նման երկայն ու գեղգեղուն նուազներ են , ժողովուրդներուն ովկիանը կը թափանցեն , ցաւին պէս կը հեծեն , փոթորկին պէս կը գոռան : Դարերը խուլ ձայնով դէմ կը բռնեն անոնց , եւ ամէն մէկ հնչիւնը կը թրթռայ եւ կը փայլի միանգամայն . գայն աչքերուս մէջ կը զգամ , սկանչիս մէջ կը զգամ : Այսպէս՝ երբ հովը կոհակներուն մէջ մոլեգնի , սուրումէն անոր արագութիւնը կ'իմանամ , ամպեղէն հագուստին մէջ անոր վազելը կը տեսնեմ :

Այսպիսի երգեր Աստուծոյ արժանի , ընութեան արժանի են : Այո՛ , տիեզերք-նուազը , արարչութիւն-նուազն է այս : Ամենակարողութիւնն է , անմահութիւնն է այս նուազը : Յաւիտենականութիւնը կը զգամ , եւ կարող եմ արտագրել զայն : Դուն ի՞նչ ըրիր ասկից աւելի մեծ , ո՛վ ընութեան Աստուած . . . Տե՛ս ի՛նչպէս այս մտածումները ես ինձմէ կը հանեմ . իմ խօսքերուս մարմինը զանոնք կը պատէ . կը թռչին , կը տարազնին երկնքին մէջ , կը թաւալին , կ'երգեն եւ լոյս կը սփռեն : Կը հեռանան . . . ու նորէն կը զգամ զանոնք , անոնց գեղեցկութեամբը կ'արբենամ , ձեռքիս տակ անոնց շրջադերը կը զգամ , մտքովս անոնց շարժումը կը գուշակեմ . կը սիրեմ ձեզ , ո՛վ իմ չողարձակ զակներս . . . ո՛վ դուք , իմ մըրտածունքներս . . . իմ աստղերս . . . զգացումներս . . . մրրիկներս . . . Ես ձեր մէջը այնպէս եմ ինչպէս հայր մը իր ընտանիքին մէջ , դուք ամենքդ իմ եք :

Ձեզ բոլորդ ոտնակոխ կ'ընեմ , բանաստեղծ-

ներ , իմաստուններ եւ գուշակներ զոր աշխարհս ասեմով մեծարեց : Եթէ ձեզի շնորհուէր գալ նորէն ապրիլ ձեր մտքին զակներուն մէջ , դարերու զրուստիքն ու ծափերը լսել եւ զանոնք արժանաւոր զգալ , եթէ ձեր ճակատները վերստին չողային բովանդակ փայլովը ձեր պսակներուն՝ որոնց վրայ անձնիւր օր ճաճանչ մը կ'աւելցնէ , հակառակ այդ յարգանքներու համանուագին եւ ա՛յնքան դարեբու եւ ազգերու մէջէն քաղուած այդ պսակներուն , դուք պիտի չկրնայիք զգալ ուժի ու երանութեան այն լրութիւնը զոր ես այսօր կը զգամ , այս մենաւոր գիշերին մէջ , երբ միս-մինակ կ'երգեմ , ինձի համար միայն , իմ մե-նաւոր հոգիիս խորը :

Այո՛ , ես զգայուն եմ , մտացի եւ հզօր : Երբեք զայդ ա՛յնքան զգացած չէի որքան այս պահուս : Այսօր իմ զենիթս կը հասնիմ , այսօր իմ գորութիւնս իր գագաթնակէտը կը բարձրանայ այսօր պիտի գիտնամ՝ ամենէն մե՞ծն եմ . . . Թէ ամենէն գոռոզը միայն : Այսօր ճակատագրի ժամն է , աւելի ուժեղ կերպով կը տարածեմ հոգւոյս թեւերը . Սամփսոնի ժամն է՝ երբ կոյր ու շղթայակապ , տաճարին սիւնին ոտքը կը խոկար : Այս կաւէ մարմինը պիտի թօթափեմ , ու հրեշտակապետի թեւեր պիտի զգենում . . . օ՛ դ , միջո՛ց պէտք է ինձի , որ պէսզի մոլորակներուն ու աստղերուն ոլորտէն անդին թռչիմ եւ Արարչին ու ընութեան յաւերժական սահմաններուն վրայ միայն կանգ առնեմ :

Ահաւասի՛ կ , ահաւասի՛ կ իմ երկու թեւերս . . . պիտի բաւե՛ն ինձի . պիտի պարզեմ զանոնք արեւմուտքէն մինչեւ արշալոյսը , ձախը անցեալին պիտի զարնեմ , աջը ապագային . . . ու սիրոյ ճառագայթներուն վրայէն մինչեւ քեզի՛ պիտի բարձրանամ . . . ու աշուրներս քու զգացմունքներդ պիտի թափանցեն , ո՛վ դուն որ երկնքին մէջ կը սիրես կ'ըսեն , ինչպէս ես կը սիրեմ աշխարհիս վրայ : Այո՛ , ե՛ս եմ մինչեւ հոս բարձրացայ : Տես ո՛րչափ մեծ է իմ գորութիւնս , տես մինչեւ ո՛ւր կ'ելլեն իմ թեւերս : Սակայն մարդ եմ ես . . . եւ մարմինս հոն երկրի վրայ մնաց : Հոն՝ իմ հայրենիքիս մէջ է որ ես սիրած եմ , հոն մնաց սիրտս . . . Բայց իմ սէրս , աշխարհիս մէջ միակ էակի մը վրայ չի հանգչիր՝ ինչպէս միջատը վարդի մը վրայ , ո՛չ ալ ընտանիքի մը , ո՛չ իսկ դարու մը վրայ . . . ես ամբողջ ազգ մը կը սիրեմ . . . բազուկներուս մէջ ընդգրկեցի անոր բոլոր անցեալ ու ապագայ սերունդները , հոս՝ սըրտիս վրայ սեղմեցի , բարեկամի մը , սիրահարի մը , ամուսնի մը , հօր մը պէս . . . կ'ուզեմ իմ սիրելի հայրենիքիս գարձընել կեանքն ու երջանկութիւնը . կ'ուզեմ աշխարհիս հիացման առարկան ընել զայն : Միջոցները չեմ գիտեր , ու հոս եկայ որ սորվիմ . կուգամ իմ մտքիս ամենակարողութեամբը պիտուած , այս մտքին որ երկնքին ձեռքէն կայծակը խնց , մոլորակներուն ընթացքը քննեց ու ծովին անդունդ-

ներուն մէջ սուզուեցաւ : Աղկից զատ , ես այն ուժը ունիմ որ մարդոցմէ չի ստացուիր , այն սէրը ունիմ որ ներսս կը վառի հրարութի մը պէս ու երբեմն միայն լավայէ խօսքերով կը միայն...

Եւ այդ զօրութիւնը եղեմի ծառէն , Բարեոյն ու Չարին ճանօթութեան պտուղէն չէ որ քաղած եմ , ո՛չ ալ գրքերու կամ զրոյցներու մէջ , ո՛չ խնդիրներու լուծման ո՛չ մոգութեան խորհուրդներու մէջ... արարիչ եմ ես . . . իմ ուժերս ինծի կուգան այն աղբիւրէն որմէ քու զօրութիւնդ կը բղխի , որովհետեւ դուն քու ուժդ ուրիշէն չես առած... քուկդ է ան... ու կորսնցնելու վախը չունիս... եւ ես ալ այդ վախը չունիմ : Այդ ուժը ինծի դուն տուած ըլլաս կամ ես իսկ զայն առած ըլլամ այնտեղէն ուրկից դուն առիր , աչքս կը թափանցէ ու կը հրամայէ . . . իմ զօրութեան վայրկեաններուս , եթէ աչուրներս զէպ ի ամպերուն կարաւանները բարձրացնեմ , եթէ ուղեւոր թռչուններուն հազիւ հազ տեսանելի թեւով զէպ ի հիւսիս սուրալը լսեմ , կը բաւէ որ կամենամ եւ յանկարծ նայուածքս կարծես զանոնք ցանցի մը մէջ կը պարուրէ : Թռչունները ահուգողի երգ մը կը հնչեցնեն , բայց մինչեւ որ ես զանոնք հովերուն չյանձնեմ , հովերը որ քեզի կը հպատակին պիտի չկարողանան զանոնք հալածել... եթէ հոգւոյս ամբողջ ուժովը գիտաւորի մը նայիմ , որչափ ատեն որ աչքերս զայն կալանաւորեն , անի տեղէն պիտի չչարժի... մարդերը միայն , սպականեալ , զաղփաղփուէն բայց անմահ , ինծի չեն ծառայեր , զիս չեն ճանչնար , կ'անգիտանան մեզ երկուքս , զիս ու քեզ... զանոնք զսպելու միջոց մը կուգամ փնտռելու հոս երկնքին մէջ : Այս կարողութիւնը որ ունիմ բնութեան վրայ ազդելու , կ'ուզեմ որ մարդոց սրտերուն վրայ ալ ունենամ... ձեռքի մէկ շարժումով թռչուններն ու աստղերը կը կառավարեմ , կ'ուզեմ այդպէս իմ նմաններս ալ կառավարել . ո՛չ թէ զէնքերով... անոնք միշտ չեն վիրաւորեր . ո՛չ թէ երգերով... անոնց ազդեցութիւնը դանդաղ է . ո՛չ թէ գիտութեամբ... անի շուտ կը հերքուի... ո՛չ թէ հրաշքով... չափազանց շողշողուն է այդ միջոցը . կ'ուզեմ զանոնք կառավարել սերովը որ կայ իմ մէջս , անոնց ամենքը կառավարել , ինչպէս որ դուն կ'ընես , խորհրդաւորաբար ու յաւիտենապէս : Ինչ ալ ըլլայ իմ կամքս , թո՛ղ իսկոյն զայն փուշակեն , եւ զայն կատարելով երջանիկ ըլլան . եթէ հակառակին , թո՛ղ տառապին ու մեռնին : Թող մարդիկ այլ եւս ինծի համար այնպէս ըլլան ինչպէս մըստածումներն ու բառերը որոնցմով կարող եմ ուզածիս պէս օրհներգներու շէնք մըստեղծել : Կ'ըսեն թէ դուն այսպէս կը թագաւորես... Դուն գիտես թէ մտածումը չապականցի , լեզուն չաղքատցուցի . ա՛խ , եթէ ինծի հոգիներուն վրայ ազդելու նոյնչափ կարող ընէիր... իմ ազգս կենդանի օրհներգի ձեւով

պիտի ստեղծէի : ու սքանչելիքներ պիտի գործէի՝ քուկիններէդ աւելի վեհ . իմ արարչութիւնս երջանկութեան երգ մը պիտի ըլլար...

Տո՛ւր ինծի հոգիներուն տիրապետութիւնը... ա՛յնքան կ'արհամարհեմ այս անկենդան շինուածքը զոր ամբողջ տիեզերք կ'անուանէ եւ որուն վրայ հիանալը իրեն սովորութիւն դարձած է , որ դեռ չեմ փորձած թէ իմ խօսքս պիտի չբաւէ՞ր արդեօք զայն կործանելու : Բայց կը զգամ ներքնապէս որ եթէ կամքս ճնշէի ու յանկարծ պայթեցնէի , պիտի կարենայի հարիւր աստղ մարել եւ ուրիշ հարիւր հատ վառել... որովհետեւ անմահ եմ ես... արարչութեան ծոցին մէջ ուրիշ անմահներ ալ կան... բայց չեմ ճանչնար ոչ մէկը որ ինձմէ բարձր ըլլայ : Ո՛վ դուն որ առաջինն ես երկրնքին մէջ , կուգամ քեզ հարցաքննել , ես՝ երկրիս մտացի էակներուն առաջինը... դեռ չեմ հանդիպած քեզի , կը գուշակեմ որ կաս դուն... ցուցո՛ւր ինքզինքդ , եթէ կ'ուզես որ քու գերիշխանութիւնդ ընդունիմ... զօրութիւնը կը խնդրեմ քենէ . տո՛ւր . ապա թէ ո՛չ ես կը գտնեմ անոր ճամբան : Ինծի ըսած էին թէ մարդարէներ գոյութիւն ունեցած են , որոնք հոգիներուն տիրած են... կը հաւատամ . բայց անոնց կրցածը ես ալ կրնամ... ես կ'ուզեմ ունենալ զօրութիւն մը քուկինիդ հաւատար , կ'ուզեմ հոգիները կառավարել ինչպէս որ դուն կը կառավարես : (Յրկարատեւ յոռոքիւն) :

(Հեզկուսիէս) . Լո՛ւռ կը մնաս : Չե՞ս պատասխաներ : Կը գուշակեմ հիմա , ճանչցայ քեզ . կը տեսնեմ , կը հասկնամ թէ դուն ի՛նչ ես եւ թէ ի՛նչպէս կը կառավարես : Սուտ խօսեցաւ այն որ քեզ Սէր անուանեց : Դուն ի՞մաստութիւն ես միայն : Մտքով է եւ ոչ թէ սրտով որ մարդիկ քու ճամբաներդ պիտի երեւան հանեն , մտքով է եւ ոչ թէ սրտով որ քու զէնքերուդ մթերանոցը բանալու կարող պիտի ըլլան... այն որ գրքերուն , մետաղներուն , թիւերուն , դիակներուն մէջ կը խորասուզուի , ա՛յն է որ կը յաջողի քու զօրութենէդ մաս մը իւրացնել : Ան կը գտնէ թոյնը , վառօդը ու շողին , կը տարբարակել լոյսը , մուխը եւ ձայնը , կը հնարէ օրինականութիւնը եւ նենգամտութիւնը՝ անմիտներն ու դիտունները արմնցնելու համար . . . աչխարհս մտքերուն ձեռքը ձգեր ես , ու կը թողուս որ սրտերը յաւիտենական ամլութեան մը մէջ հիւծին . ատոր համար է որ ամենէն կարճ կեանքը եւ ամենէն հզօր սէրը տուիր ինծի : (Լոռոքիւն)

Ի՞նչ է սէրը , քու աստուածային մասնիկդ , — Կա՛յծ մը : Եւ ի՞նչ է մարդկային կեանքը այս յեղեղուկ աչխարհին մէջ . — Վայրկեան մը միայն :

Ի՞նչ է քնացող փայլակը որ մըրիկին անջ կը պահուրտի . — Կա՛յծ մը : Եւ անցեալ դարձոր որ պատմութեան մէջ կը ծածանին . — Վայրկեան մը միայն :

Ո՞րակից կը ծնի այս զաղփաղփուն մարմինը որուն ղեջ

միտքս կը շողայ . — կայծէ մը : Եւ Խ՞նչ պիտի ըլլայ
օր մը մահը որ ինծի կը սպասէ . — վայրկեան մը
միայն :

Խ՞նչ է Աստուած , աշխարհը և տիեզերական հողին .
— կա՛յծ մը : Եւ Խ՞նչ պիտի ըլլան՝ ժամանակներու
վախճանէն յետոյ . — քանի մը վայրկեան :

ՁԱԽ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ Ա.Ձ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ
Իր հոգևոյն վրայ կը հեծնեմ | Անմի՛տ ... պաշտպանենք
Ինչպէս երեկարի մը վրայ .. զինքը, գլուխը մեր թեւե-
յառաջ ... քառասոր՛ի ... | րովը պաշարենք :

ՔՈՆՐԱՏ

Վայրկեաննե՛ր ... կայծե՛ր ... Երբ բոցա-
վառին ու ընդլայնին , կը ստեղծեն կամ կը
քանդեն ... խրախո՛յս ... նորէ՛ն ... տարա-
ծենք , երկարենք այս վայրկեանը ... խրա-
խո՛յս ... նորէ՛ն ... արթնցնենք , արծարծենք
այս կայծը ... լա՛ւ , շատ լա՛ւ է : Անգամ մըն
ալ կը կոչեմ քեզ , քեզի կը բանամ իմ հլու
հողիս ... Լ՞ո՛ւռ կը մնաս : Ի՞նչն չե՞ս որ Սա-
տանին հետ կուտես : Ասպարէզ կը կարգամ
քեզի հանդիսաւորապէս : Մի՛ արհամարհեր զիս .
աննեցուկ չեմ ես . թէպէտ այստեղ մի-
այնակ , կրցայ մինչեւ քեզի բարձրանալ :
Սրտովս եղբայր եմ աշխարհիս վրայ գտնուող
մեծ ժողովրդի մը հետ ... դաշնակից ունիմ
բանակներ , պետութիւններ ու գահեր ... Եթէ
քեզի հայրոյս , Սատանին մենամարտը պիտի
կրկնուի ... եւ աւելի մահաւոր պիտի ըլլայ ...
Ան ոգի ոգևոյ զէմ կը մարտնչէր քու հետդ , ես՝
սիրտ սրտի զէմ ... Ես տառապած , սիրած ,
մեծցած եմ չարչարանքներու եւ սիրոյ մէջ :
Երբ իմ հոգևոյս երջանկութիւնը խլեցիր
ինձմէ , ձեռքս իմ սրտիս արիւնովը միայն կար-
մըրցուցի . երբեք ձեռքս քու վրայ չվերցուցի :

ՁԱԽ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ Ա.Ձ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ
Երեկա՛ր , քեզ թաշուռի կը | Ասո՛ւպ ... Ի՞նչ զտառն-
փոխեմ . քու արծուի թեւե- | ցանք . . . դուն շողշողուն
բող վրայ , դնա՛ , բարձրա- | կը դուրիս անդուռն ի
ցի՛ր : Թու՛ր ... | վար :

ՔՈՆՐԱՏ

Հիմա , հողիս իմ հայրենիքիս մէջ մարմնա-
ւորուած է եւ անոր հողին իմ մարմինս հա-
գած է : Հայրենիքս ու ես ա՛լ մէկ ենք : Ես
Միլիոն կը կոչուիմ ... վասն զի միլիոնաւոր
մարդիկ կը սիրեմ ու անոնց համար կը տառա-
պիմ : Իմ սգաւոր հայրենիքս կը դիտեմ ինչպէս
զաւակ մը իր կոշկոճանքի անիւին կապուած
հայրը կը դիտէ . իմ ամբողջ ազգիս ցաւերը
կը զգամ ինչպէս մայր մը ընդերքներուն
մէջ կը զգայ իր ծնելիք զաւակին ցաւերը ...
կը տառապիմ ... կը զառանցեմ ... եւ դուն ,
մի՛շտ իմաստուն , եւ դուն , մի՛շտ զուարթ ,
կը տերպակտես , կը դատես , եւ քեզ անսխա՛լ
կը հռչակեն : Մտիկ ըրէ՛ . Եթէ իմ պատանե-
կութեանս հաւատքը , եթէ իմ որդիական հա-

ւատքս սին խաբէութիւն մը չէ , եթէ իրաւ է
որ դուն զիս կը սիրես , ինչպէս որ աշխարհը
կը սիրէիր՝ զայն ստեղծած ատենդ , եթէ հայ-
րական գորով մը կը տածես քու ձեռակերտիդ
համար , եթէ միակ սիրող հողի մը կար այն ան-
համար էակներուն մէջ զոր ապականին մէջ բան-
տեցիր ջրհեղեղէն ազատելու համար . . . Եթէ
այս սիրտը հրէշ մը չէ՝ դիպուածէն ծնած եւ
որ ժամանակէն առաջ կը մեռնի . . . Եթէ քու
թագաւորութեանդ մէջ , զգացումը անկար-
գութիւն չի համարուիր . . . Եթէ «գթութիւն»
ազդակող միլիոնաւոր մարդիկը իբրեւ ի
սպառ անլուծելի հաւասարութիւն մը չես նը-
կատեր . . . Եթէ սէրը ո՛ր եւ է օգտակարութիւն
մը ունի աշխարհիս վրայ եւ քու կողմէդ
հաշուի սխալ մը չէ լոկ . . .

ՁԱԽ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ Ա.Ձ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ
Թող արծիւը հիդրա՛ | Թափառիկ գիսաւոր՝ տ-
դաւնայ , թող կուրանա՛յ . . . | րեւէն բխած , ո՞ւր է նը-
Յարձակե՛ . . . ցաւա՛ջ . . . | պատակակտը սլացքիդ . . .
միա՛ , որստա՛ , գոռա՛ . . . | անվե՛րջ . . . անվե՛րջ . . .

ՔՈՆՐԱՏ

Լ՞ո՛ւռ կը մնաս ... ա՛խ , քեզի սրտիս խորքը
յայտնեցի . . . կը պաղատիմ , տո՛ւր ինձի
զօրութիւն . . . միակ բեկոր մը , մասնիկ մը
այն ուժէն զոր աշխարհիս վրայ գոռոզու-
թիւնը ձեռք ձգած է . . . այդ մասնիկով ո՛ր-
քան երջանկութիւն պիտի կարենայ ստեղծել .
Լ՞ո՛ւռ կը մնաս ... է՛հ , ուրեմն բանակա-
նութիւնս թող ստանայ ինչ որ սրտիս կը զը-
լանաս . . . Կը տեսնես , մարդերուն ու հան-
ձարներուն ամբոխին առաջինն եմ ես . . . քեզ
քու հրեշտակապետներէդ շատ աւելի լաւ կը
ճանչնամ . . . Ես արժանի եմ քու զօրութեանդ
մասնակից ըլլալու . . . Եթէ սուտ ըսի , պա-
տասխան տուր . . . Խ՞նչ , մի՛շտ լուութիւն . . .
Բազուկիդ ուժին վրայ ապահով , կ'արհամար-
հե՞ս զիս . . . զիտցիր ուրեմն որ սէրը կը
լափէ ու կը սպառէ ինչ որ անմատչելի է . . .
Կը տեսնե՞ս այս ներքին վառարանը որ իմ մէջս
կը բորբոքի , սէ՛րը : Կը կեդրոնացնեմ զայն
եւ կը սեղմեմ՝ անոր տաքութիւնը բազմա-
պատկելու համար . իմ կամքիս երկաթէ շըր-
ջանակին մէջ կը պնդեմ զայն , ինչպէս վա-
նօզը կործանարար հրացանափողի մը մէջ .

ՁԱԽ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ Ա.Ձ ԿՈՂՄԷՆ ՁԱՅՆԵՐ
Պարպե՛ . . . կրա՛կ . . . | Գթութիւն . . . զըջո՛ւմ . . .

ՔՈՆՐԱՏ

Պատասխանէ՛ . . . որովհետեւ պիտի շանթա-
հարեմ քու արարչութիւնդ . . . Եթէ չփլցնեմ ,
գոնէ պիտի դրոզեմ քու բնագաւառներու դրո-
վանդակ անհունութիւնը : Չայն մը պիտի ար-
ձակեմ ընտելեան բովանդակ շրջածիքին մէջ ,
ձայն մը որ սերունդէ սերունդ պիտի թնդայ .

պիտի ըսեմ թէ զուն տիեզերքին Հայրը չես ,
այլ . . .

ԴԵՒՆ ԶԱՅՆԸ

Չ ա' ր ւ :

(Քոնկրաս կը դանդաղէ վարկեան մը , կը նու-
աղի եւ կ'իյնայ):

ԱՏԱՄ ՄԻՃՔԻԵՎՍԿԻ



ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՇԵՏ



Կ. Եղեանց. — Մեծն Պետրոսի յարաբերութիւնները
Հայ ժողովրդին հետ: — Վկայաթղթեր՝ Մսակուսի գե-
ւանատունէն , Ռուսական Արտաքին գործոց նախարա-
րութեան գիւսնատունէն քաղուած , են . — Ս. Բեթերս-
պուրկ , 1898 : (Տպարան գիտութեանց կայտերական
ակադեմիային):

Պարզ է այժմէն թէ ոուս կառավարութեան
եւ հայ ազգին միջեւ հպումը , որ տեղի ունե-
ցած է ասկէ երկու դար առաջ , այդ ազգին համար
պիտի ունենայ հետեւանքներ այնքան ծան-
րակշիռ—թերեւս աւելի ծանրակշիռ—որքան
հպումը զոր ատենով ունեցաւ պարսկական
պետութեան հետ . ազգին ճամբուն « մէկ ան-
կրկնադարձքն » է այդ , — եթէ կարելի է
զեռ այս բացատրութիւնը կիրարկել՝ անոր
ա՛յնչափ չարաչար գործածումէն յետոյ : Հրա-
տարակելով այն բոլոր վկայութիւնները զոր
կրցած է գտնել Հայոց եւ Ռուսաց այս առա-
ջին հանդիպմանը մասին , այդ վկայաթղթերը
կարգաւոր վիպումով մը լուսաբանելով եւ
երկու ազգերուն յարաբերութեանց պատմու-
թիւնը հասցնելով մինչեւ Վրաստանի տիրա-
պետումը , Պ . Կ . Եղեանց Հայոց ժամանա-
կակից պատմութեան ամենէն գեղեցիկ նիւթը
ձեռք առած է :

Բարերադարար Պ . Եղեանցի վիպումը
պարզ մեկնաբանութիւնն է այն գիւսնական
վկայութիւններուն որոնք գրքին էական մասը
կը կազմեն . եթէ հեղինակին յայնաւոր իւրա-

քանչիւր իրողութիւնը ամենէն անհերքելի
ապացոյցներով ընկերացած չըլլար , մարդ
դժուարաւ պիտի կարենար տարակուսանքի զգա-
ցում մը արգելել , ա՛յնքան պատմուած պա-
տահարները տարօրինակ են , գէթ սկիզբը .
ընթերցողին կը թողունք դատել :

Ժէ . դարուն վերջին տարիներուն մէջ , Եո-
հան Վիլհելմ անուն պալատունի կայսրնարին
(électeur palatin) արքունիքը հայազգի ար-
կածախնդիր մը կը տեսնուի Խորայէլ Օրի ա-
նունով որ ինքզինքը սերած կը հռչակէ
Ղարաբաղի իշխանական մէկ գերդաստանէն ,
Պոռչեանց գերդաստանէն . երբեք ստուգուած
չէ թէ այդ հռչակումը ո՛ր աստիճան ճիշդ է .
միայն կը տեսնուի վկայաթղթերէն թէ Հա-
յաստանի մէջ իր ճամբորդութեանցը միջոցին ,
Օրի խնամքով խոյս կուտայ իր կարծեցեալ
ընտանիքին հետ ո եւ է յորաբերութիւն ու-
նենալէ : Ինչ ալ ըլլայ իր ծագումը , ստու-
գապէս գիտենք թէ Օրի տասերկու տարիի չափ
վաճառականութիւն ըրած էր Ֆրանսայի մէջ ,
թէ յետոյ քանի մը տարի պալատունի կայսր-
նարին արքունիքին մէջ ծառայելով անցու-
ցած էր . այսպէսով կրցաւ ներկայանալ այդ
իշխանին . պարզեց անոր այն ողբալի կացու-
թիւնը որուն մէջ կը գտնուէին քրիստոնեայ
ժողովուրդները մահամտականներուն ձեռքով ,
եւ Հայերը հողմէական եկեղեցւոյն ծոցը
մտցնելու կարելիութիւնը ընդնշմարել տուաւ .
ի վարձատրութիւն անոնց շնորհելիք պաշտ-
պանութեանն եւ օգնութեանը , պալատունի
կայսրնարիւրը Հայոց կողմէ պիտի ճանչցուէր
իբրեւ անոնց վեհապետը . Եոհան Վիլհելմ ,
գերման միւս պզտիկ իշխաններուն պէս՝ թա-
վաւոր ըլլալու մարմաջէն բռնուած՝ անոր
խօսքին ականջ կախեց . Պ . Եղեանց , բաւա-
կան միամտաբար , կայսրնարին այսպիսի նը-
պատակ մը ունենալուն վրայ տարակոյս կը
յայտնէ , « վասնզի , կ'ըսէ , անոր թղթերուն
մէջ չկայ բան մը որ այդպիսի գիտաւորու-
թիւն մը ցուցնէ » բայց բնական չէր արդէն
որ պահպանուած պաշտօնական գրութիւննե-
ներուն մէջ այդ թաքուն գիտաւորութիւնները
կարենային յիշատակուած ըլլալ : Իսրայէլ Օրի
պաշտօնով Հայաստան ղրկուեցաւ , ուր հասաւ
1699ի գարնան . անմիջապէս տեսաւ որ Հոռոմի
հետ միացման ծրագիրը հայ եկեղեցական իշ-
խանութեանց մօտ նպաստաւոր ընդունելու-
թիւն մը չէր կրնար գտնել , չպնդեց , եւ
սասնհինգ օրուան չափ Հայաստան մնալէ յետոյ :

վերադարձաւ՝ հետը բերելով Մինաս Տիգրան-
եանց վարդապետը որ ա՛լ այնուհետեւ իր հա-
ւատարիմ ընկերը եղաւ : Այս ճամբորդութեան
իբրեւ արդիւնք՝ նամակներ կը բերէր կայսր-
ընտրին , Պապին եւ Չարին ուղղուած , նա-
մակներ զոր անշուշտ ինքը իր ձեռքովը գը-
րած էր եւ որոնց մէջ ազնուատոհմ գերդաս-
տաններու տասը պետեր կը յայտարարէին թէ
Իսրայէլ Օրի վրայ բացարձակ վստահութիւն
ունէին եւ Հայաստանի թագը կ'առաջարկէին
պալատունի կայսրընտրին . Պ . Եզեանց զըժ-
բաղդարար ոչ մէկ բացատրութիւն չի տար
այդ անձնաւորութեանց ի՛նչպիսի մարդիկ ըլլա-
լուն եւ ո՛ր աստիճանի իրական կարեւո-
րութիւն ունենալուն վրայ :

Նոհան Վիլհէլմ վհատած չ'երեւար Իսրայէլ
Օրիի ճամբորդութեան յառաջ բերած այս
գուզնաքեայ արդիւնքէն . 1699ի սեպտեմբե-
րին իր պատուիրակէն կ'ընդունէր լիակատար
յատակագիծ մը Հայաստանի միջամտութեան
(գրութիւն Ը .) եւ ստիպուած ենք կարծելու
թէ այդ յատակագիծին հաւատք ընծայեց , քա-
նի որ անմիջապէս իրեն պարտք համարեցաւ
զայն գործագրելու սկսիլ : Հոնոսի ափունք-
ներէն մինչեւ Հայաստան երթալու համար
պէտք էր Աւստրիայէն եւ Ռուսաստանէն անց-
նիլ . կայսրընտրը Իսրայէլ Օրին զրկեց Չա-
րին , Վիեննայի ճամբով :

Օրի հասաւ ուրեմն Ռուսիոյ արքունիքը ,
այլ եւս ոչ թէ իբրեւ անձանօթ բաղդախըն-
դիր մը , այլ գերման վեհապետի մը իբրեւ
պաշտօնական ներկայացուցիչը : Իսկոյն բա-
ւական լաւ ընդունելութիւն գտաւ եւ—կա-
րեւոր բան՝ մարդու մը համար որ զբամական
քիչ միջոց ունէր կամ բնաւ չունէր—այնտեղ
անցուցած ամբողջ ժամանակը իր բոլոր ծախ-
քերուն զրամը ըստացաւ . հոս գործը կը սկսի
լրջանալ , եւ Օրի, որուն քով ոչ խելք կը պակ-
սէր ոչ ալ քաղաքագիտական հասկացողու-
թիւն , այդ բանը բմբռնած ըլլալ կ'երեւայ :
Շարունակելով հանդերձ կայսրընտրին ներկա-
յացուցչի տիտղոսին վրայ կրթնիլ , ջանալու
կ'ելլէ Մեծն Պետրոսը եւ իր խորհրդական-
ները համոզել թէ ստիպողապէս կարեւոր էր
միջամտել ի Հայաստան եւ թէ մանաւանդ
վերջին ծայր դիւրութեամբ կարելի է ար-
շաւանք մը գործել Պարսկաստանին պատկա-
նող հայկական նահանգներուն մէջ : Այդ մի-
ջոցին , պալատունի կայսրընտրը , Սպանիոյ
յաջորդութեան գործերուն մէջ բռնուած , սաս-

տիկ նեղութիւն կը քաշէր իր ժառանգական
երկիրները պահպանելու համարեւ չէր կրնար
նոր թագ մըն ալ գլուխը անցընելու մտածել :
Իսրայէլ Օրի ստիպուեցաւ ուրեմն բոլորովին
Մեծն Պետրոսի կողմը դառնալ :

Այս անգամ իր գործունէութիւնը յաջողու-
թեան հաւանականութիւններ ունէր : Մեծն
Պետրոսի պետութիւնը իրապէս սահմանակից
էր Պարսկաստանին . կարելի էր դիւրաւ բա-
նակ մը զրկել հոն . միւս կողմէ Ռուսիոյ երի-
տասարդ փառասիրութիւնները աւելի դիւրաւ
կրնային իրենց դոհացում գանել Արեւելքի
կազմալուծուած թագաւորութիւններուն դէմ
քան թէ Արեւմտեան Եւրոպայի վաղեմի պե-
տութեանց վրայ . Ռուս կառավարութիւնը մեծ
կարեւորութիւն տուաւ այն բոլոր խօսքերուն
որով Իսրայէլ Օրի—չառ իրաւամբ—կը ցուցը-
նէր պարսկական իշխանութեան խախուտու-
թիւնը կովկասի նահանգներուն մէջ . հրատա-
րակուած գրութիւններուն շատերէն կը տես-
նուի թէ ի՛նչպէս Ռուսերը Օրիին ճշգիւ տուին
իր բոլոր բացատրութիւնները ու բոլոր ծրա-
գիրները . առջի վայրկեանէն , ռուս կառա-
վարութիւնը յայտնապէս այդ գործին տեղ մը
յատկացուց սրպէսզի պատեհ ժամանակին
զայն ձեռք առնէ :

Բայց այդ ժամանակը չէր եկած , Մեծն
Պետրոս այն միջոցին զբաղած էր Շուէտի հետ
իր պատերազմովը , եւ չէր ուզեր ուրիշ տեղ
բան մը սկսիլ՝ այդ կողմէն իր նպատակին
հասնելէ առաջ : Իսրայէլ Օրիի բանակցութիւն-
ները չէին կրնար ուրեմն անմիջապէս ար-
դիւնքի մը յանդիլ : Սյուս հանդերձ իր ժամա-
նակը նորէն բոլորովին չէր կորսնցներ . տա-
կաւ առ տակաւ ռուս կառավարութեան
վստահութիւնը կը շահէր եւ կը յաջողէր
ինքզինքը Չարին ճանչցնելու . 1703ին Մեծն
Պետրոսի բարեացակամութենէն խնդրեց եւ ըն-
դունեցաւ գնդապետի տիտղոսը . միեւնոյն
ատեն , ըստ որում ժամանականաւոր կերպով
Ռուսիոյ մէջ ընելիք բան մը չկար , նոր ծրա-
գիր մը կազմեց . ուզեց որ զինքը իբրեւ գետպան
զրկին Պարսից Շահին մօտ : Ատոր համար Եւ-
րոպա վերադարձաւ 1704ին : Պալատունի
կայսրընտրը յօժարակամ տուաւ իրին ազգա-
բարագիր մը Շահին ուղղուած՝ այն կեղեքմանց
մասին զոր կը կրէին անոր քրիստոնեայ հպա-
տակները . բայց Օրի ոչինչ կրցաւ խել լէտ-
բոլա կայսրէն . Մոսկուա դարձաւ 1706ին՝ այս
նոր ձեռնարկութեան պատրաստութիւնը ա-

ւարտելու համար : Հաւաքեց բաւական բազմաթիւ հետեւախումբ մը՝ ամէն երկրէ մարդոցմէ կազմուած—ի միջի այլոց Հոլանտացի գիտնական Եռաքիմ Շոէօտէրը որ կ'ուզէր Պարսկաստան երթալ արեւելեան լեզուները ու սումնասիրել—, եւ ձեռքը ունենալով Ջարին մէկ յանձնարարադիրը Շահին ուղղուած, Պարսկաստան մեկնեցաւ 1707ին իբրեւ «Պապին պատուիրակ» կամ մանաւանդ ինքզինքը այդպէս ներկայացնելով : Պ. Եզեանց վատիկանէն քաղուած ո եւ է գրութիւն չի նշանակեր որ այս անակնկալ տիտղոսը արգարացնէ :

Իսրայէլ Օրիի ժամանումը Պարսկաստանի մէջ շատ ծանրակշիռ տպաւորութիւն մը յառաջ բերաւ, Յիսուսեանի մը պատմածին նայելով, որ այդ միջոցին հոն իբր միսիոնար զրկուած էր եւ որ Պարսկաստանի մէջ անցած դարձածին վրայ տեղեկագրութիւն մը հեղինակած է : Շահին կառավարութիւնը սարսափեցաւ. թէպէտեւ Ջարին կողմէ պաշտօնապէս զրկուած չէր Օրի, այդ վեհապետին անունը շատ բարձր կը հնչեցնէր. առիթ չէր փախցնել միանգամայն իր իշխանական ժագմանը վրայ խօսելու համար. իր անունին լատիներէն տառերը, *Israël Ori*, տեղափոխելով *Il sera roi* խօսքը կը ձեւանար : Շահին կառավարութիւնը մտածեց թէ ձեռք առնուելիք ամենէն խոհեմ միջոցն էր այդ անարկու անձնաւորութեան լաւ ընդունելութիւն մը ընել. բաւական երկայնատեւն մնալէ յետոյ, Օրի մեկնեցաւ Պարսկաստանէն, թէեւ ճշգիւ չենք գիտեր թէ ի՛նչ կրցաւ ընել այնտեղ : Իր պատուիրակութիւնը ուղղակի մեծ արդիւնքներ տուած ըլլալ չի թուիր. բայց ամենակարեւոր անուղղակի արդիւնք մը ունեցաւ. այն սարսափը զոր Շահին կառավարութիւնը զգաց Օրիի պատուիրակ զրկուելովը բաւական եղաւ այդ կառավարութեան ծայրագոյն տկարութիւնը ամենապայծառ կերպով երեւան հանելու, եւ քիչ յետոյ լուրջ ապստամբութիւն մը ծագեցաւ : Իսրայէլ Օրի ճիշդ գատողութիւն մը ունեցած էր ուրեմն երբ հաշուած էր թէ Պարսկաստանը այլեւս զիմադրութեան ո եւ է ուժ չունէր. այդ էր որ ոռս կառավարութեան համար կարեւոր էր դիտնալ, եւ այդ տեղեկութիւնը պարապը չգնաց. բայց Օրի բազմ չունեցաւ իր ճիգերուն պտուղը վայելելու. Պարսկաստանէն դարձին՝ մեռաւ Աստրախանի մէջ 1711ի օգոստոս ամսոյն եւ թաղուեցաւ Հայոց եկեղեցոյն մէջ հայկական ծէսով : Ոչ մէկ արդիւնք ձեռք

ձգած ըլլալու ձեւն ունէր. իր ետին կը թողուր անվճար մնացած հետեւախումբի մը բեկորները որոնք տեղական ոռս պաշտօնատարներուն չարակամութեանը դէմ մաքառելու ստիպուեցան : Իրականութիւնը այն է որ ոռս կառավարութիւնը ուշադրութիւն դարձուցած էր Պարսկաստանի եւ հայկական խնդրոյն վրայ. Օրիի գործածած միջոցները կրնան երբեմն չփոթեցնող ու գրեթէ միշտ արտաոց երեւնալ. սակայն կարելի չէ ուրանալ որ այդ մարդը, միմիայն իր ճարպիկութեամբը, նախադրելիք եղած է Ռուսիոյ յառաջխաղացութեանը դէպ ի Գովկաս եւ Պարսկաստան. արտաքոյ կարգի է այն դերը զոր յաջողած է կատարել միմիայն իր անձնական ուշիմութեամբն ու ճարտարութեամբը. մեռնելէ առաջ՝ կրցած էր ճանչցնել ոռս կառավարութեան սա երկու էական բաները, նախ՝ Պարսկաստանի ծայրայեղ տկարութիւնը եւ երկրորդ՝ սա իրողութիւնը թէ Հայերը, մասնաւորապէս Ղարաբաղցիները, կը սպասէին եւրոպական միջամտութեան մը որ կարենար իրենց կառավարութիւնը բարւոքել եւ թէ արգելնաւոր օգնութիւն մը պատրաստ էին հասցնել աւնոր. այլեւս ուրիշ բան չէր մնար բայց եւ թէ հետեւութիւնները հանել այս տեղեկութիւններէն :

Մինաս վարդապետը շարունակեց Օրիի սկըսածը. պատուիրակութեան գործերուն հաշիւները մաքրելէ յետոյ—ինչ որ բաւական զփուար եղաւ,—Պարսկաստան մեկնեցաւ տեղեկութիւններ հաւաքելու համար եւ իբր միջնորդ ծառայեց ոռս կառավարութեան եւ Հայերուն միջեւ : Անգամ մը որ Նիսիաթի հաշտութիւնը կնքուեցաւ 1821ի օգոստոսին, Մեծն Պետրոս պատրաստուեցաւ միջամտելու Պարսկաստանի մէջ. իրենց կողմէն՝ Վրացիներն ու Հայերն ալ ոտքի ելան. 1722ի օգոստոսին Ռուսերը Տէրպէնար առին. բայց սպասուած ռազմամթերքները չհասան. Չարը Աստրախան դարձաւ եւ վրական ու հայկական ուժերը, մահմետականներու վրէժխնդրութենէն խուսափելու համար, ցրուելէն ու պահուրտելէն ուրիշ միջոց չգտան : Սակայն Պետրոս իր արշաւանքը կը շարունակէր գրաւելու համար Գասպից ծովուն ափունքները որոնց իրօք ալ յաջողեցաւ տէր դառնալ 1724ին, Պարսկաստանի եւ Տաճկաստանի նեո մէկ քանի բանակցութիւններէ յետոյ :

Բնականաբար այս բոլոր զէպքերը ուրիշ արգիւնք չէին ունեցած բայց եթէ Հայոց կացութիւնը աւելի վատթարացնել Պարսիկները կ'ամբաստանէին զանոնք—եւ իրաւունք ունէին—թէ պատճառ եղած էին Ռուսերուն իրենց կողմը ուղղուելուն եւ զանոնք առաւել քան երբեք կը հարստահարէին . կացութիւնը այնքան անհանդուրժելի դարձաւ որ մաս մը Հայեր Տաճկաստան գաղթեցին : Գրիստոնեայ ազգաբնակութիւնները թախանձանքով կը խնդրէին ու կը սպասէին Չարին պաշտպանութիւնը , բայց ոուս կառավարութիւնը գիտէ թէ միշտ հարստահարուած ժողովուրդները այդ պատճառով իսկ միշտ պատրաստ են իրենց շնորհուած պաշտպանութիւնը սիրով ընդունելու , ու հետեւաբար միայն այն վայրկեանին կը գործէ երբ պարագաները միջամտութիւնը զիւրին կամ իր սեպհական շահերուն տեսակէտով հարկաւոր կը դարձնեն : Ճշմարիտ է որ Մեծն Պետրոս յայտարարեց թէ Հայերը իր պաշտպանութեանը տակն առած է—Պ.Ն. զեանց այդ խօսքը իր գրքին նշանաբան է ըրած , —եւ թէ քրիստոնեայ ժողովրդի մը համար անհնարին էր Գրիստոնէից պաշտպանութենէն հրաժարիլ : Բայց իրականապէս ոչինչ կատարուեցաւ , կամ գոնէ ոչինչ որ որ լուրջ կերպով մը Ռուսիոյ ուժերը այդ նպատակին ծառայեցուցած ըլլար :

Չարը ուրիշ բան չգտաւ ընելիք ի նպաստ Հայոց բայց եթէ առաջարկել անոնց որ գան հաստատուն Գասպից ծովուն իր նոր տիրած ափունքներուն վրայ , որոնք զիտենք թէ ո'րքան քիչ հիւրընկալ են , եւ իրօք իրեն օգտակար կը թուէր այդ տեղուանքը գտնուող մահմետական ազգաբնակութեան վրայ աւելցընել կարեւոր քրիստոնեայ տարր մը : Բնականաբար Հայերը մերժեցին Ղարաբաղի հովիտները եւ Արարատի դաշտին ովասիոնները ձգելով Մազինտերան երթալ հաստատուելու առաջարկութիւնը : Մեծն Պետրոսի մահը 1725ի յունուարին կուգար արդէն երկայն ժամանակամիջոցի մը համար ընդհատել Ռուսիոյ քաղաքական գործունէութիւնը զէպ ի այդ կողմերը :

Ասոնք են , շատ համառօտաբար պատմուած , այն իրողութիւնները որոնց ընդլայնումին կարող կ'ըլլանք մանրամասնօրէն հետեւիլ շնորհիւ Պ . Եզեանցի հրատարակած վկայաթղթերուն : Ինչ որ ալ մտածենք հելլինական եզրակացութեանց պաշտօնական լուաւ

տեսութեանը մասին , պարտաւոր ենք իրեն շնորհակալ ըլլալ որ այդ հրատարակութեամբը Իսրայէլ Օրիի այնքան հետաքրքրաշարժ անձնաւորութիւնը մեզի ճանչցուցած եւ մանաւանդ մեզի միջոցները հայթայթած է Հայաստանի գործերուն մէջ՝ իր միջամտութեան սկզբնաւորութեան վայրկեանէն իսկ՝ ոուս կառավարութեան քաղաքականութիւնը գնահատելու :

Ա . Մէջնէ

Բարիք



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—o—

Որպէսզու իման Համաժողովը վերջանալու մօտ է , եւ Իրաւարարութեան Ատեանին հաստատոււմը , —այդ ժողովին միակ արգիւնքը — կատարուած իրողութիւն մըն է արդէն : Վայրկեան մը Լա Հէի պատգամաւորները այնքան խանդավառուած էին այդ միջազգային դատարանի գաղափարով , որ մինչեւ անգամ գրեթէ միաձայն հաւանութեամբ որոշելու վրայ էին բազմաթիւ պարագաներ որոնց մէջ այդ դատարանին գիմնելը պարտաւորիչ պիտի ըլլար պատերազմի ելլել ուղղակի տութեանց համարատով Ատեանը գրական , իրական , անմիջական դեր խաղացող Հաստատութիւն մը կը դառնար . բայց պատահեցաւ ինչ որ կը գուշակուէր . վերջին պահուն , Գերմանիա գործը խանդարեց . Վիլհէլմ մերժեց ընդունիլ «պարտաւորչութիւնը» , որ իր աստուածային իրաւունքի վրայ հաստատուած վեհապետական ամենակարողութեանը կը դպչէր . բնականաբար , Մուլթանը Վիլհէլմին ձայնակցեցաւ . եւ քիչ մնաց իրաւարարական ատեանը ամբողջութեամբ ջուրը պիտի իյնար , Վիլհէլմ-Համիտ խոչընդոտին պատճառով . . . Բայց Գերմանացիք ա'յնքան զիրենք միայնակ գագային Համաժողովին մէջ իբրեւ իրաւարարութեան թշնամի , (միայնակէն ալ գէշ , քանի որ իրենց հետ ունէին Տաճի կը) , որ վերջ ի վերջոյ , վերապահումներուն վրայ պնդելով հանդերձ , որոշապէս համաձայնեցան Ատեանին հաստաւ

տու մը յաջողցնելու : Ֆրանսական պատուիրակութիւնը մեծ դեր խաղաց գերմանական խաւփանարարութիւնէն յառաջ եկած ընդհանուր խանգարումը բառնալու համար . շատ գեղեցիկ բանախօսութեամբ մը որ խորին ազգեցուցիչ զործեց համաժողովին վրայ , Պ . Պուստուա քացատրեց որ այնքան բարձր նպատակի մը համար գումարուած ժողովի մը մէջ , բոլոր ազգերը իրենց անհատական ու անմիջական շահերէն անդին տեսնել եւ մարդկային ընդհանուր շահերուն մտածել պարտաւոր էին , եւ թէ ամօթ մը պիտի ըլլար ժԹ . դարուն որ քաղաքակրթական գաղափարի մը համար գումարուած մեծ համաժողով մը ցրուէր առանց ո եւ է բան իրագործած ըլլալու :

Ամբողջ Համաժողովը համաձայն գտնուեցաւ որ անհրաժեշտ էր ցրուելէ առաջ արդիւնքի մը հասնիլ : Ֆրանսայի երկրորդ պատուիրակը Պ . Թիսթուսէլ առաջարկեց որ պատերազմի պարագաներուն , չէզոք պետութիւնները պարտաւորութիւններուն խորհուրդ տալու որ Իրաւարարական Ատեանին դիմեն . այդ առաջարկը ընդունուեցաւ : Այս միջոցիս , յանձնաժողովը իր գործը աւարտած է , Ատեանին ծրագիրը ամբողջութեամբ խմբագրուած է , եւ ընդհանուր նիստերը սկսած են , ուր վերջնական նուիրագործումը պիտի ստանայ այդ ծրագիրը : Յուլիսի վերջերը կը ցրուի Համաժողովը , բայց կը կարծուի թէ փակուած պիտի չհամարուի , եւ տարիէ մը կամ երկու տարիէն դարձեալ պիտի գումարուի , թէ՛ վերստին ձեռք առնելու համար սպառազինմանց խնդիրը որ ոչ մէկ արդիւնքի չյանպեցաւ այս անգամ , եւ թէ՛ ընդարձակելու համար , եթէ կարելի ըլլայ , Իրաւարարական Ատեանին նշանակութիւնն ու պաշտօնը : Առ այժմ , այդ Ատեանը գոյութիւն ունի , եւ որչափ ալ իր դերը սահմանափակ ըլլայ , սա իրողութիւնը որ անիկա գոյութիւն ունի , արդէն կարեւոր արդիւնք մըն է : Մարդկութիւնը քայլ առ քայլ կ'ընթանայ : Այս քայլը վճռական քայլ մըն է նոր ճամբու մը մէջ . անգամ մը որ այս առաջին քայլը առնուեցաւ , այլ եւս այդ ճամբուն մէջ յառաջանալը բնական եւ ստիպողական պիտի դառնայ : Կը թարգմանենք այս առիթով սա հատուածը Քրանսացի գրագէտի մը , էմիլ Ծակէի , մէկ յօդուածին . Պ . Ծակէ Համաժողովին համար յոռետես ու հեզնոտ հարծիք ունեցողներէն էր . եւ սակայն այդ

յոռետեսն անգամ կ'ընդունի որ Լա Հէի մէջ «արդիւնք» մը ձեռք ձգուեցաւ :

«Իրաւարարական Ատեանը պիտի գոյութիւն ունենայ անոնց համար որ անոր գոյութիւն ունենալը ուզեն : Այո՛ , բայց գոյութիւն պիտի ունենայ : Ասիկա բան մըն է՝ կատարելագէս : Նախ , ինչպէս ամէն մարդկային հաստատութիւն , պիտի ունենայ այն հեղինակութիւնը զոր անոր մէջ պաշտօն ստանձնողները պիտի ունենան : . . . Մեր Լա Հէ նստող եւրոպական «հաշտարար դատաւորներ»ը (juge de paix) միջազգային մենամարտներու մշտական վրկաները պիտի ըլլան : Ի՞նչ են վրկաները : Սուվորութիւն մը , որ հաստատուած է եզական կոիւնները կանոնաւորելու եւ հետեւաբար երբեմն անոնց առջեւն առնելու եւ միշտ զանոնք մեղմացնելու համար : Պարտաւորիչ չեն . ո եւ բռնադատիչ հեղինակութիւն չունին , կարելի է անոնցմէ վազ անցնիլ : Կարելի է երկու կողմանէ անոնց դիմել յետոյ , անոնց որոշումը չընդունիլ , զանոնք չեղեալ համարիլ եւ դարձեալ առաջուան պէս դէմէ դէմ կլլել : Բայց նորէն սուվորութիւն մըն են անոնք , որուն հետզհետէ ամէն մարդ հպատակիլ սկսած է : Եւ այն ատեն , առանց ստիպողական բնաւորութիւն ունենալու , առանց բռնադատիչ հեղինակութեան , «սանձ»ի դեր կը կատարեն : Կոռէին անմիջապէս տեղի ունենալը կ'արգիլեն ժամանակ անցընել կոռսակ : Շատ կարեւոր է այս : Թէ մարտի հրաւէրին ու պատերազմին միջեւ ժամանակատիրոջ մը գանուի ուր ո'չ խաղաղութիւն ըլլայ ո'չ պատերազմ եւ ուր բանակցութիւններ կատարուին , սախ անագին բան է խաղաղութեան շահուն համար : Եթէ Իրաւարարական ատեան մը գոյութիւն ունենար 1870 ին , թերեւս պատերազմին առաջը առնուէր : Երկու ազգերէն ոչ մէկը , կարծեմ , պիտի դիմէր ատեանին . բայց ատեանը որ միշտ կարող է խօսիլ , ինքնին պիտի խօսէր : Առաջարկութիւններ պիտի ընէր . գործը ձգձգել պիտի տար : Ասիկա կը բաւէր որպէսզի թիւրիմացութիւն մը , որ հեռագրի մը լրբենիկեղծումէն յառաջ եկած էր , փարատէր . . . Ասիկա բան մըն է : Պզտիկ յառաջգիմութիւն մըն է : Մի՛ հեզնէք : Աշխարհիս մէջ ուրիշ բան չկայ բայց եթէ պզտիկ յառաջգիմութիւններ : Միջազգային «սանձ» մը պիտի ունենանք »

Համաժողովին ոպւսոյն հակասող , եւ անոր յաջողումը վտանգող դէպք մը՝ Քրանսավալի եւ Անգլիոյ միջեւ ծագած վէճը եղաւ , որ քիչ

մնաց պատերազմի փոխուէր : Անգլիացիք կը պահանջէին որ հարաւային Ափրիկէի Ռեթ-լանտըրները , Անգլիոյ պաշտպանեալները , Թրանսվալի պետութեան մէջ Պօէրներուն հաւասար քուէի իրաւունք ստանալու աւելի արագ ու նպաստաւոր պայմաններ ունենան . Թրանսվալի հանրապետութիւնը չէր ընդունիր այդ պահանջումը , եւ իր պայմանները կը ներկայացնէր . Անգլիա , մէկ կողմէն իր պատուիրակին ձեռքով Լա Հէի Համաժողովին իրաւարարութեան ատեանի ծրագիր մը ներկայացնելով հանդերձ , միեւնոյն ատեն պատերազմ կը սպառնար փոքրիկ Թրանսվալին . ասիկա բաւական դաշտակղեցուց ու վրդովեց մտքերը . խնդիրը , սուր վայրկեաններէ անցնելէ յետոյ , այս միջոցիս խաղաղութեան շրջանի մը մէջ մտած ըլլալ կը թուի բարեբաղդաբար . երկու կողմէն զիջումներ սկսան ըլլալ . եւ կ'ըսուի թէ Գերմանիա առաջարկած է որ Ռուսիա եւ Ֆրանսա միջնորդ հանդիսանան Թրանսվալի եւ Անգլիոյ միջեւ : Վտանգը անցած է արդէն , եւ հաւանական է որ համաձայնութեան մը յանգուի քիչ օրէն :

—Ուշադրաւ ուրիշ դէպք մը , Վիլհելմ կայսեր այցելութիւնն է , Նորվեկիոյ Պէրկէն նաւահանգստին մէջ , Ֆրանսական Իֆիմենի մարտանաւին : 70ի պատերազմէն ի վեր առաջին անգամն է որ գերման կայսր մը Ֆրանսական հողի վրայ ոտք կը կոխէ իբրեւ բարեկամ վեհապետ . Վիլհելմ շատ սիրալիր հեռագիր մը քաշեց այդ առիթով Պ . Լուպէին , եւ անկից ընդունեցաւ համակրական պատասխան մը : Ռըյիւ սը Բառիի վերջին թիւերէն մէկուն մէջ , անստորագիր ու շատ կարեւոր յօդուած մը երեւցաւ որով կ'ըսուէր թէ Ֆրանսա անհրաժեշտապէս ստիպուած է ընտրել սա երկու ճամբուն մէկը , կամ Անգլիոյ հետ վերջնապէս համաձայնիլ , միշտ պահելով ռուսական նիզակակցութիւնը , կամ Գերմանիոյ հետ համաձայնիլ , փոխադարձ զիջողութիւններով : Վիլհելմ կայսեր այցելութիւնը արդեօք նշա՞ն մըն է թէ երկրորդ ճամբան արդէն սկսած է հարթուիլ : Բայց այդ ճամբան այս պիտի քաղաքավարական այցելութիւններով չի կրնար բացուիլ . ատոր համար պէտք է որ Ալզաս-Լորէնի խնդիրը ո եւ է կերպով լուծուած գտնէ . այս է որ դիտել տուին Ֆրանսական լրագիրները : Գերմանիա պիտի ըմբռնէ՞ . պիտի ուզէ՞ : Եւրոպական խա-

ղաղութեան վերջնական հաստատումը ատկից կ'սխալուած է :

—Ժողովարար մէջ կը կարգանք . «Թուրք բանակը գերման սպայակոյտին ձեռքն է եւ Սուլթանին վերջին իրատէն՝ յաւելուածական վաշտերու մասին՝ գլխաւորապէս Ռուսիոյ համար սպառնալից է . . . Քանի մը ամիս առաջ , 170 յաւելուածական վաշտեր կազմուեցան : Հիմա , 95 հաս կը կազմուի : Առաջին զօրաբաժինը , Պոլիս , 123 հատ պիտի ունենայ այդ վաշտերէն . երկրորդը , Էտերնէ , 96 հատ . երրորդը , Սելանիկ , 51 հատ . չորրորդը , Էրզրում , 149 հատ . եւ հինգերորդը , Դամասկոս , 77 հատ : Այս թուանշաններէն կը տեսնուի որ գլխաւորապէս Հայաստանի ռուսական սահմանագլխուն վրայ է որ Թուրքերը իրենց մեծագոյն ճիւղ կը խտացնեն , գերման սպայակոյտին տրամադրութեան տակ , եւ թէ Էրզրումի մէջ չորրորդ զօրաբաժինն է որ կ'ընդարձակին :

«Մայիս 20ին , գերման պաշտօնախումբ մը մեկնեցաւ Պոլսէն Տրապիզոնի ճամբով . կը բաղկանար Մորկըն մեծոռէն եւ Գերման-Պանքային եւ Անատոլի երկաթուղիներու տնօրէններէն : Այս յանձնախումբը , Տրապիզոնէն Էրզրում տանող ճամբան քննելէ եւ սահմանագլխուն թրջական ամրութիւնները աչքէ անցընելէ յետոյ , Կովկաս պիտի երթայ Թիֆլիսը , Պաթումը ուսումնասիրելու եւ Օսեթայէն նորէն Պոլիս պիտի դայ , ուրկից Մորկըն մեծոռը Պերլին պիտի դառնայ Էրզրումի ամրութեանց վրայ տեղեկութիւն տալու համար կայսեր . պաշտօնախումբը ունի տնտեսական , քաղաքական եւ զինուորական երեւակ նպատակ մը . լաւ գործ պիտի տեսնէ , ոչինչ իր աչքէն պիտի վրիպի , եւ , մանրամասնութիւն որ իր կարեւորութիւնն ունի , անի ընտրած է թարգման մը որ գիտէ ո՛չ միայն գրական հայերէնը , այլ բոլոր բարբառները եւ մանաւանդ այն բարբառը զոր կը խօսին Ռուսիոյ հայերը :»

—Հայաստանէն ամենատիուր լուրեր կը շարունակեն հասնիլ : Յրօնքի մէջ (Պիթլիզի վիլայէթ) Համիտիէ քիւրտերը , Սերուր յեղափոխականը փնտոտելու պատրուակով , կը ջարդեն , կ'աւարեն , Ս . Աղբերիկ վանքը կը քանդեն , վանահայրը կը սպաննեն : —Մուշի մէջ , 800 հոգի կը ջարդուի : —Սասունի մօտ Բոնաշէն վանքը կ'աւրչտկեն , վանահայրը կը սպաննեն : —Էրզրումի մօտերը մէկ քանի գիւղերու մէջ ջարդ տեղի կ'ունենայ : —Կինձ գաւառակին մէջ

հինգ-վեց գիւղ ջարդուած ու կողոպտուած : Սարսափ կը տիրէ Պիթլիզ եւ Տիարպէքեր , ուր ջարդ կը վախցուի : —Եւ Սքանսարսի մէջ հրատարակուած թղթակցութենէ մը յայտնի կ'երեւայ թէ Սուլթանը մասնաւոր հրահանգներով զրկած է Պիթլիզի նոր վալին , Մէճիտ էֆէնտի , եւ պալատին ու այդ վալիին միջեւ գաղտնի հեռագիրներու երկայն փոխանակումէ մը ետքն է որ այս ջարդերու նոր շարքը ըսկըսած է . Մուշի միւթասարիֆն ալ Պոլիս կանչուած է՝ որովհետեւ չէ ուզած որ ջարդ տեղի ունենայ . . . թերեւս այս ամբողջը Սուլթանին պատասխանն է Լա Հէի Համաժողովին՝ բացատրելու համար թէ ինքը զէնընկէցութիւնը ի՛նչպէս կ'ըմբռնէ . . . —Եւ Տատեան , չարագուշակ հտպիտը , կը շարունակէ իր գարշելի գաւեշտը . եւ Օրմանեան , իր ընչաքաղց դաւաճանութեանը մէջ մինչեւ վիզը թաթխուած , եւ ոչ իսկ մտածումը կ'ուսնենայ բողոքաւոր հրաժարական մը տալ՝ այս անհանդուրժելի , անընդունելի կացութեան առջեւ . . .

—Դրօշակը իր մայիսի թուով կը հրատարակէ յայտարարագիր մը զոր Մակեդոնական Բարձրագոյն Մասնախումբը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը միասին ուղղած են հերոսական պետութեանց եւ որով կը ծանուցանեն թէ Մակեդոնացիք եւ Հայերը համաձայնած են իրենց դատը իրենց ուժերովը պաշտպանելու . քանի որ Լա Հէի համաժողովը չ'ուզէր զբաղիլ իրենց խնդրով . —Բնական կը գտնենք որ մակեդոնական եւ հայկական ուժեր համաձայնին . բայց պարտք կը համարինք սակէտը դիտել տալ . մինչեւ հիմա Հայերը , առանձինն չարժեկով , Կրետացիներուն , Յոյներուն , Պուլկարներուն օգտակար եղան . պէտք չէ որ այս անգամ ալ Մակեդոնացիներուն դատին գործիք դառնան . աններելի է որ Մակեդոնացւոց հետ համաձայնած ըլլալու պատուակով , Հայերը Մակեդոնացիներէն առաջ կամ նոյն իսկ անոնց հետ շարժին . պէտք է սպասել որ Մակեդոնացիք գործելու սկսին , եւ երբ մակեդոնական խնդիրը իր գերագոյն բորբոքմանը հասնի , Հայոց համար պատշաճ կրնայ դառնալ որ շարժին :

—Ռզլիւ Տը Բառի հրատարակեց իր յուլնիս 15ի թուովը Պ . Բիէն Գիյետի մէկ յօդուածը «Սուլթանին գաղտնի դիւանագիտութիւնը» տիտղոսով : Այդ յօդուածով Պ . Գիյետ կը պատմէ բանակցութիւնները որոնք տեղի ունեցած են , Սուլթանին նախաձեռնութեամբ ,

Սուլթանին եւ Հայ Յեղափոխական մարմնոյ մը միջեւ որ ինքզինքը կը կոչէ «Հայ յեղափոխական կեդրոնական մասնախումբ» : Այդ մասնախումբին Բարիզի ներկայացուցիչները ընդունած են 1897ի աշնան Սուլթանին կողմէ եկած առաջարկը բանակցութեան մտնելու , բայց մերժելով կէս պաշտօնական պատուիրակներու հետ գործ ունենալ , պահանջած են պաշտօնական անձնաւորութիւն մը միջնորդ ունենալ , եւ Բարիզի օսմանեան դեսպան Միւնիք-Պէյ միջնորդ կարգուած է : Մասնախումբը , թուրք կառավարութեան եւ հայ ժողովրդին մեջեւ համաձայնութեան հաստատման իբր միակ պայման բարենորոգմանց ամբողջական գործադրումը պահանջելով հանդերձ , առաջարկած է որ գոնէ Սուլթանը , իր բարի կամեցողութիւնը ապացուցանելու համար , նախապատրաստական մէկ քանի տնօրինութիւններ ընէ իսկոյն , այսինքն , Ա . Ընդհանուր ներում , Բ . Ջարդերէն յետոյ երկրէն հեռացած գաղթականներուն ազատ վերադարձ , Գ . Հայոց դէմ ճնշողական ու արգելիչ տնօրինութեանց բարձում , Դ . յիւթական նպաստ այն գաղթականներուն որոնք դրամ չունենալնու պատճառով անկարող են իրենց տեղը դառնալ : Վեց ամիս բանակցութենէ յետոյ , Սուլթանը իրատէ մը կը զրկէ մասնախումբին որով կը խոստանայ ընդհանուր ներում յեղափոխական շարժումներու պատճառով բանտարկուած բոլոր Հայերուն , ու Եւրոպա գտնուող յեղափոխական մասնախումբին հրաւէր կը կարգայ Թուրքիա դառնալ , խոստանալով անոնց ամէն տեսակ շնորհներ :

Այս քաղցրալեզու իրատէին պարունակած խոստումներէն ոչ մէկը կ'իրականանայ . հազիւ քանի մը տասնեակ բանտարկեալներ կ'արձակուին : Իրատէն իրեն լոկ նըպատակ ունեցած է հայ յեղափոխականները Պոլիս քաշել : Ասոնք Սուլթանին սպասած ոչ միամտութիւնը կ'ուսնենան ոչ ալ վատութիւնը , եւ մէկ քանի անգամ ուժգին եւ կտրուկ լեզուով մը յիշեցնելէ յետոյ հանդիսաւորապէս տրուած խոստումները , մասնախումբը վեց պետութեանց արտաքին գործոց նախարներուն կ'ուղղէ յիշատակագիր մը որով կը տեղեկացնէ Սուլթանին եւ մասնախումբին միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները եւ անոնց մէջ Հայ Յեղափոխական Մասնախումբին ցոյց տուած խոհականութեան , ճկունութեան եւ ուղղամտութեան

փոխարէն՝ Սուլթանին անպատկառ խաբեբայութիւնը , եւ ապագային պատահելիքներու համար Սուլթանը միայն պատասխանատու կը բռնէ : Այդ միջոցին ոչ միայն իրատէին խոստումները չեն գործագրուիր , այլ հարստահարութիւնները , բանտարկութիւնները , սպանումները կը շարունակուին Պոլիս ու գաւառները (Պ. Քիյեառ որոշ թուականներով ու տեղերով բազմաթիւ իրողութիւններ կը յիշէ) : Մասնախումբը իրատէին անգործազրուութեան մասին կծու բողոքագիր մը կը զրկէ Սուլթանին . յարաբերութիւնները խզուելու կը մօտենան , երբ Միւնիք-Պէյ Պոլիս կը կանչուի Սուլթանին հետ մասնաւոր տեսակցութիւններ կ'ունենայ , եւ կը դառնայ նորանոր խոստումներով , որոնք չեն իրագործուիր : Մասնախումբը , զգուած , ծանուցագիր մը կը զրկէ որով կը սպառնայ բանակցութիւնները վերջնապէս դադրեցնել՝ եթէ տասը օրէն իրատէին խոստումները չկատարուին : Խոստումները չեն կատարուիր , եւ յարաբերութիւնները կը խզուին : Բայց Վիլհելմ կայսեր ուղեւորութեան ատեն , թուրք կառավարութիւնը խոհեմութիւն կը համարի բանակցութիւնները վերսկսիլ , եւ այս անգամ Բերայի կառավարիչ Էնվէր-Պէյ միջնորդի դեր կը կատարէ : Մասնախումբը իր անդրդուելի պայմանները կը կրկնէ , զգուանքն ու արհամարհանքը յայտնելով անոնց որ կը կարծեն խաբեբայութիւններով կրակը մարելու խնդիրը խեղդել : Սուլթանը ուրիշ բան չի գտնել ըսելու բայց եթէ հրաւիրել Մասնախումբին գլխաւոր ներկայացուցիչը որպէսզի Պոլիս երթայ բանակցութիւնները անձամբ կատարելու համար : Մասնախումբը կը պատասխանէ պարզ հեռագրով մը որով կը յայտարարէ թէ «այդ լիբը կատակին՝ ուշ կամ կանուխ պիտի պատասխանէ գործողութիւնը » :

Պ. Քիյեառ , պարզելով Հայաստանի արդի կացութիւնը եւ հայ ցեղը ջնջելու համար Սուլթանին հրամանով ի գործ դրուած ամեն տեսակ հրէշային միջոցները , կ'եզրակացնէ . «Անխուսափելի կերպով , այն կորովի ու խոհական մարդիկը որ այդ ցեղը կը ներկայացնեն Եւրոպայի մէջ , եւ զոր շատ ատենէ ի վեր ամենքը կը խաբեն , յուսահատական վրիժառութեանց պիտի մղուին : Այլ հոգերնին պիտի չընեն թէ կը վտանգեն կամ ոչ խաղաղութիւնն ու ապահովութիւնը եւրոպական ազգերուն , որոնք անզգայ հանդիսա-

տես եղան 1894ի , 1895ի եւ 1896ի զարհուրելի ջարդերուն ու ներկայ թշուառութեան : Տարբեր բան՝ եթէ պատահմամբ ուշիմ նախարար մը ընդհուպ միջամտէ մեծ պետութեանց մէկուն անունովը եւ լուծէ Հայաստանի խընդիրը՝ ինչպէս կրետէինը , խնայելով՝ երբ դեռ ուշ չէ՝ հազարաւոր մարդկային կեանքեր : » Պ. Քիյեառ հրատարակած է այս բանակցութեանց ամբողջ թղթակցութիւնը , որ մեծապէս պատուարեւ է հայ Մասնախումբին , ինչպէս Մեոխիռո սր Ֆոռանս ամսաթերթին յուլիսի թուոյն մէջ Պ. Շ. Հ. Հիրշ ալ դիտել կուտայ : Յայտնի է որ ոչ մէկ վայրկեան Մասնախումբը ո եւ է հաւատք չէ ունեցած Սուլթանին կարծեցեալ բարի կամեցողութեանը վրայ , բայց ընդունած է Սուլթանին առաջարկը , անոր ամբողջ նենգամտութեան , վատութեան ու ստութեան վրայ հիմնուած քաղաքականութիւնը անգամ մը եւս հանդիսաւորապէս երեւան հանելու համար յայտ Եւրոպայի մանաւանդ որ կը թուի թէ քուլիսին մէջ բանակցութեանց հանդիսատես ու թերեւս խորհրդական գտնուած են հայասէր Եւրոպացիներ որոնցմէ մին , Քիյեառ , այս դէպքին պատմաբանը կը դառնայ : Մասնախումբին բռնած ընթացքին լրջութիւնը , ազնուութիւնն ու քաջութիւնը համակրանքը շահեցաւ ոչ միայն Պ. Լավիսին , որ յանձն առաւ Ռըվիլո սր Բառիի պէս ծանրակշիռ թերթի մը էջերը բանալ հայ յեղափոխականներու անվերապահ կերպով նպաստաւոր յօդուածի մը , այլ ամբողջ Ֆրանքո-Հայկական ընկերութեան , որ Լա Հէի Դեսպանախորհրդին ուղղած իր բողոքագիրը գլխաւորապէս հիմնեց այս բանակցութեանց պատմութեանը վրայ եւ կերպով մը առաջուց արդարացուց ամէն ինչ որ հայ յուսահատութիւնը կրնայ գործել եւ ո եւ է դէպքի պատասխանատու Սուլթանը հռչակեց :

Դիտելու կէտ մը այս թղթակցութեան մէջ տեսութեան ու զգացման լայնութիւնն է որով մասնախումբը , ո եւ է կուսակցական մոլեռանգութենէ զերծ , ի նկատի ունեցած է ընդհանուր ազգին շահերը , եւ՝ զօր օրինակ՝ բանտարկեալներու արձակում պահանջած ատեն , չեչտած է հաւասարապէս Դրօշակեան ինչպէս Հնչակեան բանտարկեալ գործիչներու անունները :

Մեր յեղափոխականներու գործունէութեանը մէջ , ուր ամէն բան միշտ առաջուց փողով ու թմբուկով ծանուցուած է , առաջին անգամ

ըլլալով կը տեսնուի մարմին մը , որ կազմակերպուած է ստուերի մէջ , կը գործէ առանց ազմուկի , առանց լրագրական պոստամատու թիւններու , եւ տարիի մը չափ ասին գործունէութիւն մը կ'ունենայ , ամենալուրջ պայմաններու մէջ , առանց որ ո եւ է մէկը զայն իմանայ , եւ կը զայն հրապարակէ միմիայն այն վայրկեանին ուր հարկաւոր էր հրապարակել եւ այնպիսի պայմաններով որոնք օգտակարագոյններն էին : Ոչ մէկ որոշ ծանօթութիւն ունինք այս գործիչ մարմնոյն վրայ , բայց գոհունակութեամբ մասնանիչ կ'ընենք այս մէկ քանի « յատկութիւնները » , որոնք հազուադէպ են եղած մեր մինչեւ հիմակուան գործունէութեանը մէջ . ճշմարիտ « գաղտնի ընկերութիւն » մըն է որ ունինք դիմացնիս , ինչպէս կը բաղձայինք որ ըլլային հայ յեղափոխական գործիչ մարմինները :

— Վերջին հեռագրէ մը կ'իմանանք թէ Ձարը մտադիր է առաջարկել որ նոր Համաժողով մը գումարուի՝ մասնաւորապէս Արեւելեան խընդրոյն լուծմամբը զբաղելու համար : — Ամենայն վերապահութեամբ կը հրատարակենք այս հեռագիրը , որ ոչ մէկ կերպով դեռ չհաստատուեցաւ :



ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

— 00 —

— Մանուրեանի Յորեկանը . — Իզմիրի Հայերը ամենագեղեցիկ զաղափարը ունեցած են Մատթէոս Մամուրեանի յորեկեանը տօնելու : Արդէն կազմուած է մասնաժողով մը , նախագահութեամբ Իզմիրի առաջնորդ Մելքիսեղեկ Մուրատեանց եպիսկոպոսին , եւ կանոնադիրը ցըրուած են ամէն կողմ : — Յորեկեանի հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ հոկտեմբեր 17/29ի կիրակի օրը : Դրամականեւ այլ նուէրները , հեռագիրները , ուղերձները եւ ամէն տեսակ թղթակցութիւնները , որք պիտի արձանագրուին եւ ապա մասնաւոր տեղեկագրով հրա-

տարակուին , պէտք է ուղղուին նախագահին հասցէին

Monseigneur Melchisedec Mouradiantz
SMYRNE

Մամուրեան մեր ժամանակակից գրականութեան ամենէն յարգելի ղէմքերէն մէկն է , այնքան ծանօթ կովկասի հայոց որքան Թըրքահայոց , եւ ապահով ենք որ միահաղոյն մեծարանքի արտայայտութիւն մը պիտի գայ պսակել սրամիտ ու ազնուախոհ գրագէտին , անձնուէր ու բազմաբիւն ուսուցչին երկարատեւ գործունէութիւնը : — Անահիտի մօտակայ թիւերէն մէկուն մէջ պիտի հրատարակենք ուսումնասիրութիւն մը Մամուրեանի գրական գործին վրայ :

— Մանուրեանի նոր աշխատքիւնը . — Յունիս 24ի շաբաթ օրը , Մաթիաս Տիւվալ Կենսաբանական Ընկերութեան ներկայացուցչութեանը Մանուէլեանի մէկ նոր աշխատութիւնը : Մանուէլեան յաջողած է վերջաւորական կոճակներ (boutons terminaux) եւ շրջաբջջային ճիւղաւորումներ (arborisations pericellulaires) տեսնել՝ շրջապատային (periphérique) զգայութիւնները (մասնաւորապէս հորտոնները զգայութիւնները) ուղեղին հաղորդելու պաշտօնն ունեցող բջիջներուն մարմնոյն վրայ , այս տարօրինապէս շահեկան շարակարգութիւնը կը ցուցնէ թէ ուղեղէն եկած գրգռումները կրնան ջգային բջիջներուն մարմնոյն վրայ ներգործել , եւ հետեւաբար , Տիւվալ-Մանուէլեան վարկածին համեմատ , ջգային գրգռութիւնները ընդունելու գործողութեան մէջ կանոնաւորչի դերը կատարել :

Հաղորդելէ յետոյ այս աշխատութիւնը , Պ. Տիւվալ իր գոհունակութիւնը արտայայտեց այն շատ նպաստաւոր ընդունելութեան համար զոր Մանուէլեան-Տիւվալ վարկածը գտած է մէկ քանի մեծանուն գիտուններու քով , եւ միանգամայն ցաւ յայտնեց որ Ռընօ , Լիոնի ծանօթ բրոֆեսորը , իր նոր հրատարակած Ջղային դրոսթիս հատորին մէջ Մանուէլեան-Տիւվալ վարկածին գաղափարները իւրացուցած է՝ առանց հիղինակները յիշելու :

Հրատարակումէն ի վեր դեռ տարի մը չանցած՝ Մանուէլեանի վարկածը դասական գրքի մը մէջ կը զետեղուի արդէն , ու Ռընոյի պէս բրոֆեսոր մը զայն իւրացնելու կը փորձուի . ասի

ամենէն շօշափելի ապացոյցն է այն փայլուն ու արագ յաջողութեան գոր այդ վարկածը գտած է :

—Տր. Վահրամ Թորգոմեան որ մեր հասարակութեան ծանօթ է հայ հին ու նոր բժշկներու վրայ իր հրատարակած բազմաթիւ կենսագրական ուսումնասիրութիւններով, յուլիս 25ի երեքշաբթիօրը Բարիզի Բժշկական Ակադեմիային նիստին մէջ կարգաց աշխատութիւն մը ժխ. դարու հայ բժիշկ Մխիթար Հերացիին եւ անոր Մխիթարոսիւն ջերմանց գործին վրայ : Տր. Թորգոմեան յայտնեց որ մտադիր է քիչ ատենէն բժշկական Ակադեմիային ներկայացնել Հերացիի գործին ֆրանսերէն թարգմանութիւնը : «Պ. Թորգոմեանի աշխատութիւնը, կը գրէ Պիլլըքէն Մեսիֆալ լրագիրը, շատ կարեւոր է սա տեսակէտով որ նոր էջ մը կ'աւելցնէ Ասիոյ հին բժշկագիտութեան պատմութեան մէջ . եւ արդարեւ, առաջին անգամ է որ բժշկական տարեգրութեանց մէջ կը կարգանք անունը հայ բժշկի մը, որ իր արուեստովը, իր գիտութեամբը եւ իր բազմաթիւ աշխատութիւններովը իր ժամանակին բժշկական յառաջգիտութեանը շատ նպաստած է, ինչպէս կը վկայեն Վիքթոր Լանկլուա, Տիւրոսիէ եւ Նիլիշան :» Ջերմաէս կը փափաքենք Տր. Թորգոմեանի այս կարեւոր աշխատութիւնը գրքի ձեւով հրատարակուած տեսնելու :

—Ուրախութեամբ իմացանք որ Պ. Յովհաննէս Արթինեան, նախկին շրջանաւարտ Պոլսոյ Ազգային կեդրոնական Վարժարանին, փայլուն յաջողութեամբ մը անցուցեր է իր տոքթորութեան թէզը Նանսիի բժշկական համալսարանին մէջ եւ այդ քաղաքը հաստատուեալ է իբր բժիշկ : Իր ուսանողութեան շրջանին մէջ, Պ. Արթինեան ունեցած է հանրային գործունէութիւն մը մեծապէս օգտուէս եւ ուշիմ : Պոլսոյ Հայրենիք լրագրին մէջ հրատարակած իր կարգ մը յօդուածներովը մեր հասարակութեան ճանչցուցած է Ֆրանսայի կարգ մը կերթական ու արուեստագործական հաստատութիւնները, ու միանգամայն հայ ժողովուրդը Ֆրանսացուց ճանչցնելու այլ եւ այլ փորձեր ըրած է : Նանսիի գլխաւոր թերթերէն մին, Լը Բոնոկտ քը շէսք, կը գրէ, «Պ. Արթինեան որ յաջողութեամբ անցուց իր տոքթորութեան թէզը, անձանօթ մը չէ մեր ընթերցողներէն շատերուն համար : Նոր բժիշկը

որ հայ է ազգութեամբ, Ֆրանսա գրունուելէն ի վեր իր պարագոյ ժամերը յատկացուց մեր հայրենակիցներն ու մեր երկիրը իր հայրենակիցներուն ճանչցնելու՝ բազմաթիւ յօդուածներով բժշկական ու գիտական համալսարաններուն, քիմիական էնսթիթիւին, արուեստագիտական զպրոցիվրայ, եւ Լը Բոնոկտ քը շէսք շատ անգամ առիթ ունեցած է անոնցմէ հասուածներ հրատարակելու, նմանապէս հրատարակած ենք իր մէկ յօդուածը որով կ'առաջարկէր որ Ֆրանսական «էքոլ նորմալ» ներուն մէջ կտուվարական թոշակներ հաստատուին ապագայ հայ դաստիարակներու համար, որպէսզի ասոնք, Ֆրանսական գաղափարներով տոգորուած, իրենց երկիրն մէջ լաւագոյն օժանդակները ըլլան մեր սկզբունքներուն եւ մեր Արեւելքի շահերուն : Այս նպատակով դիմումներ ըրաւ Պ. Փօնսէնի մօտ, եւ նոյն խկ իր յօդուածներուն հետեւանքով Հայրենիք լրագիրը հանգանակութիւն մը բացաւ ի նըպաստ չորս հայ դաստիարակուհիներու որոնք եկան Նանսիի դաստիարակուհիներու «էքոլ նորմալ»ին դասերուն հետեւելու . վերջապէս, Հայաստանը մեզի ճանչցնելու համար, բանախօսութեանց շարքեր եւ բարեգործական նուագահանդէսներ կազմակերպեց ջարդերու զոհերուն ի նպաստ : Ինչպէս կը տեսնուի, Պ. Արթինեան գիտցած է իր ծննդավայր հայրենիքին համար ունեցած սէրը միացնել իր որդեգրած հայրենիքին համար ունեցած անձնուիրութեանը :»

—Հայ երաժշտութիւնը Եւրոպայի մեջ, — նոր-Գարի մէջ կը կարգանք թէ յունիս Ալին Պերլինի Շարվենքա երաժշտանոցին դահլիճին մէջ տեղի ունեցեր է հայկական երաժշտութեան շատ փայլուն նուագահանդէս մը, Հայր Կոմիտաս վարդապետ Գէորգեանի ձեռքով կազմակերպուած, առաջարկութեամբ Միջազգային Երաժշտական Ընկերութեան նախագահ եւ Պերլինի համալսարանին երաժշտութեան ուսուցիչ Պ. Փլայշըրի : Հ. Կոմիտաս դասախօսութիւն մը կարդացեր է հայ եկեղեցւոյ պատմութեան եւ հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտութեան վրայ, որմէ յետոյ չորս հոգիէ բաղկացած խումբ մը զոր Հ. Կոմիտաս պատրաստած էր, երգեր է բազմաթիւ կտորներ Հայոց եկեղեցական երգերէն եւ ժողովրդական խողերէն : Ի վերջոյ Հ. Կոմիտաս երգեր է քրդերէն, արաբերէն, պարսկերէն եւ թրքերէն

երգեր ու հայկական պարերգներ, եւ օտար ու հայ երգերուն երաժշտութեան բաղադրական ուսումնասիրութիւն մը ներկայացուցեր է : Ունկնդիրները խանգավառ ընդունելութիւն մը ըրեր են այս նուագահանգէսին որ պերլինեան հասարակութեան համար հետաքրքրաշարժ նորութիւն մըն էր :

Միեւնոյն ատեն, կ'իմանանք թէ Պ. Եղիազարեանց, քաջալերուած իր առաջին փորձին գտած յաջողութենէն, մտադիր է յառաջիկայ ձմեռ շատ աւելի կատարելագործուած ու ընդարձակ ծրագրով մը շարունակել հայ երաժշտութիւնը Ծրանսացւոց ճանչցնելու մեծապէս գովելի գործը : Արդէն Բէյերի, Մասնէի, Պիւնկօ-Տիւքուտէի պէս երաժշտական անձնաւորութեանց աջակցութեան խոստումը յաջողեր է ընդունիլ, եւ երգիչներու հոչակաւոր խմբապետը, Պ. Շարլ Պորտ, յանձն առեր է իր խումբովը մասնակցիլ այդ հայկական նուագահանգէսներուն : Այս պայմաններուն մէջ, կարելի է շատ փայլուն յաջողութիւններ յուսալ, եւ կը հրաւիրենք Բարիզի հայ գաղթականութիւնը որ հարկաւոր նիւթական օգնութիւնը չզլանայ այս կարեւոր ձեռնարկին :

— Բարիզի Հայ Ուսանողաց Միութեան Ժողովարարին մէջ, մայիս, յունիս, յուլիս ամիսներուն տեղի ունեցան երեք բանախօսութիւններ. Պ. Վաղարշակ Մեսրոպեան խօսեցաւ Բուսական բջիջին վրայ, Պ. Տիգրան Եսայեան՝ Ոգեհարցութեան վրայ, եւ Պ. Մաքսուտ Միհրդատեանց իրեն նիւթ առա «Հիւլէն եւ Տիեզերքը» :


— Արշիվ սր Նեոսոյոժի գիտական հանդէսը իր այս տարուան 39րդ թիւով հրատարակեց մեր աշխատակից Տր. Պօղոս Քօյօլեանի մէկ աշխատութիւնը, «Արիւնին թունաւորութիւնը վերնտուութեան մէջ» (La toxicité du sang dans l'épilepsie) :

— Ռըվիւ Անսիլոքեսիֆ շարթաթերթը հրատարակեց իր յուլիս 8ի թիւով Հայոց արդի գրականութեան վրայ յօդուած մը Ա. Զօպանեանի : Նոյն թերթը իր 1898ի օգոստոս 27 եւ սեպտ. 3 թիւերով հրատարակած էր ուսումնասիրութիւն մը, նոյն հեղինակէն, Հայոց հին գրականութեանը վրայ : Այս յօդուածին կ'ընկերանան լուսանկարները Հ. Արսէն Բագրատունիի, Հ. Ղեւոնդ Ալիշանի, Գեր. Ա. Այանեանի, Խաչատուր Աբովեանի, Գ. Արծ-

րունիի, Բաֆֆիի, Պետրոս Ադամեանի, Շիշվանդադէի, Պէշիկթաշլեանի, Յովհաննէս Շահնազարի, Լեւոն Բաշալեանի եւ Վահրամ Սվաճեանի :

— Ռըվիւ sk Ռըվիւ հանդէսը հրատարակեց իր յուլիս 15ի թիւով մեծապէս շահեկան յօդուած մը՝ «Թուրքիան կրնա՞յ ապրիլ» տիտղոսով : Անսիլիսի մօտակայ թիւերով պիտի հրատարակենք թարգմանութիւնը խորթափանց պատմաբանի ու վարպետ գրագէտի այդ սքանչելի էջին :


— Պերլինի հայ ուսանողութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել հետեւեալը. — Գրիգոր Թոքաթլեան անունով Սամսոնցի հայ երիտասարդ մը այս տարուան փետրուարին Պերլին կը կը հասնի՝ յայտարարելով թէ ուսանող պիտի ըլլայ այնտեղ. այդ պատրուակով կը յաջողի շատ մը ուսանողներ խարել, փոխ գրամ առնել, ուսանողական օգնութեան զբամարկղէն գումար մը կը կորզէ, անորոշ բարեգործական նպատակի մը համար անձէ մը բաւական դրամ կը խլէ եւ յանկարծ օր մը կ'աներեւութանայ անվճար թողով իր բնակավայրին վարձքը եւ իր յաճախած ճաշարաններուն պարտքերը, (700 մարք ընդամէնը) : Պերլինի ուսանողութիւնը, հայ ուսանողութեան պատիւը արատաւորող այդ սրիկային ընթացքէն զայրացած, պարտք կը համարի հրապարակել անոր անունը ու վարձուէքը, որպէսզի այդ պարտքը միեւնոյն խաղը ուրիշ տեղալ չկրկնէ :



Paris. — Imp. V^o ALBOUY, 75, avenue d'Italie.

Le Gérant : GEORGES WALINE.

Թեան սենեակներու և յարակից մասերու: Գետնաշարիչը (rez-de-chaussée) լուսացայտ աղբիւրներով և ընդարձակ պատշգոմներով զարդարուած, պիտի պարունակէ նուազաւորա՛յ մը որուն կեդրոնը պիտի գտնուի երաժշտական մը: Գատակազիծը արտաքուստ քառակուսի և ներքուստ անկիւններուն մէջ՝ բոլորա՛նք և բլլալով, վիթխարի վերամբարձներ (ascenseur), հասարակութիւնը պիտի առաջնորդեն վերի յարկերը, որոնք ամենքն ալ գրեթէ միևնոյն ձևովը շարակարգուած պիտի բլլան: Ճիւղերէնքներու մէջէն որոնք իրարու պիտի կցուին կեդրոնական դարասափով մը, այցելուները պիտի մտնեն պերճօրէն կահաւորուած պարսերու (pavillon) մէջ, ուր սոքող արդի հանգստաւէտութիւնը պիտի վայելէ: Յարկերը, վարդակի (rosace) ձևով համաչափ յստակազիծներու վրայ շինուած պիտի հաստատուին զիւրեք բունոյ մետաղեայ ոստերով, տերեւից ճիւղեր՝ բեռնաւորուած գոյնզոյն ծաղիկներով և ոսկի պտուղներով, որոնք գիշերները պիտի արթննան, կենդանանան, շողշողան, լուսավառին, հազարաւոր ելեքտրական լոյսերով հրդեհուին և պիտի կարծել տան թէ առիկ մշտապէս ու վիթխարի հրակաշուծիւն մըն է, շլացուցիչ շքեղութիւններով, «Հազար ու մէկ գիշերներ»ու մէկ աներևոյթ ոգիին ձեռքովը արձակուած: Այս բանաստեղծի ծրագրին գործադրութիւնը շուրջ 600,000 ֆրանքի պիտի նստի, հեղինակին ըսելուն նայելով: Լը մ... մեր գարշիկ թուանշաններով և հաշիւին



(Գատակազիծ գետնաշարիչին)

ուսուցիչ կերպարքը թեմա՛յը շխտչեցնենք քսածին վազքը այն խայտարեղէտ թիթեւներուն զոր Պ. Արամ Թա՛ճ-Թա՛ճեան, իբրև ճշմարիտ արեւելցի, կապոյտ միջոցին մէջ կը թռչնէ... Ասկայն մեր երիտասարդ պաշտօնա-կիցը երազներու ետեւ երթալով չէ բաւականացած, ամէն բան հաշուած նախատեսած է: Չեմ կրնար մանրա-մասնօրէն բացատրել իր կառու-ցման յօրինուածութիւնը որ ինծի շատ հնարամիտ կը թուի. միայն սա կէտը յիշեմ որ ծառին բունին համար որմածք (maçonnerie) կը գործածէ և բոլոր ոստերուն համար՝ երկաթի Գա-լով փայտէ շինուած պորսերուն, անոնք կառած պիտի կախուին տերեւներուն տակ ծածկուած պահանգներէ (tirant) և միևնոյն աստիճանուած պիտի բլլան: Ինչ և անեցող երկաթներով որ գլխաւոր ճիւղերուն պիտի համապատասխանեն: Այ շատ կատարեալ ուրուաղիծները զոն արուեստագէտը հաճած է մեր լրագրին զրկել՝ իմ չոր ու բաւական մութ բա-րցատրութիւններու յստակութիւն պիտի տան և ի վեր պիտի հանեն այս ինքնա-տիպ ծրագրին սոքող հրապոյրը: Կը մտալ թեմ որ հեղինակը իր սիրուն երա-զին իրագործուած տեսնէ և այդպէսով իր երկրին պերճաշաք երեւակայութենէն քիչ մը մեր մէջը փոխադրէ:»

Կը ձայնակցինք ֆրանսացի բրն-նադատին, կը շնորհաւորենք Պ. Թա՛ճ-Թա՛ճեանը իր այնքան փայլուն որքան յանդուրէն գաղափարին համար, և կը յուսանք որ հայ գրամատերները ան-տարբեր պիտի չմնան այս ձեռնար-կին առջև, որուն իրագործուածովը հայ տաղանդը պիտի կարենայ տեղ մը գրաւել 1900: համաշխարհային մրցու-մին մէջ:

ճարտարապետ Գառնիկ Գառնիկեանի և ընդարձակ պատշգոմներով զարդարուած, պիտի պարունակէ նուազաւորա՛յ մը որուն կեդրոնը պիտի գտնուի երաժշտական մը: Գատակազիծը արտաքուստ քառակուսի և ներքուստ անկիւններուն մէջ՝ բոլորա՛նք և բլլալով, վիթխարի վերամբարձներ (ascenseur), հասարակութիւնը պիտի առաջնորդեն վերի յարկերը, որոնք ամենքն ալ գրեթէ միևնոյն ձևովը շարակարգուած պիտի բլլան: Ճիւղերէնքներու մէջէն որոնք իրարու պիտի կցուին կեդրոնական դարասափով մը, այցելուները պիտի մտնեն պերճօրէն կահաւորուած պարսերու (pavillon) մէջ, ուր սոքող արդի հանգստաւէտութիւնը պիտի վայելէ: Յարկերը, վարդակի (rosace) ձևով համաչափ յստակազիծներու վրայ շինուած պիտի հաստատուին զիւրեք բունոյ մետաղեայ ոստերով, տերեւից ճիւղեր՝ բեռնաւորուած գոյնզոյն ծաղիկներով և ոսկի պտուղներով, որոնք գիշերները պիտի արթննան, կենդանանան, շողշողան, լուսավառին, հազարաւոր ելեքտրական լոյսերով հրդեհուին և պիտի կարծել տան թէ առիկ մշտապէս ու վիթխարի հրակաշուծիւն մըն է, շլացուցիչ շքեղութիւններով, «Հազար ու մէկ գիշերներ»ու մէկ աներևոյթ ոգիին ձեռքովը արձակուած: Այս բանաստեղծի ծրագրին գործադրութիւնը շուրջ 600,000 ֆրանքի պիտի նստի, հեղինակին ըսելուն նայելով: Լը մ... մեր գարշիկ թուանշաններով և հաշիւին



(Գատակազիծ երրորդ յարկին)

ճարտարապետ Գառնիկ Գառնիկեանի և ընդարձակ պատշգոմներով զարդարուած, պիտի պարունակէ նուազաւորա՛յ մը որուն կեդրոնը պիտի գտնուի երաժշտական մը: Գատակազիծը արտաքուստ քառակուսի և ներքուստ անկիւններուն մէջ՝ բոլորա՛նք և բլլալով, վիթխարի վերամբարձներ (ascenseur), հասարակութիւնը պիտի առաջնորդեն վերի յարկերը, որոնք ամենքն ալ գրեթէ միևնոյն ձևովը շարակարգուած պիտի բլլան: Ճիւղերէնքներու մէջէն որոնք իրարու պիտի կցուին կեդրոնական դարասափով մը, այցելուները պիտի մտնեն պերճօրէն կահաւորուած պարսերու (pavillon) մէջ, ուր սոքող արդի հանգստաւէտութիւնը պիտի վայելէ: Յարկերը, վարդակի (rosace) ձևով համաչափ յստակազիծներու վրայ շինուած պիտի հաստատուին զիւրեք բունոյ մետաղեայ ոստերով, տերեւից ճիւղեր՝ բեռնաւորուած գոյնզոյն ծաղիկներով և ոսկի պտուղներով, որոնք գիշերները պիտի արթննան, կենդանանան, շողշողան, լուսավառին, հազարաւոր ելեքտրական լոյսերով հրդեհուին և պիտի կարծել տան թէ առիկ մշտապէս ու վիթխարի հրակաշուծիւն մըն է, շլացուցիչ շքեղութիւններով, «Հազար ու մէկ գիշերներ»ու մէկ աներևոյթ ոգիին ձեռքովը արձակուած: Այս բանաստեղծի ծրագրին գործադրութիւնը շուրջ 600,000 ֆրանքի պիտի նստի, հեղինակին ըսելուն նայելով: Լը մ... մեր գարշիկ թուանշաններով և հաշիւին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամբոխը՝ Արշակ Չօպանեան :—Թամար , Զրհորը՝ Վահրամ Սվածեան :—Պատճառորակա-
նութիւն՝ Տր . Տրդատ Եսայեան :—Նամակներ Հայրենիքից՝ Վ . Փափազեան :—Տգէտ ազգի
հանճարին , Հայ որբերի աղօթքը , Ժողովրդների երգը , Երգեր՝ Արամ Չարըզ :—Համբին
վրէժը՝ Երուխան :—Պատրիարք մը որ կը զբօսնու՝ Վահրամ :—Պէշիկթաշլեանէն էջ մը , Բը-
նար կուսին՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան :—Բրոֆ . Պիւխնէր՝ Տիգրան Եսայեան :—Հերովդիա՝
Կիւսթավ Ֆլուպէն :— * * * Տերվիչ :—Գեղարուեստի էութիւնը եւ նպատակը՝ Վ . Նալբանդեան :
—Բուշքին եւ Միգքիեվիչ՝ Արշակ Չօպանեան :—Միգքիեվիչ՝ Լուի Լէժէ :—Նախահայրեր
Առոմ Միգքիեվիչ :—Մասնախօսական—Մեծն Պետրոսի յարաբերութիւնները հայ ժողովրդին
հետ՝ Ա . Մէյլէ :—Քաղաքական կացութիւնը :—Ազգային Գրոնիկ :

Ա Զ Դ

ԱՆԱՀԻՏԻ աւաքին սարին աւարեղու երկու թիւ միայն կը մնայ : Կը յուսանք որ իրենց բաժա-
նորդագիւնը չվնասող անձերը կը փութան զայն իսկոյն վնասելու :

ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիոս պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ
32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 Ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամե-
րիկա) 1 Ֆր . 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 Ֆրանք (Ֆրանսա) , 12 Ֆրանք (օտար երկիրներ) ,
3 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . վեցամսեայ՝ 5 Ֆրանք (Ֆրանսա) , 6 Ֆրանք
(օտար երկիրներ) , 2.50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել՝

A. TCHOBIANIAN

6 Place de l'Odéon

PARIS

ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ՊՈՒՂԿԱՐԻԱ. —

ՌՈՒՇԱՆԻԱ. —

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. —

ԴԱՀԻՐԷ. —

ՆԻԻ-ԵՈՐԳ. —

ԲՐՈՎՈՏԷՆՍ. — (Մաս . , Ամերիկա)

ԻՍԹ ՈՒՈԹԸՐԹԱՌԻՆ. — (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ. — (Մաս . , Ամերիկա)

Պ . Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսուք)

Պ . Արիս Լազար

Տր . Կ . Փաշաեան (Դաւրէժ)

Պ . Աշոտ Սեդրակ

Պ . Պետրոս Ղուճրիկեան

Պ . Նազարէթ Թադէոսեան

Պ . Մանուկ Պ . Գալստեան

Պ . Երուանդ Յակոբեան